


13585

311

η-15



1 DEC 2007
25 SEP 2006

311
2-15

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Այ

Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն
Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Զ Ե Ռ Ն Ա Ր Կ

Յ Ե Ր Ե Կ Ա Ն
Ն Ե Մ Ե Մ Ե Ն Ե Ն

Ո Գ Ո Ս Տ Ո Ս

1929

18.06.2010

13585

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2283բ.
ՏԻՐԱԺ 500,

14273-57

Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Վիճակագրության այս համառոտ ձեռնարկն այն դասախոսությունների ընդլայնած կոնսպեկտն է, վոր կարգացել է կազմողը Յերևանում 1926—1929 թ. հաշվապահական, վիճակագրական դասընթացներում և Վ Ր Գ աստիճանի Աբովյանի անվան դպրոցում:

Այս աշխատանքը ինքնուրույն հեղինակություն չէ, այլ տալիս է վիճակագրական տեսություն հիմունքները վերջին շրջանի վիճակագրական հեղինակների լուսաբանությամբ:

Սա առաջին գրական վիճակագրական հրատարակությունն է հայերեն լեզվով. գալիս է մասամբ ծածկելու այն զգալի բացը, վոր ունի հայերեն վիճակագրական գրականությունը: Հայերեն լեզվով վիճակագրական ձեռնարկի պահանջը խոշոր և մեզանում, այդ պահանջն են դնում թե սովորողները, վորոնց խոշորագույն մասը չի տիրապետում ուսերեն լեզվին և, հետևապես, չի կարողանում ոգտվել ուսական գրականությունից, և թե իրենք դասատուները, վորոնք հնարավորություն չունեն սեփական ձեռնարկ ունենալ:

Այս աշխատանքը, վոր հրատարակվում է արտաքո կարգի շտապողականությամբ, վորպեսզի քննությունների ժամանակ պատրաստ լինի սովորողների համար, և վորպես կոնսպեկտից ընդարձակված գործ, ունի թերություններ. վորոշ մասեր չեն ընդարձակվել մտքերի զարգացման տեսակետից, կա անհավասարաչափություն գրուելների և նրանց դասավորման մեջ, թերություններից զուրկ չեն նաև տերմինները:

Մեծ գոհունակությամբ կընդունենք այն բոլոր դիտողությունները, վոր կանեն մեր ընթերցողներն այս աշխատանքի վերաբերյալ, հետևյալ հրատարակություն ավելի անթերի կատարելու համար:

Աշխատանքիս խմբագրութեան գործում աջակցել ե ընկ. Պ. Ղարախանյանը, վորը թարգմանել ե նաև V-րդ գլուխը «Վիճակագրական տվյալների գծագրական ձևակերպումը» Դ. Սափինսկուց*։ Այս գլուխը բնագրից տարբերվում ե նրանով, վոր կատարված ե վորոշ կրճատում և որինակները բերված են մեր կյանքից։

Աջակցել են մեզ իրենց դիտողութուններով նաև ընկ. ընկ. Աշխեն Գոչարյանը և Ա. Նազարեթյանը։

Կ Ա Ջ Մ Ո Ղ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՏԻՊԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ (ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ) ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Բոլոր այն յերևույթները, վորոնք շրջապատում են մարդուն, իրենց կայունութեան տեսակետից, կարելի յե բաժանել յերկու խմբի։

Կան յերևույթներ, վորոնք ամեն դեպքում, անկախ ժամանակից և տեղից, կայուն են, բաղկացած միևնույն ելեմենտներից, բնորոշվում են միևնույն հատկանիշներով, գտնվում են վորոշ և վաղորոք հայտնի կապակցութեան մեջ։ Նրանց մեջ կատարվող փոփոխութուններն այնքան են դանդաղ կամ չնչին, վոր բոլորովին անզգալի են մեզ համար։ Այդ խումբը կազմող յերևույթները կոչվում են կայուն կամ սիպիկական յերեվույթներ։

Մյուս խումբը կազմում են վոչ կայուն յերևույթները, վորոնք ամեն անգամ մեզ յերևում են տարբեր վիճակում, փոփոխված դրութեամբ։ Այդ յերևույթները կոչվում են փոփոխական կամ անհասական (ինդիվիդուալ)։

Այդ յերկու տեսակ (կայուն և անկայուն) յերևույթների մեջ հաստատ սահմաններ չկան. տալ նրանց այս կամ այն հատկութունը կախված ե մեր մտեցումից։

Առաջին խմբի համար որինակ կարող են ծառայել տարութունից մարմինների լայնանալը, ջրի ստացումը, յերբ միացնում են ջրածնի յերկու մասը թրթ-

* „Краткий курс элементарной статистики“ Д. Савинский. издание 1923 г.

վածնի մի մասի հետ. յեթե ձեռքից բաց թողնենք քարի մի կտոր, կընկնի գետին և վոչ թե կթուչի յերկինք կամ այլ կողմ. յերկաթի կտորը, ջուրը գցելիս, չի մնա ջրի յերեսին, այլ կիջնի ջրի հատակը: Բոլոր այս յերևույթները մեզ համար կայուն, հաստատուն են և նրանց մասին մենք խոսում ենք հաստատ կերպով:

Յերկրորդ խմբի համար որինակ կարող ե ծառայել մեր քաղաքում ցերեկվա ժամը 12-ին հրդեհի դեպք լինելու հնարավորութունը. հրդեհ կարող ե լինեք և չլիել: Կարող ենք արդյոք դրական կերպով ասել, թե հարևանի հղի կինը տղա յե ծնելու և վոչ աղջիկ պարզ ե վոր չի կարելի: Յերեսիան կարող ե լինել արակա՛ն կամ իգական սեռի: Հրդեհի, իգական կամ արական սեռի ծնունդի դեպքերը փոփոխական կամ վոչ կայուն (ինդիվիդուալ) յերևույթներ են: Ծիշտ այդպես ել նման յերևույթների որինակ հանդիսանում են առևտրական շրջանառութունները, արդյունաբերության արտադրանքը, գյուղական անտեսութունների թիվը և այլն, վորոնք այսոր մի մեծությամբ են հանդես գալիս, վաղն այլ, մի տարի հետո ուրիշ և այլն:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅՅՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԶՍԿՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ

Անհատական յերևույթների առանձնահատկութունը նրանց արտաքին ձևի փոփոխության մեջ ե, վորով այդ յերևույթները յերևան են գալիս: Փոփոխությունները պայմանավորվում են նրանց պատճառների բազմաթիվ ու բարդ բնույթով: Յերևույթների գլխավոր, հայտնի և կայուն պատճառների շարքում գործում են յերկրորդական, անհայտ և վոչ կայուն պատճառներ: Յերկրորդական պատճառներից հաճախ մի քանիսը նպաստում են յերևույթի առաջ գալուն, մյուսները խանգարում են ու հատուկ կերպով հակազդում յերևույթի առաջ գալու

վրա: Այդ տեսակ փոխազդեցության հետևանքն այն ե լինում, վոր յերևույթներն առաջ են գալիս զանազան կոմբինացիաներով, վոչ այն ժամանակ, յերբ մենք նրանց սպասում ենք, կամ հայտնվում են վոչ այն ձևով, ինչ ձեվով մենք նրանց յենթադրում ենք. դրանով ել մեզ համար նման բոլոր յերևույթները դաճում են վոչ կայուն, այսինքն փոփոխական (ինդիվիդուալ): Կայուն յերևույթների մեջ գերագոյում են կայուն պատճառները. նրանց մեջ կամ բացակայում են կամ թույլ ազդեցություն ունեն վոչ կայուն պատճառները: Իսկ անկայուն յերևույթների մեջ գերակշռում են պատահական (վոչ կայուն) պատճառները և ազդում են կայուն պատճառների վրա, թուլացնելով նրանց դերը կամ ազդեցությունը յերևույթների վրա:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵՅՈՒՎՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՅԵՐԵՎՈՒՅՅՆԵՐԸ

Վիճակագրական ուսումնասիրության առարկան կազմում են միայն ինդիվիդուալ յերևույթները, բայց վորոնք մասսայական բնույթ են կրում: Այդ յերևույթները վերաբերում են գերազանցապես հասարակական կյանքի բնագավառին: Ընդհակառակը բնության մեջ յեղած յերևույթներն առավելապես տիպիկական բնույթ են կրում, հանդիսանալով ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ուսումնասիրության առարկա և այլն: Վիճակագրական մեթոդով ուսումնասիրվող յերևույթները ճիշտ սահմանագիծ չունեն, նրանց բնագավառը քանի գնում, այնքան ընդարձակվում ե. մի շարք յերևույթներ, մինչև իսկ վոչ հասարակական կյանքից, այլ այնպիսիք, ինչպես են ֆիզիկայի, ոգերևութաբանության, աստղաբաշխության և այլ յերևույթներ, մտնում են վիճակագրական

ուսումնասիրութեան սահմանները: Միայն այդ յերևույթ-
ներից պահանջվում է, վոր նրանք ևս լինեն անհատա-
կան, դրա հետ միասին մասսայական բնույթ կրող:

ԱՄՓՈՓԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Ինչպես վերևում ասացինք, փոփոխական յերևույթ-
ների պատճառների մեջ վոչ կայուն պատճառների հետ
միասին գործում են նաև կայուն պատճառներ: Կայուն
պատճառները փոփոխական յերևույթների մեջ առաջ են
բերում նաև ընդհանուր կայուն գծեր, այդ գծերը կամ
հատկանիշները, վորոնք հատուկ են յերևույթների վո-
րոջ հայտնի մասսային, կոչվում են ընդհանուր կամ ամ-
փոփական հատկանիշներ:

Ազգաբնակչության նկատմամբ ամփոփական հատկա-
նիշներ են սեռը, տարիքը, գրագիտութունն և այլն,
վորոնցով կարելի յե միացնել կամ խմբավորել ազգա-
բնակչությունն առանձին խմբերի, իսկ անհատական
հատկանիշ կարող է ծառայել այն բոլորն, ինչը զանա-
զանում է մի մարդուն մյուսից:

Վիճակագրությունը, փոփոխական (բայց մասսայա-
կան բնույթ կրող) յերևույթներն ուսումնասիրելով, գործ-
ունի նրանց միայն այդ ընդհանուր ամփոփական հատկա-
նիշների հետ, վորոնցով տվյալ յերևույթների մի մաս-
սան տարբերվում է մյուս մասսայից:

Ամփոփական հատկանիշները կարող են լինել.

1. Վորակական, ինչպես են սեռը, գրագիտունքները,
կոոպերատիվների տեսակները և այլն. այդ դեպքում ամ-
փոփոցող մասսայի մի մասը կունենա տվյալ հատկանիշը,
իսկ մյուսը գուրկ կլինի դրանից:

2. Քանակական, ինչպես են ազգաբնակչության տա-
րիքը, կոոպերատիվների շրջանառությունը, տնտեսու-
թյունների, ցանքի կամ բանող անասունների քանակը և

այլն. այս դեպքում ամփոփվող մասի մեջ մտնող յերե-
վույթներից բոլորն ել կունենան տվյալ հատկանիշը, բայց
նրանցից ամեն մեկը կտարբերվի մյուսից քանակով:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփական հատկանիշների ոգնութեամբ վիճակա-
գրությունը խմբավորում և սիստեմի յե յենթարկում յե-
րևույթների ամբողջ մասսաներն և ձևակերպում է վի-
ճակագրական առանձին հավաքականութուններ, վորոնք
տարբեր են բնական հավաքականութուններից. որի-
նակ, Յերևան քաղաքի գրագետների թիվը, Հայաստանի
դպրոցական տարիքի յերեխաների թիվը. այդպիսի խմբ-
բանությունը բնականում չկա. Յերևանում գրագետները
կամ Հայաստանում դպրոցական տարիքի յերեխաները
ցրված են ամբողջ ազգաբնակչության մյուս խմբերի մեջ:
Յերևան քաղաքի ամբողջ ազգաբնակչության թիվը բնա-
կան հավաքականութուն է, իսկ Յերևանի գրագետների
կամ Հայաստանի դպրոցական տարիքի յերեխաների թիվը
վիճակագրական հավաքականութուն է, վոր ձևակերպվել
է ամփոփական հատկանիշների հիման վրա, ներկա դեպ-
քում գրագիտության կամ դպրոցական տարիքի յերեխա-
ների հատկանիշներով. կարճ ասած, ամփոփական հատ-
կանիշներով խմբավորված յերեվույթների կամ առար-
կաների քանակը կոչվում է վիճակագրական հավաքա-
կանություն:

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Յերևույթների մասին մեր իմացողությունն ունի
յերկու սահման. յեթե մի ծայրում տեղավորենք յերե-
վույթին բոլորովին անծանոթ լինելը (յերբ մարդ իրա-
զեկ չե յերևույթի մասին և դրա հետևանքով նա չի կա-

բող նախապես գուշակել յերևույթի առաջ գալը), իսկ հակադիր բեռնում տեղավորենք յերևույթին լրիվ ծանոթ լինելը (յերբ մարդ իրազեկ է յերևույթի մասին և նախապես կարող է գուշակել նրա առաջ գալը), ապա այս յերկու բեռնների մեջ կարող ենք դասավորել միջանկյալ այն մոմենտները, վորոնք բնութագրում են յերևույթի մասին տեղյակ լինելու վորոշ աստիճանները, այսինքն յերբ յերևույթի մասին մարդ միայն մասնակի տեղեկութուն ունի, նրա իրազեկ լինելը կարող է լինել շատ, բայց վոչ լրիվ, քիչ, ավելի լիչ և այլն, միչև կատարյալ անիրազեկության հասնելը:

Յեթե մեր վերաբերմունքը յերևույթի առաջ գալուն հատմամբ արտահայտենք «նավանական է» բառով, այն ժամանակ մեր միտքը պետք է ձևակերպենք այսպես. յերևույթի առաջ գալու շատ, բայց վոչ լրիվ կերպով, իրազեկ լինելու դեպքում «շատ հավանական է», պակաս իրազեկության դեպքում, մենք կասեյինք, թե յերևույթի առաջ գալը «հավանական է». յեթե հավանականութունն ավելի քիչ է, մենք գործ կածեյինք «քիչ հավանական է». ել ավելի պակաս իրազեկության դեպքում կասեյինք «հավանական չէ» և այլն:

Հավանականության տեսութունը (թեորիան) այդ բառերը վեր է ածում քանակական արտահայտության, «հավանական» բառը փոխարինում է թվերով. իրիվ հավանականութունը արտահայտվում է մեկ ամբողջով, իսկ պակասը կոտորակով. կոտորակն այնքան քիչ է լինում, վորքան մեզ համար թույլ է յերևույթի առաջ գալու հավանականութունը. որինակ, զերո աստիճանում սառուցի հալվելու հավանականութունը հավասար է մեկ ամբողջի, վորովհետև զրանում համոզված ենք հարյուր տոկոսով. Դրամի գրված յերեսի վրա ընկնելու հավանականութունը $= \frac{1}{2}$ -ի, վորովհետև մենք միայն կեսի շափով ենք զրանում համոզված: Վորոշ ժամին 29 ուսանողներից

ամեն մեկը կարող է ներկայանալ առաջինը. ամեն մեկի առաջին ներկայանալու հավանականութունը մեզ համար տվյալ դեպքում $= \frac{1}{29}$: Թղթախաղի կալոգից տասանոցներ հանելու, առանց տեսակը վորոշելու, հավանականութունը $= \frac{1}{52}$ կամ $\frac{1}{13}$: Յերևույթի առաջանալու հավանականութունն արտահայտվում է կոտորակով, վորի հայրտարարն է բոլոր հնարավոր դեպքերի ընդհանուր թիվը (52 խաղաթղթերից վորևե մեկը), իսկ համարիչը դեպքերի թիվը, վորոնք նպաստում են յերևույթների առաջ գալուն (4 թուղթ):

ՄԵԾ ԹՎԵՐԻ ՈՐԵՆՔԸ

Յերևույթների առաջ գալու հավանականության վերաբերյալ տեսականորեն (թեորետիկորեն) ուղիղ դատողութունը գործնական կյանքում արդարանում է միայն այն դեպքում, յերբ փորձը շատ անգամ է կատարվում: Ինչպես վերևում ասացինք, զրամը, զցելիս, կարող է ընկնել այս կամ այն կողմի վրա: Ամեն մի կողմի վրա ընկնելու հավանականութունը (շանսը) $= \frac{1}{2}$: Այդ հավանականությամբ, 10 անգամ զցելիս, նա պիտի 5 անգամ ընկներ մեկ կողմի և 5 անգամ մյուս կողմի վրա: Դա մեր յենթադրութունն է, հիմնված հավանականության վրա: Փաստորեն զրամը կարող է 10 անգամ զցելու դեպքում 8 անգամ ընկնել մեկ կողմի վրա, իսկ 2 անգամ մյուս կողմի վրա: Բայց փորձը ցույց է տվել, վոր վորքան շատ փորձ արվի կամ յերևույթը վորքան շատ կրկնվի, մեր յենթադրութունն այնքան քիչ տարբերութուն կունենա փորձի արդյունքից: Այլ խոսքով փորձի արդյունքը կմոտենա տեսական հավանականության (յենթադրությանը) այնքան ավելի, վորքան բավարար քանակով կատարվի փորձը:

Մի գիտնական փորձ է արել, զրամը զցել է 4040

անգամ. Ղուբա ե յեկել, վոր մի կողմի վրա ընկել ե 2048
անգամ, իսկ մյուս կողմի վրա 1992 անգամ, այսինքն
համարյա 50% ով ընկել ե յուրաքանչյուր յերեսի վրա,
բայց առանձին հարյուրակներով հաշվելիս խիտ տար-
բեր թվեր են ստացվել:

Մի ուրիշ գիտնական միևնույն փորձն արել ե միա-
նման գնդակներով, բայց տարբեր գույներով—սև և սպի-
տակ: Նա փակված արկղից, վորի անցքով միայն մի
ձեռք կարող եր մտնել, հանել ե և կրկին գցել գնդակ-
ները. 10 000 անգամ փորձը կատարելիս, համարյա կեսը
հանել ե սև և կեսը սպիտակ, իսկ առանձին հարյուրակ-
ներով հաշվելիս խոշոր տարբերությամբ թվեր ե ստա-
ցել, սկսած 30% ից, վորպես մինիմում, մինչև 63%
վորպես մաքսիմում ճերմակ գնդակների համար, 70% ից
մինչև 37% սևերի համար:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿՆ ՈՐԻՆՍՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

Այն պատճառները, վորոնցով փորձի (եմպերիկ) ար-
դյունքը մոտենում ե տեսականին, բացատրվում են հե-
տևյալով. անկայուն յերևույթներում, ինչպես վերևում
նկատեցինք, կայուն պատճառների թվում գործում են
սակ փոփոխական պատճառներ:

Իերած որինակներում կայուն պատճառների շար-
քում կարելի յե դասել դրամի վերաբերյալ՝ նրա այնպի-
սի կառուցվածքը, վորը միակերպ նպաստում ե նրա այս
դամ այն կողմի վրա ընկնելուն: Գնդակների վերաբեր-
ալ այն, վոր 2 գույնի գնդակները քանակով հավասար
են, նրանց ձևը, քաշը և այլն միատեսակ են:

Պատահական պատճառների շարքում կարելի յե դա-
ել դրամի նկատմամբ այն, թե քանի պտույտ կանի
ս, ինչ բարձրությունից ե գցած և այլն: Գնդակների

նկատմամբ՝ ամեն մի տվյալ դեպքում նրանց պատահա-
կան դրուժյունը արկղի մեջ, վոր կողմը թեքում կունենա
արկղում ձեռքը և այլն: Ինչքան մենք աշխատենք, յերբեք
չենք կարող այդ պատահական բնույթ կրող հանգամանք-
ներում միատեսակութուն պահպանել և յուրաքանչյուր
առանձին դեպքում այդ հանգամանքները յերևույթը կեր-
պարանափոխում են:

Մեծ քանակությամբ փորձեր կատարելիս, այդ վոչ
կայուն պատճառները մեկը մյուսին թուլացնում, չեղո-
քացնում են և կայուն պատճառներին գործելու ազա-
տություն են տալիս: Այդպիսով մեծ թվերի որենքը մեզ
սովորեցնում ե, վոր մասսայականորեն (մեծ քանակով)
վերցրած անհատական յերեվույթները հպատակվում են
վորո՛ւ որինաչափության, նրանց մեջ կա ևս վորո՛ւ կա-
յունություն և վոր պատահական յերևույթներ բնության
մեջ չկան:

Անկայուն յերևույթների մեջ գոյություն ունեցող
որինաչափությամբ ե բացատրվում վորո՛ւ կայունությունն
այնպիսի, արտաքին տեսքից պատահական, յերևույթներ/
մեջ, ինչպես որինակ առանց հասցեյի փոստ-արկղ նա
մակ գցելը, վորոնց թիվը Պետրոգրադում 1906—1910
թ. յեղել ե 25—27 ամեն մի միլիոն նամակից: Ինք
նասպանների թիվը 1892—1902 թ. Գերմանիայու
հավասար ե յեղել 24—27. ի ամեն մի 100.000 շնչից
կամ այն, վոր յեվրոպական յերկրներում ծնված յուրա
քանչյուր 100 աղջկան ընկնում ե 105—106 տղա:

Վիճակագրական որինաչափությունները ճիշտ ե
տվյալ ժամանակի և տվյալ տեղի համար, վորովհետ
նրանք կախված են սվյալ տեղի յեվ ժամանակ
սնեստական յեվ արտադրական պայմաններից: Յուրա
քանչյուր խոշոր դեպք ընդունակ ե այդ վիճակագրակա
կայունությունը շարժել այս կամ այն կողմը. արտա
րական և տնտեսական պայմանների զարգացումը ընդո

նակ է կրճատել մահվան կամ ինքնասպանության դեպքերի թիվը և բարձրացնել ծննդի կամ ամուսնությունից թիվը և այլն: Անբերրությունը, պատերազմները, համաճարակները և այլ նման ֆակտորներն ընդունակ են ուժեղ կերպով աղղել վիճակագրական նորմաների և կոյեֆիցիենտների (հարաբերությունների) վրա:

Վիճակագրությունը արձանագրում է յերևույթների մեջ գոյություն ունեցող հարաբերությունները, հնարավորությունն չունենալով բոլոր դեպքերի համար ցույց տալ նրանց պատճառները, վորոնց ուսումնասիրությունը կազմում է առանձին մասնագիտական խնդիր և հատուկ մասնագետների զբաղմունք, թեև պատճառների լուսարարում վորոշ չափով տալիս են նաև վիճակագրները վիճակագրական անալիզների միջոցով:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Վիճակագրությունն, ինչպես և մի շարք ուրիշ գիտելիքներ, դեռ չունի բոլորի կողմից ընդունված վորոշում: Գիտություն մեջ դեռ վիճում են, արդյոք վիճակագրությունը գիտություն է, թե մեթոդ է միայն, վորով ոգտվում են ուրիշ գիտությունները:

Այդ վորոշման վիճելի կողմը պայմանավորվում է նրանով, վոր վիճակագրությունը չունի խիստ կերպով սահմանված իր առարկան, նա հետաքրքրվում է բոլոր յերևույթներով, վորոնք կարող են վորոշ հասարակական բրթեք ներկայացնել, մյուս կողմից նրան ոգտադործում են մյուս գիտությունները:

Համեմատաբար մատչելի պետք է համարել հետևյալ վորոշումը, թե վիճակագրական մեթոդը մասսայայան դիսոլոբյան նախապարհով աննասական յերեւույթների ուսումնասիրության մեթոդն է, վորը ուսում-

նասիրության արդյունքը արտահայտում է քվերով կամ չափով, իսկ այն գիսոլոբյունը, վորը ծանոթացնում է այդ մեթոդի ոգտագործման հետ, կոչվում է վիճակագրություն*:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բավական է ասել, վոր վոշ մի լուրջ պետական կամ հասարակական բնույթ կրող ձեռնարկություն չի կարող սկսվել և կատարվել, յեթե նախապես հարցը վիճակագրական տվյալներով չի լուսաբանված: Կառուցվում է արդյոք յերկաթուղի, շինվում է արդյոք գործարան, կամ մտադրվում են կոոպերատիվ բաժանմունք բաց անել հարևան գյուղում, այդ բոլոր ձեռնարկությունների համար անհրաժեշտ է վիճակագրական ուսումնասիրություն կատարել: որինակ, անց կացվելիք յերկաթգծի համար ուսումնասիրում են այդ շրջանը, բնակչության թիվը, նրա արտադրության չափն ու տեսակները, ներմուծումն ու արտահանումն և այլն:

Վիճակագրության տվյալներով հարցը ուսումնասիրելուց հետո միայն կարելի յե վորոշել յերկաթգծի անցկացնել, թե հրաժարվել նրանից:

Ճիշտ այդպես էլ մեծ է վիճակագրության նշանակությունը գիտական տեսակետից: Մի շարք գիտություններ իրենց գյուտերով պարտապես են վիճակագրությանը: Ներկայումս համարյա չկա գիտություն, վոր չոգտվի վիճակագրական մեթոդից: Բացի դրանից անկայուն յերևույթների բնագավառում նա միակն է, վորը հայտնաբերում է նրանց մեջ գոյություն ունեցող կայուն հարաբերությունները:

* Г. И. Лурье, „Статистика для кооператора“. Издание Центросоюза. Москва, 1927 г.

Ն. Ա. Կարբուկովը և մոտ ժամանակներս վախճանված
Ա. Ա. Չուպրովը և Ռ. Մ. Որժենցկին:

Մինչհեղափոխական Ռուսաստանում վիճակագրու-
թյունը միասնական չէր, ինչպիսին է ժամանակակից
վիճակագրությունը: Նա բաժանվում էր պաշտոնական
և հասարակական վիճակագրությունների: Պաշտոնական
կամ, ինչպես կոչվում էր, «կազմունայա» ստատիստիկա-
յի գլուխ էին կանգնած կենտրոնում վիճակագրական
կենտրոնական կոմիտեն, իսկ տեղերում նահանգական
կոմիտեները. բացի դրանից առանձին նախաբարություն-
ներում տարվում էր գերատեսչական վիճակագրություն:
Հասարակական վիճակագրությունն էին կազմում «զե-
մսկիյ» և «քաղաքային» վիճակագրությունները:

Այդ տարբեր ճյուղերն ընդհանուր, բոլորին միաց-
նող ծրագիր և սիստեմ չունեին. դրա հետևանքն այն էր
լինում, վոր մի կողմից նրանց աշխատանքների մեջ նկատ-
վում էր պարալլելիզմ, իսկ մյուս կողմից հաճախակի
նրանց արդյունքները անհամեմատելի էին լինում:
Միայն պատերազմի տարիներին «քաղաքային» և «զեմ-
սովային» ինքնավարությունների կողմից միացման քայ-
լեր են արված, վորի շնորհիվ և կատարվեց 1916 թ.
գյուղատնտեսական վիճակագրությունը:

Յեթե մինչհեղափոխական շրջանում այդպիսի ղի-
բության մեջ էր գտնվում վիճակագրությունը բուն Ռու-
սաստանում, ապա ավելի անբարենպաստ պայմաններում
էր գտնվում նա Անդրկովկասում: Ինչպես հայտնի յե,
Անդրկովկասում միայն Վրաստանում էր մտցրված զե-
մսովոն և այն էլ շատ կարճ ժամանակով, իսկ քաղաքա-
յին ինքնավարություններ ունեյին Անդրկովկասի միայն
ախենախեժ քաղաքները:

Չեմսովոյի բացակայությունը գավառներում և
ինքնավարությունների ցանցի թույլ զարգացումը քա-
ղաքներում պետք է վոր խորապես ազդեյին վիճակա-

գրական կազմակերպությունների զարգացման վրա: Յեթե
Անդրկովկասի քաղաքներից Թիֆլիսն ու Բագուն, վորպես
ամենաուժեղ վարչական և առևտրա-արդյունաբերական
կենտրոններ, ունենալով քաղաքային հարուստ բյուջեյով
ինքնավարություններ, կարող էին ունենալ նաև վիճա-
կագրական ուժեղ ապարատ, ապա այդպիսի «շոայու-
թյուն» չէին կարող իրենց թույլ տալ Անդրկովկասի
մյուս քաղաքները և նրանց թվում ՀՍՈՂ Հայաստանի
մեջ մտած քաղաքները: Անդրկովկասի բոլոր քաղաքնե-
րում, բացի Թիֆլիսից և Բագվից, վիճակագրական գործը
կենտրոնացած էր միայն նահանգական վարչության կից
վիճակագրական կոմիտեներում:

Բացի կազմունայա վիճակագրությունից Անդրկով-
կասում տարվում էր նաև հասարակական վիճակագրու-
թյուն բավականին լայն չափերով Բագվի և Թիֆլիսի
քաղաքային ինքնավարություններում, իսկ հատուկ ծրա-
գրով առանձին ընկերություններում (Կովկասյան աշ-
խարհագրակ. ընկերութ., Կովկ. ազգագրակ. ընկերութ.,
Կովկ. գյուղատնտեսակ. ընկերութ., Կովկ. տնայնագոր-
ծական ընկ., նավթային արդյունաբերողների և մաք-
րանեց արդյունաբերողների խորհուրդներում և ուրիշ
նման զանազան կազմակերպություններում):

Հայաստանում վիճակագրական աշխատանքներ կա-
տարվել են Յերևանում նահանգական վարչության կից
վիճակագրական կոմիտեյում—«կազմունայա» վիճակա-
գրություն, և քաղաքային վարչության մեջ—քաղաքային
վիճակագրություն, իսկ Լենինականում—միայն քաղա-
քային վիճակագրություն:

Թույլ բյուջե ունենալու հետևանքով նրանք այդ
գործը զարգացնել չէին կարող. միջանկյալ հավաքում
էին շուկայի գները, տեղեկություններ ուղյերևույթա-
բանական կայաններից, պատրաստում էին զինվորակո-
չության յենթակա քաղաքացիների ցուցակը և այլն:

առանձին հիմնարկներում. նրա աշխատանքների ծրագրի-
բը ընդհանուր վիճակագրության հետ համաձայնեցնում
է կենսավիճվարին կից Ստատստիկանը, վորը կազմակերպված
է ՀՍԽՀ Տնտիսբյուրի 1929 թվի ապրիլի 15 ի վորոշմամբ:
Պետական ընդհանուր վիճակագրության գլուխն է
կանգնած՝ կենտրոնում— կենտրոնական վիճակագրական
վարչությունը (վորը Խորհրդային Հայաստանում հաս-
տատված է 1921 թվի հոկտեմբերի 5-ի դեկրետով) իբ-
կառավարչով, ոժտված ժողկոմիսարի լրիվ իրավունքնե-
րով, և կոլլեգիայով, իսկ տեղերում կազմակերպված են
ըջանային վիճակագր. բաժիններ իրենց վարիչներով:
Գավառակային վիճակագրներով և կամավոր թղթակից-
ներով առանձին գյուղերում: Այդ մարմինների իրա-
վունքներն ու պարտականությունները վորոշված են հա-
տուկ կանոնադրություններով:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Յերևույթների վիճակագրական ուսումնասիրությունն
ուսնի մի շարք հետևողական աստիճաններ, վորոնք սերտ
կերպով կապված են միմյանց հետ և կազմում են մեկը
մյուսի շարունակությունը: Հիմնական աստիճանները
յերեք են:

Առաջինը—նյութերի հավաքումը. որինակ, ազգա-
բնակչության ցուցակագրությունը, հատուկ հետազոտու-
թյուններ, զների հավաքումը, ուրիշ աղբյուրից նյութեր
վերցնելը, ինչպես, որինակ, հաշվապահական գրքերից, և
այլն:

Յերկրորդ աստիճանը—հավաքած նյութերի ստու-
գումն և ամփոփումն ըստ ըջանների, ժամկետների և
առանձին հատկանիշների: Ստացած բացարձակ տվյալնե-
րը տեղավորում են հատուկ աղյուսակներում:

Յերրորդ աստիճանը—հաշվային մշակումն է. դա

այն է, վոր աղյուսակների բացարձակ տվյալներից հանում
են նոր մեծություններ—միջին և հարաբերական թվեր:
Դրանով ոգտվողներին հնարավորություն են տալիս միա-
ժամանակ բացարձակ թվերի կողքին աղյուսակներում
պատրաստի ունենալ նաև միջին և հարաբերական թվեր:

Այդ աշխատանքների հետ հաճախ միացնում են նաև
ստացած թվերի գիտական մշակումը, այսինքն նրանց
քննադատությունը և անալիզը, վորպեսզի հայտնաբերեն
այն կայուն հարաբերությունները, վորոնք գոյություն
ունեն այդ ուսումնասիրված փոփոխական յերևույթների
մեջ: Նյութերի գիտական մշակումը լուրջ և պատասխա-
նատու աշխատանք է և աշխատակցից պահանջում է մեծ
պատրաստականություն և հմտություն թե վիճակագրա-
կան և թե ընդհանուր զարգացողության տեսակետից:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

Վիճակագրութիւնը յերևույթների մասսայական սիստեմատիկ դիտողութիւնն է: Հենց այն հանգամանքը, վոր ուսումնասիրվող յերևույթները վերցնում են մասսաներով և աշխատանքները կատարում են միաժամանակ, պահանջում է շատերի մասնակցութիւնը այդ աշխատանքներին: Անհատը չի կարող կատարել վիճակագրական ուսումնասիրութիւն, ինչպիսին նա կատարում է բընագիտութեան, ֆիզիկայի և նման գիտական մյուս ապարիզներում:

Անատոմը կամ քիմիկոսը մենակ կարող է իր առանձնասենյակում, հակառակ դեպքում, մեկ կամ յերկու ոգնականի աջակցութեամբ, կարևոր գիտական դիտողութիւններ կատարել և գիտական խոշոր արժեք ունեցող արդյունքներ ստանալ: Վիճակագրական դիտողութիւնները կատարվում են միշտ կոլլեկտիվ ուժերով, տասնյակների, հարյուրների և նույնիսկ հազարների հասնող աշխատակիցների մասնակցութեամբ: Վիճակագրական հետազոտութեան սուբյեկտների (վիճակագրների) կոլլեկտիվ բնույթի հետ է կապված նրանց հրահանգելը և պատրաստելը, վոր նրանք կարողանան ծրագրել միա-

Պերպ հասկանալ և միատեսակ մոտեցում ունենալ ուսումնասիրվող յերևույթներին. դա դժվար խնդիրներից մեկն է և պահանջում է մեծ ծախսեր, ուստի վիճակագրական ուսումնասիրութիւնները կատարվում են պետութեան կամ հասարակական կազմակերպութիւնների կողմից և նրանց հաշվին: Այստեղից բխում է հետևյալը. վորքան ուսումնասիրութեան յենթակա որբեկտների թիվը շատ է լինում, իսկ ժամկետը կարճ, այնքան ավելի ուսումնասիրողների (վիճակագրների) թիվ է պահանջում և ընդհակառակը:

Վիճակագրական դիտողութեան սուբյեկտը կարող է լինել նախ ինքն ուսումնասիրվողը: Այդ այն դեպքն է, յերբ ուսումնասիրվողը չի հանդիպում ուսումնասիրողին (վիճակագրին), ինքն ուսումնասիրվողը լցնում է իրեն սոված թերթիկը առանց վիճակագրի ոգնութեան: Ահա այդ ձևը կոչվում է ինֆնադիստոյութիւն: Հակառակ դեպքը, յերբ վիճակագիրը, հարցերի պատասխանը ստանալով ուսումնասիրվողից, անձամբ է լցնում ուսումնասիրվողի թերթիկը, կոչվում է դիստոյութիւն ուրիշի վաջոցով: Խառը ձևվր կլինի այն դեպքը, յերբ վիճակագիրը, թողնելով թերթիկը ուսումնասիրվողին լցնելու, հետո ինքն անցնում է նրա մոտ, անձամբ ստուգում ուսումնասիրվողի կողմից լցրած թերթիկը և վերցնում իր հետ:

Առաջին ձևը, պարզ է, լայն կերպով կարող է կիրառվել այնտեղ, վորտեղ ազգաբնակչութեան կուլտուրան բարձր է: Ազգաբնակչութեան կուլտուրական ցածր մակարդակի պատճառով լայն տարածված ձևը յերկրորդն է: Դա միակ ձևն է հանդիսանում բարդ ծրագրով ուսումնասիրութիւններ կատարելու ժամանակ:

Այդ սիստեմների առավելութիւնների և պակասութիւնների վրա մանրամասնորեն կանգ կառնենք տեղեկութիւններ հավաքելու ձևերի մասին խոսելիս:

Վիճակագրական դիտողութեան որչեկցներ կարող են հանդիսանալ այն բոլոր անկայուն, ինդիվիդուալ յերեւոյթները, վորոնք կարող են ըստ վորոշ ամփոփական հատկանիշների կազմել վիճակագրական հավաքականութիւններ:

Վիճակագրական դիտողութեան միավոր են հանդիսանում այն առանձին միավորները, վորոնցից բաղկացած է դիտողութեան մասսան կամ վիճակագրական հավաքականութիւնը: Դիտողութեան միավորը վորոշ դեպքերում կոչվում է նաև հաւելի միավոր: Ինչն ընտրել դիտողութեան միավոր, դա մեծ մասամբ կախված է ուսումնասիրութեան նպատակներից և վիճակագրական աշխատանքների բնույթից: դա դժուարին հարցերից մեկն է, վորի մասին կանգ կառնվի իր տեղում: Ժողովրդագրական վիճակագրութեան մեջ ամեն մի մարդ հաշվի միավոր է. գյուղատնտեսական վիճակագրութեան մեջ—ամեն մի գյուղական տնտեսութիւնը, ամեն մի կոլ. տնտեսութիւն, խորհրդային տնտեսութիւն և այլն: Յեթե հետազոտութեան նպատակն է սընունդի հետազոտութիւնը, դիտողութեան միավոր կլինի ընտանիքը: Արդյունաբերական վիճակագրութեան մեջ այդպիսին պիտի լինի ամեն մի արդյունաբերական ձեռնարկութիւն: Աշխատանքի պայմանները ուսումնասիրելիս ամեն մի բանվոր և այլն:

Դիտողութեան միավորն ընդունելուց հետո պետք է պարզել ցուցակագրման (ռեգիստրացիայի) յենթակա միավորների հասկանիւթները, վորոնք ունեն նույն բովանդակութիւնը, ինչ ամփոփական հատկանիշը: Միավորի վոր հատկանիշը պետք է ցուցակագրել, նույնպես կախված է ուսումնասիրութեան նպատակից ծրագրում վաղորդ պիտի նախատեսնված լինի այդ ամենը: Չի կարե-

լի վիճակագրութեան ուսումնասիրութեան առարկա դարձնել այնպիսի հատկանիշներ, վորոնք անխտիր ամբողջ մասսային են պատկանում. որինակ՝ չի կարելի ձիու նըկատմամբ հարց դնել, ձին քանի վտաք ունի, քանի վոր այդ հատկանիշը ընդհանուր է բոլոր ձիւերին և ակընհայտ: Մյուս կողմից ուսումնասիրվող հատկանիշները նրանք են, վորոնք, ինչպես ամփոփական հատկանիշների մասին ասացինք, յեթե ընդհանուր են, ապա տարբերվում են մեկը մյուսից քանակով, որինակ, բոլոր կոտպերատիվները ունեն շրջանառութիւն, բայց մեկը մյուսից տարբերվում է շրջանառութեան քանակով և ծավալով: Յեթե հատկանիշներն ընդհանուր չեն, ապա նրանք պատկանում են այդ մասսայի մի վորոշ մասին, ինչպես, որինակ, ազգաբնակչութեան մի մասը անդրադետ է, բայց մյուս մասը պրագետ:

Վորոշ դեպքերում վիճակագրական միավորը հանդիսանում է վորպես հատկանիշ և ընդհակառակը, նույն հատկանիշը կարող է դառնալ դիտողութեան միավոր, որինակ, արդյունաբերական ուսումնասիրութեան ժամանակ դիտողութեան միավորն արդյունաբերական ձեռնարկութիւնն է, բայց այդ միավորը կդառնա հատկանիշ յեթե մենք նույն ձեռնարկութեան մեջ ուսումնասիրենք բանվորական ուժը:

Կան յերևույթներ, վորոնք բառերով են արտահայտվում, որինակ, բերքի դրութիւնը, շուկայի տրամադրութիւնը և այլն. այդպիսի յերևույթների նկատմամբ բառերը թվերի յեն վերածում և դրանով վիճակագրութիւնը հասնում է նույն նպատակին. նա ընդունում է՝ ամենաբարձր դրութիւնը՝ լավը=5, միջակից բարձրը=4, միջակը=3, միջակից ցածրը=2, վատը=1:

Հատկանիշները հաջող ընտրելու համար, պետք է լավ ծանոթ լինել առարկային, վորպեսզի կարելի լինի հաջող ընտրել այն կարևոր հատկանիշները, վորոնք խըն-

դիրը լուծելու համար արժեք ունեն: Ինչպիսի մեծ աշխատանք է պահանջում այդ ընտրությունը, կտեսնենք ծրագիր և հարցաթերթիկներ կազմելու աշխատանքներին ծանոթանալիս:

Հեռագրումների հետ կապված են հետևյալ տեսակի ժամկետները. առաջին, արվա վոր ժամանակին պիտի կատարել հետազոտումները. ժամանակի ընտրությունը կապված է ուսումնասիրվող յերևույթների բնույթից. մարդահամարի համար հարմար է ձմեռը, յերբ մարդիկ համեմատաբար քիչ են շարժվում: Գյուղատնտեսության բերքը, արդյունաբերության արտադրությունը, առևտրական շրջանառությունն և այլ նման խնդիրներն ուսումնասիրելու համար պիտի ընդունել աշնան վերջերը, յեւ բոլոր գյուղացու բերքը կամ արդյունաբերական և առևտրական ձեռնարկության հաշվետվությունը պարզված է և հնարավորություն կա տեղեկություն տալ:

Յերկրորդ տեսակի ժամկետը պահանջում է, վոր ծրագրում վաղորդ նշված լինի, թե ինչ ժամանակամիջոցին են վերաբերում ուսումնասիրության հարցերը. որինակ, կարելի յե ուսումնասիրությունը կատարել 1928—29 թվին, բայց ուսումնասիրության նյութերը վերաբերվեն 1927—28 թվին, այսպես են բյուջետային հետազոտությունները: Ստացված տեղեկությունները մեծ թերություններ կարող են ունենալ, յեթե պարզ դրված չը լինի, թե ինչ ժամկետի համար են պահանջվում տեղեկությունները:

Յերրորդ տեսակի ժամկետը— ինչ ժամանակամիջոցում պիտի կատարել ուսումնասիրությունը. պարզ շեշտված պիտի լինեն աշխատանքների սկիզբն ու վերջը: Հակառակ դեպքում զանազան տեղերում, զանազան ժամկետներին կսկսեն և կվերջացնեն աշխատանքները, վորի հետևանքով կստացվեն զանազան վորակի նյութեր, կը փախտվի միատեսակություն պահպանելու պահանջը և

բացի դրանից ավելորդ ծախսեր կպահանջվեն աշխատանքները ղեկավարելու համար:

Ուսումնասիրվող մասսայի սահմանափակումն ըստ տարածության ևս կարևոր տեղ է բռնում վիճակագրական աշխատանքների մեջ և պայմանավորված է գործնական նպատակներով: Վիճակագրական խոշոր հետազոտությունները կատարվում են պետության հաշվին, պետական և վարչական կարիքների համար, ուստի և դիտողության յենթակա յերևույթները պետք է ուսումնասիրվեն ըստ վարչական սահմանների: Այդպիսի սահմանավորումը կարևոր է նաև կազմակերպչական նկատառումներով, վոր պետքի կարելի լինի հաջող բաժանել վիճակագրների միջև շրջանները, բաց շրջաններ չմնան, կամ մեկ շրջան կրկնակի չցուցակագրվի:

ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԾԱՎԱԼԻ

Դիտողությունը կամ վիճակագրությունը ըստ ծավալի, այսինքն հետազոտվող օբյեկտների քանակի, լինում է յերկու տեսակ—համապարփակ յեւ մասնակի:

Համապարփակ վիճակագրություն կոչվում է այն ցուցակագրությունը, վորը գործ ունի ուսումնասիրվող մասսայի բոլոր միավորների հետ: Նրա նպատակն է տալ ուսումնասիրվող մասսայի լրիվ քանակական պատկերը: Այդ նպատակին է հասցնում նրա սկզբունքը—վոչ մի միավոր բաց չթողնել. մյուս կողմից, վոչ մի միավոր յերկու անգամ չցուցակագրել (վորպեսզի կրկնակի հաշվառում չլինի): Համապարփակ ձևին պարտավոր ենք դիմել բոլոր այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է յերևույթների լրիվ ցուցակագրումը քանակի տեսակետից:

Մասնակի դիտողություն կոչվում է այն ցուցակագրությունը, վորը գործ ունի ուսումնասիրվող մասսայի միավորների մի վորոշ մասի հետ: Նրա նպատակն է յե-

ընդամենը ուսումնասիրված մի մասի արդյունքները ցատկաբար յեղբակացու թյունները տարածել ամբողջ մասայի վրա. դա կոչվում է եփսրսպոլլյացիա: Այդ նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է, վոր ընտրված մասը հաջող ներկայացուցիչ (ռեպրեզենտատիվ) լինի ամբողջ մասայի համար միատարրության և քանակի բավարար լինելու տեսակետից: Անկասկած, մասնակի հետազոտությունը ինչքան էլ հաջող լինի կազմակերպված, նա չի կարող լրիվ փոխարինել համապարփակ ցուցակագրությանը, վորը հանդիսանում է վորպես մաքուր վիճակագրական մեթոդ: Այնուամենայնիվ մասնակին տալիս է իրականությանը բավականին մոտ պատկեր և լայն չափով տարածված է վորոշ խնդիրների ուսումնասիրության սուպարիզում:

Մասնակի դիտողությունը գործադրվում է այն պայմաններում, յերբ հնարավոր չի այս կամ այն պատճառով համապարփակ դիտողություն կազմակերպել: Մասնակի դիտողությունը, չտալով լրիվ բացարձակ թվեր, տալիս է բավական ճիշտ հարաբերական և միջին թվեր՝ ընտանիքի կազմը—քանի անդամից է նա բաղկացած, կամ սննդի չափը—մի մարդն ինչքան հացեղեն, մսեղեն և այլ մթերքներ է գործածում, զների զինամիկան և այլն և այլն:

Մասնակի դիտողության տեսակներն են (որյեկտիվների քանակի տեսակետից)՝ ընտրովի հետազոտությունները, մոնոգրաֆիկ նկարագրությունները և անկետային հետազոտությունները:

Առաջինի որյեկտները քանակով շատ են և շնորհիվ իր մասսայական բնույթին, նա մոտենում է համապարփակ հետազոտությանը, այդ պատճառով նա կոչվում է մասսայական:

Յերկրորդը, ընդհակառակը, գործ ունի ամենասամանափակ քանակով որյեկտների հետ:

Դրանց մեջտեղումն է գտնվում անկետային տեսակի վիճակագրությունը:

Նրանք տարբեր են նաև իրենց ծրագրի ծավալով, առաջին տեղն է բռնում մոնոգրաֆիկը, իսկ վերջին տեղը՝ անկետայինը:

Ընտրովի վիճակագրության ժամանակ որյեկտների ռեպրեզենտատիվ բնույթը ապահովելու համար, անհրաժեշտ է, վոր ընտրությունն այնպես կատարեն, վորպես զի ընտրած մասը լավ ներկայացնի ամբողջին (տիպիկ լինի վերջինիս համար): Դրա համար պահանջվում է, վոր առանձին միավորների ընտրությունը ընտրողի անձնական ազդեցությունից (սուբյեկտիվիզմից) ազատ լինի: Այդ նպատակին հասնելու համար ընտրելու գործողության մեջ մեխանիկական սկզբունք են մտցնում. միավորներին (ներկայացուցիչներին) ընտրում են կամ վիճակով կամ ցուցակով: Յենթադրվում է, թե մեխանիկական սկզբունքով ընտրված միավորները համաձայն մեծ թվերի որենքի, կհայտնաբերեն այն կայուն և ընդհանուր գծերը, վորոնք գոյություն ունեն ուսումնասիրվող յերևույթների մեջ: Յեթե ուսումնասիրությունը կատարվում է այնպիսի մասսաների նկատմամբ, վորոնք վորոշ շերտերից են բաղկացած և կարիք է զգացվում դասավորել միատեսակ խմբակների, ընտրությունը կատարվում է սիպիկոլոյալը և պահանջում է նախորդ միավորները դասավորել ըստ վորոշ խմբակների, որինակ, ունևորների, միջակների և չքավորների, ապա միավորներին ընտրել այդ խմբակներից մեխանիկորեն, ինչպես բյուջեյի ուսումնասիրության ժամանակ է կատարվում այդ: Պարզ է, վոր այդ դեպքում անհրաժեշտ է նախ ունենալ համապարփակ ցուցակագրության տրվյալները, վորոնց հիման վրա կարելի լինի միավորներին զասավորել ըստ խմբակների և ըստ այնմ կարելի լինի

ասել, վոր խմբակից քանի տնտեսութիւնն ե հարկավոր
ուսումնասիրել:

Մոնոգրաֆիկ նկարագրութիւնը, ինչպես ասացինք,
ավելի քիչ մասսա յե վերցնում, բավարարվելով շատ քիչ
միավորներով. ընտրութիւնը տիպիկութիւնով ե տանում,
ուրեմն այստեղ սուբյեկտիվիզմին ավելի մեծ տեղ ե
տրվում. նրա միջոցով ուսումնասիրում են գյուղացու
և բանվորի բյուջեն և այլն:

Անկեսային ձևը այն ե, վոր հարցաթերթին ու-
ղարկվում ե ուսումնասիրվողին լցնելու համար: Այս ձե-
վի հետազոտութիւնը համարում են մասնակի, վորովհե-
տե բլանկները, յեթե նույնիսկ բոլոր որչեկտներին ու-
ղարկված լինեն, այնուամենայնիվ լրիվ քանակով հետ
ստանալ չի լինում. նրանց մի մասը կորչում ե ճանա-
պարհին, մի մասը մնում ե որչեկտների մոտ կամ վեր-
ջիններից ժամանակին չի ստացվում:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ

Ինչպես մյուս աշխատանքների, նույնպես և վիճա-
կագրական դիտողութիւն ժամանակ, անհրաժեշտ ե, մին-
չև հետազոտման աշխատանքին անցնելը, նախորդ կազ-
մել աշխատանքների համար վորոշ կազմակերպչական
նախագիծ, վորտեղ նախատեսնված լինեն հետազոտու-
թիւն բոլոր կազմակերպչական մանրամասնութիւնները—
ուսումնասիրութիւն որչեկտը (դիտողութիւն մասսան և
միավորը), սուբյեկտը (վիճակագիրների կազմը և քա-
նակը), հետազոտութիւն ժամանակը, տեղը, տեղու-
թիւնը, ձևը, ծրագիրը, հրահանգումը, նյութերի ընդու-
նելութիւնը, նախահաշիվը և այլն: Նախագծի կազմելն
անհրաժեշտ ե բոլոր քիչ թե շատ խոշոր հետազոտու-
թիւնների համար: Այդ նախագծում գլխավոր տեղերից
մեկը պատկանում ե ծրագրի կազմելուն: Ծրագրի բո-

վանդակութիւնը կազմում են միավորի այն բոլոր հատ-
կանիչները, վորոնք յենթակա յեն ուսումնասիրութիւն:
Ծրագիրը, նրա կազմելու դժվարութիւն հետևանքով, ամ-
բողջ կազմակերպչական նախագծի հետ միասին հատուկ
խորհրդակցութիւնների, հույնիսկ համագումարների
նյութ ե դառնում, վորոնց հանձնաժողովները մասնագետ-
ների և փորձված վիճակագրների մասնակցութիւնով քըն-
նադատում են ծրագրի բովանդակութիւնը:

Ծրագիրը կազմելիս պահանջվում ե, վոր հարցերից
դրվեն՝

1. միայն անհրաժեշտները,

2. այնպիսիները, վորոնց պատասխանը կարելի յե
ստանալ և

3. հարցերն այնպես պարզ լինեն խմբագրված, վոր
բոլորի կողմից միատեսակ հասկացվեն, իսկ հնարավորու-
թիւն դեպքում այդ հարցերի պատասխանները մեկը
մյուսին ստուգեն:

Ծրագրի արտաքին ձևավորումն ե հարցաթերթ:
Այստեղ ուսումնասիրութիւն յենթակա միավորի հատկա-
նիչները հարցերի յեն վերածվում, վորոնց դիմաց գրվե-
լու են պատասխանները: Հարցաթերթն այնպես են
կազմում, վոր պատասխանողը հնարավորութիւն ունենա
կարճ պատասխանելու: Նույնիսկ, վորտեղ այդ հնարավոր
ե, պատասխանը լինում ե պատրաստ և թերթը լցնողին
մնում ե միայն ընդգծել համապատասխան բառը: Պա-
տասխանները կարող են գրվել բառերով կամ թվանշա-
նով. որինակ, մարդահամարի ժամանակ սեռը, զբաղիտու-
թիւնը, զբաղմունքը և այլն գրում են բառերով, իսկ
տարիքը թվանշանով: Հարցաթերթը լինում ե յերկու ձևի.
առաջին ձևը ծառայում ե դիտողութիւն մեկ միավորի
համար և կոչվում ե forms, ինչպես, որինակ, մարդահա-
մարի անձնական թերթիկը (որինակը տես վերջում):

Նման թերթիկը կազմվում ե յուրաքանչյուր ցուցա-

կազմող անձի համար: Գյուղատնտեսական ցուցակազրույթյան ժամանակ այդպիսի քարտ ե գյուղաթերթը, վորը կազմվում ե յուրաքանչյուր գյուղի համար, կամ տնաթերթը՝ ամեն մի տնտեսութայն համար:

Մյուս ձևը կոչվում ե ցուցակ, վորը կազմվում ե վոչ թե ամեն մի միավորի համար, այլ շատ միավորների համար: Մեկ ցուցակը կարող ե փոխարինել այնքան քարտ, վորքան տող ունի ցուցակը: Քարտերը ցուցակով փոխարինելու դեպքում բոլոր հարցերը տեղավորում են ցուցակի վերին մասում, ուղղահայաց տողերում, իսկ միավորների անունները գրում են ձախ կողմից:

Հարցաթերթի այդ յերկու հիմնական ձևերից լցնելու համար, յեթե ծրագիրը փոքր ե, ավելի մեծ հարմարություններ ունի ցուցակը:

1. տնտեսվում ե ժամանակը—ընդհանուր հարցերը մեկ անգամ են գրվում. որինակ տեղը, հասցեն և այլն,

2. հեշտանում ե քննադատական մտտեցումը—հարցաթերթի լցման ժամանակ վերևում թույլ տված թերությունները ցուցակի լրացման աշխատանքի կեսում կամ վերջում հեշտութայմը կարելի յե նկատել և ուղղել, որինակ, բաց թողած պատասխանները կամ յիթե արական սեռի փոխաբեն սխալմամբ գրել են իգական և այլն:

Յեթե հետադուրությունը կատարում են բարդ ծրագրով, ոգտագործում են միայն քարտը:

Հարցաթերթի այդ յերկու հիմնական ձևի միջև հաստատուն սահման չկա, վորովհետև վորոշ դեպքերում ցուցակի ձևը ծառայում ե ինչպես քարտ, որինակ, կալվածաթերթիկն կալվածքի առանձին բնակարանների նրկատմամբ հանդիսանում ե վորպես ցուցակ, իսկ ամբողջ կալվածքի համար վորպես քարտ: Այդ յերկու հիմնական ձևերի կոմբինացիաներն են, առաջինը, այն քարտերը, վորոնց հարցերը և պատասխանները դասավորվում են քարտի կողքերից: Նման տեսակի քարտեր կարելի յե

կազմել այն դեպքում, յեթե գերակշռում են թվանշաններով գրվող պատասխանները: Յերկուրդ կոմբինացիան ե ներկայացնում ժապավենի ձևը, վորն ընդունված ե մաքսային և տրանսպորտային վիճակագրութայն մեջ: Այս յերկու ձևին կանդրադառնանք ամփոփման աշխատանքների մասին խոսելիս:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՑՆԵԼԸ

Հարցաթերթի լցնելը պահանջում ե լցնողից մեծ զգուշություն. վիճակագիրը պիտի գիտակցի, վոր զցրած հարցաթերթի վրա պիտի աշխատեն զանազան շարքային վիճակագրներ, և պարզ չլցրած թերթերը մեծ զժվարությունների և նույնիսկ սխալների առիթ պիտի ծառայեն: Իրանց առաջն առնելու համար անհրաժեշտ ե թերթերը լցնել պարզ, ըստ կարելույն գրել թանաքով կամ քիմիական մատիտով: Այդ պահանջը բղխում ե նաև այն հանգամանքից, վոր հասարակ մատիտով գրված թերթերն ամփոփելիս, ձեռքից ձեռք անցնելով, կարճ ժամանակում ջնջվում են և զժվար ե լինում ջոկել, թե ինչ ե յեղել գրված. նույնպես անհրաժեշտ ե թվերը և պատասխանները դնել համապատասխան սյունյակներում այնպես, վոր կասկած առաջ չբերեն:

Պատասխանները գրվում են բառերով կամ թվանշանով կամ գիծ են քաշում. բառերով պատասխանելիս, չինի պատասխանը դրական կամ բացասական, գրում են լրիվ. պատասխանը թվանշանով գրելու դեպքում, դրական պատասխանի ժամանակ, համապատասխան թիվն են գրում, բացասականի դեպքում գիծ են քաշում. ցուցմունքի բացակայութայն դեպքում գրում են «տեղեկություն չկա»: Սխալը ուղղելիս չի կարելի ռետինով ջնջել, ինչպես այդ անում են հաճախ վոչ գրագետ վիճակագրները, այլ պիտի վրայից գիծ քաշել, այն ել այն-

պես, վոր կարելի լինի կարգալ, թե ինչ ե յեղել զբաժ
և վերևում գրել ուղիղը:

Հարցաթերթերն ինչքան ել լավ լինեն կազմված ե
խմբագրված, այնուամենայնիվ միշտ ել պատահում են
այնպիսի հարցեր, վորոնց պատասխանելիս զանազան տա-
տանումներ և կասկածներ են առաջ գալիս լցնողի հա-
մար: Այդ դժվարությունները կանխելու նպատակով
լցնողները ստանում են վորոշ բանավոր կամ գրավոր
հրահանգ: Գրավոր հրահանգը կարող ե լինել մեծ և փո-
քրը, սկսած մի քանի տողերից, վորը հենց հարցաթեր-
թիկի վրա յեն տեղավորում, հասնում ե մինչև գրքույկի
մեծության, վորն առանձին են հրատարակում. որինակ,
գրքույկի ծավալ ունի գյուղատնտեսական համապարփակ
և զինամիկ, արդյունաբերական տարեկան և գների վի-
ճակագրության հրահանգները: Այդ հրահանգների նպա-
տակն ե հարցաթերթում դրված հարցերի միատեսակ ըմ-
բռնումը վիճակագրների համար ապահովել, հարցաթեր-
թի բոլոր գլխավոր և մութ հարցերը լուսաբանել:

Կարճ ե լինում հրահանգը, յերբ թերթը լցնում ե
վոչ թե վիճակագիրը, այլ նա, ում ուղարկվում ե թեր-
թը, վորովհետև այս դեպքում պատասխանողը, լինելով
վոչ վիճակագիր, տրամադրված չի լինում բարդ հարցա-
թերթերի, իսկ դրա հետ նաև բարդ և մեծ հրահանգնե-
րի հետ գործ ունենալու: Բանավոր հրահանգը տեղի յե
ունենում, յերբ ուսումնասիրությունը կատարվում ե հա-
տուկ վիճակագրների միջոցով, բայց այս դեպքում ևս
նրանք ստանում են նաև գրավոր հրահանգ, մանավանդ,
յեթե հետազոտությունը լայն ծավալ ունի: Վերջին դեպ-
քում գրավոր հրահանգը հանդիսանում ե վիճակագրի հա-
մար մի աղբյուր, վորի շնորհիվ նա հնարավորություն ե
ստանում մտքում թարմացնել ստացած բանավոր հրա-
հանգը:

ՍԽԱԼՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՍ ԿՈՎԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես ամեն մի աշխատանքի ասպարիզում, նույնը
և վիճակագրական աշխատանքներում, սխալներն անխու-
սափելի յեն, ուստի և կարևոր տեղ պետք ե բռնեն նը-
քանց դեմ կովելու միջոցները:

Իրտողության ժամանակ սխալները լինում են՝

1. դիտողի կողմից.
2. հարցաթերթի թերության հետևանքով և
3. որյեկտի կողմից:

Իրտողի պատճառով սխալներն առաջ են գալիս
հարցաթերթերին և հրահանգներին նրա լավ ծանոթ չլի-
նելու, սխալ հասկանալու, անփորձ լինելու և նման
պատճառների հետևանքով: Այդ տեսակի սխալների ա-
ռաջն առնվում ե նրանով, վոր ուսումնասիրողին (վիճա-
կագրին) ընտրելու ժամանակ աշխատում են կարելույն
չափ բարձր վորակի վիճակագիր ընտրել. նրանից պա-
հանջում են լավ ծանոթանալ ծրագրին, մինչև իսկ քննու-
թյան են յենթարկում, փորձնական աշխատանքների յեն
դուրս բերում և այլն:

Հարցաթերթի թերությունները, վորոնց հետևանքով
առաջանում են սխալներ, այն են, վոր հարցաթերթը
վառ ե խմբագրված լինում, հարցերը վատ դասավորված.
Վինում են անհաշող և ավելորդ հարցեր: Սրանցից առաջա-
ցած սխալների դեմ կովում են վերևում հիշված միջոցնե-
րով, այն ե մասնագետների, նախկին ծրագրների, փորձա-
կան հետազոտությունների ոգտագործման միջոցներով.

Որյեկտի ցուցմունքների հետևանքով առաջացած
թերությունները լինում են յերեք տեսակ, յերբ որյեկտն
ուսումնասիրվող հարցը՝

1. ճիշտ հասկանում ե և զիտե, բայց հարցին չի
ցանկանում ճիշտ պատասխանել.

2. ճիշտ չգիտե և հարցին չի ցանկանում ճիշտ պատասխանել:

3. ճիշտ չգիտե, բայց հարցին ցանկանում է ճիշտ պատասխանել:

Վերջին յերկու դեպքը վտանգավոր չեն, վորովհետև վիճակագիրը հմուտ մոտեցումով հեշտությամբ կարող է գանազան, մեկը մյուսին ստուգող, հարցերի միջոցով գտնել սխալը և սպա ուղղել հենց տեղում: Հակառակ պարագայում, յեթե վիճակագրին չի հաջողվում գտնել թերությունները, և նյութերը մշակվում են թերություններով միասին, այդ դեպքում սրանք չեն կարող զգալի չափով բացասաբար անդրադառնալ արդյունքի վորակի վրա, քանի վոր սխալ ցուցմունքները (ավելի կամ պակաս) հավանականության տեսության հիման վրա ծածկելու յեն միմյանց, մոտենալով իրականությանը: Միանգամայն վտանգավոր են առաջին տեսակի սխալները՝ վորոնց դեմ կռվելու միջոցն են որյեկտի ցուցմունքների ներքին և արտաքին քննադատությունը և այն պահանջները, վոր դրվում են վիճակագրական աշխատանքների հաջողությունը ապահովելու համար:

Վիճակագիրը պիտի իմանա, վոր որյեկտը հազվագյուտ դեպքերում է լավ տբամադրված լինում ցուցմունքներ տալ նրա հանգստությունը խանգարող վիճակագրին, վորի աշխատանքը հաճախ նա կապում է հարկերի և տուրքերի հետ:

Այդ իսկ պատճառներով վիճակագիրը պիտի միշտ էլ քննադատորեն ընդունե ուսումնասիրվողի պատասխանները, ստուգե այն և իսկույն ուղղե պարզված սխալները: Այդ նպատակին են ծառայում հարցաթերթի ստուգիչ սյունյակները, վորոնք համեմատվում են միմյանց հետ. որինակ, հողերի և ցանքի տարածությունը, լծկանների և բանվորական ուժերի քանակը: Այդ ձևի քննադատությունը կոչվում է ցուցմունքների ներքին ֆննա-

դասություն: Քննադատության յերկրորդ ձևն է համարվում այն, յերբ ցուցմունքները ստուգվում են արտաքին, կողմնակի աղբյուրներից վաղորդ հավաքած գանազան տեղեկություններով, վորը կոչվում է ցուցմունքների արտաքին ֆննադասություն:

Աւստասանֆների հաջողությունն պայմաններն ապահովելու գործում կարևոր տեղ են բռնում, բացի բոլոր վերև հիշված միջոցներից,

1. սուբյեկտի ծանոթությունը շրջանին և ուսումնասիրվող յերևույթներին. այն քաղաքացին, վորը վոչ մի գաղափար չունի գյուղատնտեսության մասին, անկասկած, չի կարող պիտանի լինել գյուղատնտեսական վիճակագրության համար,

2. ուսումնասիրողի պատրաստականությունը, վիճակագրական փորձառությունը և նրա սերը դեպի այդ գործը, վորով վիճակագիրը կարողանում է հետաքրքրել և կապել որյեկտին իր աշխատանքների հետ,

3. նախնական ագիտացիոն կամպանիան, վորը տեղի յե ունենում ընթացիկ և հատուկ գրականության միջոցով, համագումարներում և մյուս նման խորհրդակցություններում զեկուցումների միջոցով: Այդ կամպանիաներն առանձին լայն ծավալ են ընդունել Սորհրդային Միության սահմաններում,

4. Մեզ մոտ վերջին մարդահամարի ժամանակ աչքի ընկան նույն նպատակին ծառայող՝ «աշխատանքներին աջակցող հանձնաժողովները» (КОМИССИИ СОДЕЙСТВИЯ), վորոնք խոշոր դրական դեր կատարեցին և Անդրկովկասյան ու միութենական կենտրոնների ուղղորդությունը գրավեցին:

Վիճակագրական տեղեկությունների հավաքման տեխնիկան ունի յերկու ձև. առաջինը եխպեղիցիոն, յերբ վիճակագիրն ինքն է գնում ուսումնասիրվողի մոտ, անմիջականորեն հարց ու փորձի միջոցով հավաքում է անհրաժեշտ տեղեկությունները և լցնում հարցաթերթը: Եքսպեդիցիոն ձև է և այն, յերբ հարցաթերթը վիճակագիրը հանձնում է ուսումնասիրվողին, հրահանգում է ինչպես լցնել թերթիկը, հետո յերկրորդ անգամ այցելում է նրան, ստուգում է լցրած թերթիկը և վերցնում էր հետ: Եքսպեդիցիոն ձևով ուսումնասիրությունն այն հետազոտությունն է, վորը որյեկտի տեսակետից վերելվում անվանեցինք «գիտողություն ուրիշի միջոցով»:

Տեղեկություններ հավաքելու յերկրորդ ձևը կոչվում է «բլանկային», վորը որյեկտի տեսակետից անվանեցինք «ինքնագիտողություն»:

Հարցաթերթը ուղարկվում է որյեկտին լցնելու, վորը նույն ճանապարհով լցրած հարցաթերթը վերադարձնում է ուղարկողին: Յեթե լցնողը նախապես հայտնի յե, ուսումնասիրողին ծանոթ անձ է, այդ ձևը կոչվում է կորեսպոնդենցիա կամ թղթակցություն:

Ներկա դեպքում կարող է որինակ ծառայել կամավոր թղթակիցների վիճակագրական տեղեկություններ հաղորդելու ձևը: Յեթե թղթակիցը նախապես անծանոթ է, ուսումնասիրողին հայտնի չէ, և հարցաթերթերը բաժանվում են վորոշ շրջանում, ապա այդ ձևը անվանվում է՝ «անկեսային»: Նման ձևի ուսումնասիրության որինակ է բժիշկ Մելիքյանի մեր համալսարանում ուսանողության բարոյականության ուսումնասիրության աշխատանքը: Բլանկային ձևվը (լինի թղթակցային թե անկեսային) տալիս է տեղեկություններ ինչպես իրենց, ուսումնասիրվողների մասին, նույնպես ուրիշ անձերի և շրջապատող յե-

ղևույթների մասին. որինակ, թղթակիցները հաղորդում են որյերևույթաբանական տեղեկություններ:

Բլանկային ձևվի առավելություններն այն են՝ 1) վոր նա եժան է նստում, պահանջելով միայն փոստի ծախք. 2) նախապատրաստական աշխատանքների և հետազոտման համար ժամանակ քիչ է խլում. 3) մարդկային շատ ուժեր չի պահանջում և այդ պատճառներով կարելի յե հաճախ ոգտվել նրանից:

Եխպեղիցիոն ձևվի առավելություններն այն են՝ 1) վոր տեղեկությունները ստացվում են ավելի ճիշտ. 2) պահպանվում է հարցերի միատեսակ հասկացողությունը. 3) թերթիկները քանակի տեսակետից ստացվում են լրիվ, վորովհետև չեն կորչում ճանապարհին կամ մընում որյեկտի մոտ. 4) աշխատանքը կարելի յե կատարել ավելի լայն ծրագրով, վորովհետև եքսպեդիցիոն ձևը հնարավություն է տալիս, շնորհիվ հատուկ ուսումնասիրողի մասնակցություն, հետազոտությունը կատարել ավելի հարուստ ծրագրով:

Բլանկային ձևվի թեուրյունների շարքին պիտի դասել այն հանգամանքը, վոր այդ ձևով մեր պայմաններում հետազոտություն կարելի յե կատարել միայն գրագետ միջավայրում, իսկ գրագետ միջավայրի տված տեղեկություններն առայժմ արտահայտում են ուժեղ տնտեսությունների պատկերը, վորովհետև յենթադրվում է, վոր գրագետ տնտեսությունների մասսան տնտեսապես ավելի ուժեղ մասսա յե: Բացի դրանիցնա միանգամայն ընդունելի չէ այնպիսի ցուցակագրության դեպքում, վորի նպատակն է տալ ուսումնասիրվող յերևույթների քանակական լրիվ պատկերը:

Եխպեղիցիոն ձևվի թեուրյունները. նա թանգ է նստում, մարդկային շատ ուժեր է պահանջում և այլն: Կյանքի մեջ յերկու ձևն էլ կիրառվում են:

ԴԻՏՈՂՈՒՅՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՅԵՐԵՎՈՒՅՅՆԵՐԻ
ՓՈՓՈՒԱԿԱՆՈՒՅՅԱՆ ՅԵՎ ՏԵՎՈՂՈՒՅՅԱՆ

Մարդու շրջապատող բոլոր յերևույթները նրանց փոփոխականության տեսակետից կարելի չէ բաժանել յերկու խմբի. առաջինը նրանք են, վորոնք այնքան դանդաղ ընթացք ունեն, վոր կարճ ժամանակամիջոցի համար նրանց մեջ կատարվող փոփոխությունները կամ աննշան են կամ նույնիսկ նկատելի չեն. որինակ՝ Յերևանի ազգաբնակչության թիվը, Հայաստանի գյուղ. տնտեսությունների թիվը, առևտրական, արդյունաբերական ձեռնարկությունների ցանցը և այլն. բոլոր այդ թված յերևույթներին քանակը այսօր, վաղը կամ մյուս օրը, կամ մեկ ամիս առաջ, համարյա նույնն է:

Հակառակ խմբին են պատկանում այն յերևույթները, վորոնք փոփոխվում են համեմատաբար ավելի արագ և վորոնց տեղեկությունը շատ կարճ է. որինակ՝ մահը, ծնունդը, բերքը, գները, ամսական առևտրական շրջանառությունը և այլն: Այդ յերևույթներն այնքան զգալի չափով են յենթարկվում փոփոխության, վոր ամեն մի ավյալ մոմենտում ներկայացնում են մի առանձին պատկեր: Յեթե այդ յերևույթները իր ժամանակին իսկույն չարձանագրվեն, ապա մի վորոշ ժամանակից հետո հնարավորություն չենք ունենա վերականգնել: Այն հետադասությունը, վորը ուսումնասիրում է առաջին խմբի, համեմատաբար կայուն, յերևույթները, կոչվում է հիմնական վիճակագրություն կամ ցուցակագրություն, իսկ վորն ուսումնասիրում է յերկրորդ տեսակի յերևույթները, կոչվում է ընթացիկ վիճակագրություն:

Հիմնական վիճակագրությունը ուսումնասիրում է յերևույթները յերկար ընդմիջումներով. որինակ, ազգաբնակչության ցուցակագրությունը կատարվում է ամեն մի 5 կամ 10 տարին մեկ անգամ, վորովհետև ավելի

կարճ ժամանակամիջոցի, որինակ, մեկ տարվա համար միայն չկա մեծ ծախսերով և դժվարություններով ցուցակագրություն կատարել աննշան փոփոխությունների մեջ համոզվելու համար: Ընթացիկ վիճակագրությունն է, վոր գալիս է լրացնելու այդ բացը մեկ հիմնական ցուցակագրությունից մինչև մյուսը: Նրանց հարաբերությունը հաջող բնորոշում է հյուսիսի կողմը*, համեմատելով հիմնական վիճակագրությունը ֆոտոգրաֆի, իսկ ընթացիկ վիճակագրությունը կինեմատոգրաֆի հետ: Հիմնական վիճակագրությունը տալիս է մասսայի զրույթությունը ամեն մի ավյալ մոմենտին և հնարավորություն է տալիս ստուգել ընթացիկ վիճակագրության արդյունքները:

Յերկու տեսակ են այն աղբյուրները, վորտեղից քաղում են հիմնական և ընթացիկ վիճակագրություններն իրենց անհրաժեշտ տեղեկությունները: Առաջին աղբյուրն են կազմում վիճակագրական հատուկ հետազոտությունները: Այս աղբյուրը միակն է հիմնական վիճակագրության համար:

Յերկուրդ աղբյուրն այն հիմնարկություններն են, վորոնց տեղեկություններից ոգտվում է վիճակագրությունը: Այդ տեղեկություններն անմիջապես վիճակագրական մեթոդներով և վիճակագրական նպատակներին համար չեն հավաքված և կազմում են սեկունդար վիճակագրություն: Որինակ կարող են ծառայել «Զագս»-ի տեղեկությունները ծնվածների և մեռածների մասին, Գավֆինբաժիններից ստացվող առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունների մասին յեղած տեղեկություններն և այլն: Գների վերաբերյալ տեղեկությունները կմտնեն առաջին խմբակի մեջ, յեթե այդ տեղեկությունները հավաքում են վիճակագրական մեթոդով և հատուկ վիճակագրի միջոցով:

* П. Колокольников. „Статистика“ Москва 1926 г.

Նույն տեղեկությունները սեկունդար վիճակագրության բնույթ կրնա ունենալ, յեթե մենք պահանջենք տուտորական ձեռնարկություններից, վոր իրենց գրքերից նյութերը քաղեն և մեզ հայտնեն:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ցուցակագրության (հիմնական վիճակագրության) սահմանները լայն են: Մարդուն շրջապատող յերևույթների բոլոր բնագավառներում նա կարող է գտնել իր գործադրումը: Ցուցակագրությունները կարելի յե բաժանել հետևյալ հիմնական տեսակների.

1) ազգաբնակչության (մարդահամար), 2) գյուղատնտեսության, 3) արդյունաբերության և 4) առևտրի:

Անկախ այդ հիմնական տեսակներից կան նաև հատուկ նպատակների ծառայող ցուցակագրություններ. որինակ, դպրոցական, շենքերի, անասունների, հողերի և այլն: Ամերիկայում այդ ցուցակագրությունները կատարվում են վոչ առանձնացած, այլ միաժամանակ և անվանվում են «ցենզ»:

Ցուցակագրությունները բոլոր յերկրներում կատարվում են 5 կամ 10 տարին մեկ անգամ, սովորաբար այն տարիներին, վորոնք վերջանում են «0»-ով, կամ «5»-ով և մոտավորապես միաժամանակ, վորպեսզի զանազան յերկրների վիճակագրական տվյալները համեմատելի լինեն միմյանց հետ:

Ցուցակագրությունների շարքում հնագույն են և կենտրոնական տեղ են բռնում սարդահամարները, վորոնց գլխավոր նպատակն է յեղել հնում պարզել՝ ում և ինչ չափով կարելի յե տուրքադրել. դրանով է բացատրվում հին Ռուսաստանի առաջին մարդահամարների սոցիալական բնույթը, յերբ միայն աշխատավորական

մասսան եր յենթակա ցուցակագրության և ազատ եր դրանից տիրող դասակարգը:

Նոր ժամանակվա ցուցակագրությունները ուսումնասիրական նպատակ են հետապնդում—տալ յերկրի ճիշտ տնտեսական և քաղաքական պատկերը:

Առաջին ցուցակագրությունը ժամանակակից հասկացողությամբ Ռուսաստանում կատարվել է 1897 թվին. նա յեղել է մարդահամար, վորովհետև ուսումնասիրել է միայն ազգաբնակչությունը (ըստ սեռի, տարիքի, լեզվի, գրագիտության և այլն):

Յերկրորդ մարդահամարը կատարվել է 1920 թ., նրա նպատակն է յեղել պարզել ազգաբնակչության ու բանվորության քանակը և յերկրի տնտեսական ուժերը. այստեղ մարդահամարի (դեմոգրաֆիայի) հետ միացած են յեղել պրոֆեսիոնալ, գյուղատնտեսական և արդյունաբերական ցուցակագրությունները, հիշեցնելով վորոշ չափով ամերիկական «ցենզերը»: Քաղաքացիական կոնֆլիկտների պատճառով ցուցակագրությունը կատարվել է Նոր-հրդային Միության վոչ բոլոր վայրերում, տերրիտորիայի վորոշ մասը դուրս է մնացել:

Յերրորդ մարդահամարը միայն քաղաքներում և քաղաքատիպ վայրերում կատարվել է 1923 թ.:

Վերջին մարդահամարը, վորին միացրած է յեղել քաղաքներում բնակարանների ցուցակագրությունը, կատարվել է Համամիութենական մասշտաբով 1926 թվին. (Նրա հարցաթերթը տես գրքի վերջում):

Գյուղատնտեսական ցուցակագրություններից առաջինը կատարվել է 1916 թ. ամբողջ Ռուսաստանում. նրա նպատակն է յեղել պարզել գյուղատնտեսության մեջ բանվորական ուժերի չափը, անասունների քանակը ցանքերի տարածությունը և այլն:

Յերկրորդ գյուղատնտեսական ցուցակագրությունն ավելի լայն ծրագրով տեղի յե ունեցել 1917 թ., նրա

կատարման պատճառն են յեղել հեղափոխական ժամանակաշրջանում առաջացած յերկու հիմնական խնդիր— պարենավորման կրիզիսը (անհրաժեշտ եր ազգաբնակչության և զորքի մատակարարման պլանը կազմել) և հողային ռեֆորմայի համար պահանջվող վիճակագրական տվյալներ ունենալու անհրաժեշտությունը:

Յերրորդը, ինչպես վերևում նկատվեց, կատարվել է 20 թ. մարդահամարի հետ միասին Միություն բուրժուազրուքում, բացի Անդրկովկասից: Այդ յերեք ցուցակագրությունները (1916, 1917 և 1920 թ. թ.) կատարվել են պատերազմի և քաղաքացիական կռիվների ժամանակ: Ազգաբնակչությունն, այդ վիճակագրությունները կապելով ռեկվիզիցիաների հետ, անկասկած, չեք կարող տալ խաղաղ ժամանակի նման տեղեկություններ:

Պյուղատնտեսական վիճակագրություն Անդրկովկասյան մասշտաբով չի կատարվել, բայց նա տեղի յե ունեցել առանձին հանրապետություններում, այն է՝ Ադրբեջանում—1921 թ., Հայաստանում—1922 թ., իսկ Վրաստանում—1923 թ.:

Արդյունաբերական ցուցակագրություններից առաջինը կատարվել է 1918 թ., բավականին լայն ծրագրով, կապված պրոֆեսիոնալ ուսումնասիրության հետ, ընդգրկելով միայն խոշոր և միջակ արդյունաբերական ձեռնարկությունները:

Նույն քաղաքացիական կռիվները խանգարել են նրա հաջող ընթացքը:

Յերկրորդը կատարվել է 1920 թ., յերկրորդ մարդահամարի հետ, իսկ յերրորդը՝ 1923 թ. քաղաքային ցուցակագրության հետ: Անդրկովկասյան մասշտաբով կատարվել է 1925 թվին խոշոր արդյունաբերության հետազոտությունը (1923—24 թվի վերաբերյալ):

Քաղաքային ցուցակագրություններից առաջինը կատարվել է 1917 թ., հեղափոխությունից հետո, և ընդ-

գրկել է միայն քաղաքներն ու քաղաքատիպ վայրերը. գլխավորապես ուսումնասիրվել են կալվածքներն ու բնակարանները:

Յերկրորդ քաղաքային ցուցակագրությունը կատարվել է 1923 թ., վորը տարբերվում է առաջինից նրանով, վոր այստեղ ազգաբնակչության կազմի ուսումնասիրությունը բռնում է առաջին տեղը: Բացի դրանից նրա հետ կապված են յեղել նաև արդյունաբերության և առևտրի ցուցակագրությունները:

Առել՝սրական ցուցակագրությունն առաջին անգամ տեղի յե ունեցել 1923 թվին. շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ ցուցակագրության ժամանակ դեռ նոր էր յինք անցել «ՆեՊ»-ին (նոր տնտեսական քաղաքականությունը), ցուցակագրությունը չկարողացավ արդարացնել մեր սպասելիքները, այլ տվեց միայն առևտրական ցանցի պատկերը:

Դիսոդոբյան միավորների ընթացումը, ինչպես ասել ենք, պայմանավորվում է ուսումնասիրության նըպատակներով և կախված է նրանից, թե ցուցակագրության ժամանակ ինչը կնդուենենք հաշվի միավոր: Միավորի ընտրությունը դժվար խնդիրներից մեկն է: Մարդահամարի ժամանակ այդպիսին կարող է ծառայել այն մարդը, վորը ցուցակագրման որը ներկա յե. այդ դեպքում ցուցակագրությունը կտա առկա ազգաբնակչության թիվը (наличное население), բայց կարելի յե ընդունել նաև մշտական տեղումն ապրող մարդուն, այդ դեպքում կատայվի մշտական ազգաբնակչության թիվը (постоянное население):

Պյուղատնտեսական վիճակագրության համար դիտողություն միավոր կարող է ծառայել գյուղացու տնտեսությունը կամ ընտանիքը և այլն:

Այդ դեպքում ևս պիտի վաղարոք պարզված լինի,

Թե ինչ պիտի հասկանալ տնտեսութիւն կամ ընտանիք ասելով:

Արդյունաբերական և առևտրական ցուցակագրութիւնները համար դիտողութեան միավոր եւ ընդունվում ամեն մի ձեռնարկութիւն. ձեռնարկութիւնները կարող են լինել բարդ տիպի, ինչպիսին յեն «Բամբակկոմի» կամ «Արարատի» ձեռնարկութիւնները: Յետք դեկավարվենք տեխնիկական տեսակետով, այդ դեպքում նրանք կունենան այնքան միավոր, վորքան կետեր ունեն: Ըստ տնտեսական տեսակետի նրանք համարվում են մեկ միավոր:

Ցուցակագրութիւնները հանդիսանում են մեզ համար վորպես լուսանկարչական աշխատանք. այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ եւ, վոր ցուցակագրութիւնների սեվողութիւնը լինի կարելույն չափ կարճ ցուցակագրութեան վերջին որը մոտ լինի կրիտիկական որին: Կրիտիկական ուր ասելով, հասկանում են այն ժամկետը, յերբ կատարվելու յե ցուցակագրութիւնը: Յետք այդպիսի որը ընդունվում եւ, ասենք դեկտեմբերի 17-ը, բայց վիճակագիրը ուսումնասիրվողին պատահել եւ ամսի 20-ին, ցուցակագրում եւ նրան այնպես, ինչպես հանդիպած լիներ նրան վոչ թե ամսի 20 ին, այլ 17-ին. որին նակ, 17-ից հետո ծնվածներին, հաշվի չեն առնում, իսկ մեռածներին հաշվի յեն առնում վորպես կենդանի:

Մարդահամարի համար ընդունված են յեղել վորպես կրիտիկական որ՝ 1897 թվին հունվարի 28-ը, իսկ վերջի 1926 թվին—դեկտեմբերի 17 ը:

ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ընթացիկ վիճակագրութեան գործադրման սահմաններն ևս շատ լայն են և շարունակում են դեռ լայնանալ: Ընթացիկ վիճակագրութիւնը կատարվում եւ յերկու-

գծով—մեկ գերատեսչական, մյուսը կենսավիճակագրի: Համաձայն Խորհրդային վիճակագրութեան կառուցվածքի այդ յերկու ճյուղով կատարվող վիճակագրութիւնները կազմում են մի ընդհանուր, մեկը մյուսին լրացնող, պիտական վիճակագրութիւն:

Բոլոր տեսակի ընթացիկ վիճակագրութիւնները կարելի յե բաժանել ճիւղ հիմնական խմբի—սոցիալական, գյուղատնտեսական, արդյունաբերական, աշխատանքի և փոխանակման վիճակագրութիւնների:

1. Սոցիալական վիճակագրութիւնը ուսումնասիրում ե՝

1. ազգաբնակչութեան բնական շարժումը—ծնունդն և մահը—«ԶՆԳՍ»-ի տվյալներով և մեխանիկական շարժումը հասցեների սեղանների տվյալներով:

2. ազգաբնակչութեան առողջապահութիւնը և սանիտարա բժշկական գործը. հիվանդութիւնների տեսակը, քանակը և այլն հիվանդանոցների և համապատասխան հիմնարկների տվյալներով:

3. ժողովրդական լուսավորութեան գործը. դպրոցների թիվը, տիպերը, աշակերտութեան թիվը, սոցիալական կազմը և այլն ժողուս հիմնարկների տվյալներով:

4. հանցագործութիւնը. տվյալները քաղվում են դատարանների վորոշումներից դատապարտվածների մասին, միլիցիայի տվյալներից և այլն:

5. կոմունալ տնտեսութիւնը և բնակարանային ինչիւրը:

II. Գյուղատնտեսական ընթացիկ վիճակագրութիւնը բաժանվում եւ հետևյալ մասերի.

1. բերքի վիճակագրութիւն. ուսումնասիրում եւ բերքի դրութիւնը կամավոր թղթակիցների և գավառակային եկսպերտ հանձնաժողովների միջոցով. նրանք տեղեկութիւններ են տալիս ամեն ամսի 1-ին և 15-ին գավիճաբաժիններին, վորոնք, այդ տվյալներն առանձին ամփո-

փելով, իրենց յեզրակացության հետ հայտնում են հանրապետական հանձնաժողովին.

2. ցիկլային վիճակագրություն. ուսումնասիրում է բուսական և կենդանական կյանքի պայմանները գյուղատնտեսության մեջ և տալիս է արտադրանքի նորմաները.

3. սննդի վիճակագրություն. ուսումնասիրում է քաղաքի և գյուղի ազգաբնակչության սնունդը, նրա նորմաները, վորոնք հարկավոր են թե բալանային և թե ոպերատիվ աշխատանքների համար.

4. 1927 թվից (գարնանից) կազմակերպված է գյուղացու զրամական մուտքի և յեւթի ուսումնասիրությունը:

5. կենտրոնական տեղերից մեկն է բռնում գյուղացիական տնտեսությունների հիմնական ելմեմտների ընտրովի հետազոտությունը, վորը կատարվում է ամեն տարի գարնանը և աշնանը: Նրա նպատակն է պարզել անասունների, գործիքների, ցանքերի և մյուս հիմնական ելմեմտների պատկերը: Այդ հետազոտությունների կարևոր նշանակությունն այն է, վոր նրանց տվյալները գալիս են փոխարինելու համապարփակ վիճակագրությունների տեղեկությունները վերջիններիս բացակայության հետևանքով:

Ընթացիկ վիճակագրության խմբին են պատկանում նաև

6. գյուղացու բյուջեյի ուսումնասիրությունը, վորը տալիս է գյուղացիական տնտեսության բյուջեյի կառուցվածքի մանրամասն պատկերը և պատկանում է մոնոգրաֆիկ հետազոտությունների խմբին.

7. գյուղատնտեսական ղինամիկ վիճակագրությունը, վորի նշանակությունը ժող. տնտեսության ուսումնասիրության գործում նույնպես խոշոր է: Նա հայտնաբերում է գյուղաց. տնտեսությունների մեջ կատարվող սոցիալ-տնտեսական պրոցեսների շարժումը (ղինամիկան) տա-

քինների ընթացքում, վորի պատճառով և կոչվում է «ղինամիկ» հետազոտություն:

III. Արդյունաբերական ընթացիկ վիճակագրությունը կատարում են կենտվիճվարը և ժողտնտխորհր: կենտվիճվարն իր ուսումնասիրությունը կատարում է հատուկ «Բ» բլանկով, մանրամասն ծրագրով, ընդգրկելով տվյալ ձեռնարկության ամբողջ տարվա գործունեությունը. այդ նյութը ծառայում է արդյունաբերությունը ղեկավարող մարմինների պլանային աշխատանքների նպատակներին:

Իացի դրանից կենտվիճվարի ու ժողտնտխորհի փոխադարձ համաձայնությունը կատարում են հետազոտություններ ժամկետային քարտերով, կրճատ, ծրագրով կոնյունկտուրային նպատակների համար: Այդ աշխատանքը պարզում է բանվորների և նրան աշխատած որեքի քանակը, բանվորական որվա տևողությունը, բանվորների միջին թիվը, արտադրանքը քանակով և զրամական արժողությամբ:

IV. Աշխատանքի վիճակագրությունը ուսումնասիրում է.

1. զբաղված վարձու բանվորական ուժի քանակը և կազմը արհմիությունների, ձեռնարկ-հիմնարկների և սոցապ մարմինների տվյալների հիման վրա.

2. աշխատանքի շուկան. աշխատանքի պահանջը, տառաջարկը և ալն աշխտորսանքի տվյալների հիման վրա.

3. աշխատավարձն ըստ առանձին ճյուղերի հատուկ հետազոտությունների միջոցով.

4. բյուջետային ինդեկսը, վորը ցույց է տալիս բանվորի ռեալ աշխատավարձը և շուկայի ազդեցությունը նրա տնտեսության վրա: Ինդեկսը կազմվում է կենտվիճվարի տվյալների հիման վրա.

5. բանվորների բյուջեն արտադրության գլխավոր ճյուղերում—լեռնային, գինու—կոնյակի, կաշու և այլն:

Քյուշեն կազմվում է նույնպես հատուկ հետազոտությունների միջոցով.

6. բանվորական ժամանակը, նրա փաստացի տեվողությունն արդյունաբերական ձևնարկներում ձեռնարկություններից ստացած տեղեկությունների հիման վրա.

7. սոցիալական ապահովագրությունը գանձարկղի տվյալների հիման վրա.

8. արհեստակցական շարժումը, վորը խորհրդայնացման որից հատուկ նշանակություն է ստացել և կատարվում է առանձին քարտերով ամեն մի հիմնարկության համար, անկախ նրա բանվորական ուժերի քանակից. նրանով կարելի յե պարզել պրոֆմիությունների անդամների թիվը ըստ առանձին միությունների, գավառների և ազգությունների: Ուսումնասիրությունը կատարվում է հատուկ հետազոտությունների և միությունների տվյալներով.

9. աշխատանքը գյուղացիական և անտառային տնտեսությունների մեջ: Շնորհիվ այդ ուսումնասիրության մենք հնարավորություն ենք ստանում պարզել այդ բնագավառում զբաղված անձանց կազմն ըստ սեռի, հասակի, ազգության և այլն: Ուսումնասիրությունը տարվում է հատուկ հետազոտությունների միջոցով:

V. Փոխանակման վիճակագրություն:

Այստեղ կենտրոնական տեղը բռնում է առևտրական վիճակագրությունը: Այդ աշխատանքը կատարվում է.

1. տարեկան մեկ անգամ համապարփակ ձևով, եքսպեդիցիոն յեղանակով (մասնավորների նկատմամբ ֆինժոդկոմատի տվյալների հիման վրա), վորի նպատակն է տալ առևտրական ցանցի, նրա մեջ զբաղված անձերի և առևտրական շրջանառության պատկերը.

2. ամսե-ամիս ընտրովի ձևով կրճատ ծրագրով և հատուկ քարտերով կոնյուկտուրային նպատակների համար որբեկտների տվյալների հիման վրա:

3. բացի դրանից կատարվում է հաշվեառում տարեկան մեկ անգամ ավելի լայն ծրագրով ձեռնարկության ամբողջ տնտեսական գործունեյության մասին որբեկտների ցուցմունքների հիման վրա.

4 պաշարների (հացի և հում նյութերի) վիճակագրությունը, վորը կատարվում է տարեկան 4 անգամ որբեկտների տվյալների հիման վրա.

5. մաքսատան գործունեյությունը նրա տվյալներով.

6. յերկաթգծի բեռների շրջանառությունը համապարփակ հաշվառումով և կոնյուկտուրային կարգով.

7. գների վիճակագրությունը և շուկայի գրությունը եկսպեդիցիոն կարգով.

8. յեկամտահարկը, վորը տալիս է հարկի չափը և նրա գասավորումը ըստ բնակչության տարբեր խմբերի, կատարվում է ֆինժոդկոմատի տվյալներով.

9. ինքնահարկումը (самообложение) Ֆինժոդկոմատի տվյալներով.

10. տեղական բյուջեյի մուտքն ու յելքը ֆինժոդկոմատի տվյալներով.

11. վարկային վիճակագրությունը վարկային հիմնարկների ամսական տվյալների հիման վրա.

12. կոոպերատիվ վիճակագրությունը նրանց կենտրոնների տվյալներով:

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԻՆ
ՈՒ ԽՄԲՍՎՈՐՈՒՄԸ

ԱՄՓՈՓՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վիճակագրական այն աշխատանքը, վորը տալիս է գիտողութեան միավորների և նրանց հատկանիշների գուժմարը ըստ առանձին, նախապես վորոշված խմբերի, կոչվում է ամփոփում: Ամփոփման նպատակն է, գումարելով հավաքած տեղեկութունները, պատկաստել վիճակագրական հավաքականութուններ արտահայտված թվերով և գետեղված աղյուսակներում:

Հավաքված նյութերի նախնական դրութունը, ինչպես պրոֆ. Կարլուկովն է ասում, իր զանազան թերութուններով, վրիպակներով և սխալներով, վորոնք հետևանք են շտապողականութեան, թերթիկը լցնողի անուշադրութեան և ուրիշ պատճառների, հիշեցնում է այն քառասային պատկերը, վորն ունի շինվող նոր տան շրջապատը, վորտեղ զանազան անկյուններում թափթփված են մեկը մյուսի գլխին անհրաժեշտ շինանյութերը—ցեխ, քար, ավազ, փայտ և այլն: Մի վորոշ ժամանակից հետո նույն վայրում քառասային պատկերը վերացվում է և տեղն է կանգնում մարդաբնակ գեղեցիկ մի շենք: Նույնպատկերին ենք հանդիպում վիճակագրական ամփոփման աշխատանքների սկզբնական և վերջնական շրջաններում:

ՆՅՈՒԹԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պարզ է, վոր մինչև ամփոփման աշխատանքին անցնելը, նյութերը պիտի մաքրել այդ վրիպակներից և սխալներից: Նման աշխատանքը, վորի նպատակն է հուժ նյութերի ստուգումը և պատրաստումը հետագա ամփոփման աշխատանքների համար, գրականութեան մեջ անվանում են վիճակագրական նյութերի ֆինալաիստրիան: (Այս քննադատութունը չպիտի խառնել այն քննադատութեան հետ, վորը կատարվում է առաջին աստիճանում, վիճակագրական տեղեկութունները հավաքելու ժամանակ): Նյութերի քննադատութունը լինում է արտաքին և ներքին: Արտաքին ֆինալաիստրիան այն է, յերբ թերթիկների այն թերութուններն են վերացնում, վորոնք թերթիկի արտաքին տեսքից իսկույն աչքի յեն ընկնում: Որինակ, այնպիսի հարցերի պատասխանն է բացակայում, վորոնք անպայման պետք է լինեյին. ինչպես մարդահամարի ժամանակ անձնական թերթիկում յերբեմն բացակայում է ցուցակագրված անձի սեռը կամ տարիքը: Արտաքին քննադատութուն է և այն, յերբ պարզում են հակասական հարցերը. որինակ, նույն անձնական թերթում հասակը ցույց է տված, ասենք, 3 տարի, իսկ ընտանեկան դրութունը—ամուսնացած: Պարզ է, վոր այստեղ սխալ է սպրտնել. կամ տարիքը կամ ընտանեկան դրութունը սխալ են ցույց տվել:

Ներքին ֆինալաիստրիան նպատակն է հայտնաբերել այն թերութունները, վորոնք թերթիկից իսկույն չեն յերևում և առաջ են յեկել ծրագրի և կազմակերպչական նախագծի (план) սխալ հասկացման և կիրառման հետեւանքով. որինակ, հարցաթերթիկը փոխարեն մեկի՝ կազմած է յերկու միավորի համար, վոր չպետք է լիներ, և ընդհակառակը: Այդ թերութունները պարզվում են մա-

սամբ նյութերն ընդունելու ժամանակ և մասամբ խորքնադատական աշխատանքներ կատարելիս:

Քննադատական աշխատանքով հայտնաբերած թերությունները, ուղղելու տեսակետից, կարելի չե բաժանել յերկու խմբի. առաջինը՝ թերություններ, վոր կարելի չե ուղղել կենտրոնում զանազան, մեկը մյուսին ստուգող, սյունյակների և պատասխանների կամ ուրիշ լրացուցիչ աղբյուրներից քաղած տեղեկությունների հիման վրա: Այդ աշխատանքների ժամանակ մեծ դեր ե խաղում քննադատողի լավ ծանոթ լինելը նյութին: Յերկրորդ խմբին են պատկանում այն թերությունները, վոր հնարավոր չե կենտրոնում քննադատության ժամանակ ուղղել: Յեթե թերթիկների մեջ նկատվում են այդպիսի թերություններ մեծ քանակով և վերաբերում են միայն մի վայրի (ըջանի), նպատակահարմար ե հետազոտությունը նորից կատարել տալ նույն կամ մի ուրիշ ավելի ուժեղ վիճակագրի միջոցով: Իսկ յեթե թերի թերթիկները քանակով աննշան են կամ վերաբերում են տարբեր ըջանների և նրանց ուղղումը տեղում մեծ ծախսեր կպահանջի, ապա մշակման համար պիտի անպետք համարել այդ թերթիկները կամ ամբողջովին կամ նրանց վորոշ հարցերը, նայած թերությունների բնույթին: Թերություններն ուղղելու միջոցներից մեկն ել այն լրացուցիչ սյունյակներն են, վորոնք աղյուսակներում հատկացվում են «անհայտ դեպքերի» համար: Այդպիսի սյունյակներ լայն չափով ընդունված են դեմոգրաֆիկ վիճակագրության մեջ: Քննադատությանը հաջորդում են նյութերի խմբավորման աշխատանքները:

ՆՅՈՒԹԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՆՇՈՒՄԸ

Վիճակագրական տեղեկությունները կարելի չե խմբավորել ըստ տարածության, ժամանակի և առարկայական հատկանիշների: Թե դրանցից վորն ընտրել էբբե

հիմք խմբավորման համար, դա կախված ե ծրագրում ընդունված նպատակներից:

Յեթե խմբավորման հիմք ընդունենք տարածություն, այդ դեպքում բոլոր տեղեկությունները պիտի դասավորել ըստ այն վարչական բաժանումների, վորոնք ընդունված են ծրագրով. այդպիսի վարչական բաժանումներ կարող են ծառայել մեր պայմաններում գլխավորապես գավառները և շրջանները, ավելի հազվագյուտ դեպքերում գյուղերը. որինակ, սոցիալական վիճակագրության աշխատանքները հրատարակված են այդ բաժանումներով: Նյութերի դասավորումը ըստ վարչական բաժանումների կապված ե վորոշ անհարմարությանների հետ. այդ բաժանումները կարող են փոփոխության յենթարկվել պատերազմի կամ յերկրի շրջանացման հետևանքով: Նոր խմբավորումները, վորպեսզի չկտրվի կապը նախկինի հետ, առաջ են բերում համեմատականության շղթա կազմելու խնդիրը:

Համեմատաբար քիչ դժվարություններ են լինում տեղեկություններն ըստ ժամանակի խմբավորելիս: Դժվարություններն այստեղ առաջ են գալիս ժամանակի մի կտորը մյուսին հավասար չլինելու հետևանքով, ինչպես փետրվարը հավասար չե մյուս բոլոր ամիսներին: Տվյալներն ըստ ժամանակի դասավորելիս գործ են ածում տարի, ամիս և այլն: Ժամանակի ընտրությունը կախված ե ուսումնասիրվող յերևույթների բնույթից և հետազոտության ծրագրից. յեթե հետազոտությունը ընդգրկում ե բյուջետային տարին, ապա հավաքված տեղեկությունների ամփոփումն ևս վերաբերվելու յե նույն բյուջետային տարվան, այլ վոչ վորևե ուրիշ ժամանակամիջոցին:

Վերջապես տվյալները կարելի չե դասավորել ըստ առարկայական հասկանիքների, վորոնք դիտողության ժամանակ ուսումնասիրության առարկա յեն հանդիսանել: Կոպերատիվ վիճակագրության մեջ առարկայական

հատկանիշներն են կոոպերատիվների տեսակները, նրանց անդամների թիվը, շրջանառության գումարն և այլն: Թե ինչպիսի առարկայական հատկանիշ ընտրել խմբավորման հիմք, այդ նույնպես կախված է նյութերի բնույթից և այն նպատակից, վորը հետապնդում է տվյալ ուսումնասիրությունը:

Ամփոփման աշխատանքները հեշտացնելու նպատակով թերթիկների վրա քննադատության հետ միաժամանակ պայմանական նշաններ են անում: Դրանք կրճատ ձևով արտահայտում են խմբավորման հատկանիշները, վորոնց համաձայն ամփոփվելու յեն տվյալները: Յեթե հարկավոր է թերթիկները խմբավորել ըստ սեռի, կարելի է թերթիկները նշել «Ա» (արական) և «Ի» (իգական) տառերով: յեթե առևտրական կամ արդյունաբերական ցանցը պիտի խմբավորել ըստ պետական, կոոպերատիվ և մասնավոր սեկտորների, նշում են «Պ», «Կ» և «Մ» տառերով: Ավելի հեշտ ջոկելու համար, այդ նշումները կատարում են զանազան գույնի մատիտով կամ ուրիշ պայմանական նշանով: Նշելու նպատակն է խնայել ժամանակը, խուսափել սխալներից և ողտագործել անվորակ ուժեր: Թե քննադատումը և թե նշումը վիճակագրական աշխատանքների մեջ պատասխանատու գործողություններին են, վորովհետև այստեղ կատարված սխալները հետագայում շատ դժվար է դանել, ուստի և այդ աշխատանքները կատարում են փորձված կամ բարձր վորակի աշխատակիցները:

Խմբավորման աշխատանքներն այնպես պետք է կատարել, վոր ամփոփման ժամանակ ավելորդ գործողություններ չկատարվեն, և հաջորդականություն պահպանվի նրանց միջև:

ԻՆՏԵՐՎՍՆԵՐՎ

Ամփոփման աշխատանքների մեջ կենտրոնական տեղերից մեկը պատկանում է ինտերվալների (միջանց) ընտրության խնդրին: Այն խմբակները, վորոնց մեջ ամփոփման ժամանակ դասավորվում են հավաքած տեղեկությունները, կոչվում են ինտերվալներ:

Ընդհանուր առմամբ ինտերվալները պիտի լինեն հավասար, բայց վորոշ դեպքերում, յերբ այդ պահանջում է խմբավորվող յերևույթների բնույթը, ինտերվալները լինում են և անհավասար: Առաջինի որինակ կարող է ծառայել ազգաբնակչության դասավորումը 5 կամ 10. ամյակներով: Ժինչև 5 տարեկան, 10 տ., 15 տ., 20 տ. և այլն, դրանց միջանցները կլինեն ինտերվալներ:

Յեթե մարդու տարիքի սահմանները վերցնենք մեկ տարեկանից մինչև 100 տ., ապա համաձայն հնգական ինտերվալի կստանանք 20 խմբակ, իսկ տասնական ինտերվալի՝ 10 խմբակ: Վորպես որինակ անհավասար ինտերվալի կարելի է բերել սպառողական կոոպերատիվների խմբավորումն ըստ շրջանառության գումարների. այսպես մինչև 20.000 ուրլի—1. ին խմբակ, 20 հազար ուրլ. մինչև 40.000 ու.—2 ըր խմբակ, 40.000 ու. մինչև 80.000 ու.—3. ըր խմբակ, 80.000 ու. և բարձր—4. ըր խմբակ: Յեթե այստեղ ևս վերցրած լինեյինք հավասար ինտերվալներ, յենթադրենք 10.000-կան, նախ պիտի ունենայինք շատ խմբակներ (վերջին դեպքում իննը փոխանակ չորսի), ապա մի քանի խմբակներում, որինակ՝ 50.000 ու. մինչև 60.000 ու. կամ 60.000 ու. մինչև 70.000 ու. կոոպերատիվների թիվը շատ քիչ կլիներ կամ վոչ մի կոոպերատիվ չեթ լինի, նրանք մասսայական խումբ չեյին կարող կազմել և այդպիսի աղքատ խմբակների մասին մենք հնարավորություն չեյինք ունենա վորևե յեզբակացություն անել: Ինտերվալները հաջող ընտրելու համար լավ ծա-

նոթ պիտի լինել ուսումնասիրվող յերևույթներին: Վորքան փոքր լինեն ինտերվալներն, այնքան շատ կլինեն խմբակները, ուստի և կդժվարանա նրանց ոգտագործումը յեզրակացություններ անելու համար: Նպատակահարմար է այնպիսի ինտերվալներ ընտրել, վոր խմբակների թիվը վորքան հնարավոր է, շատ չլինի: Ինտերվալները կարող են լինել ամբողջ թվեր, ինչպես վերևում են բերված, և կոտորակներ կամ ամբողջ թվեր կոտորակով: Գերադասելի յե, վոր կոտորակները լինեն 0.5: Ինտերվալները կազմելու ժամանակ նկատի յեն առնվում նույն յերևույթների նախկին հետազոտությունների խմբավորումները, վորպեսզի նրանց մեջ համեմատականությունը և շղթան չխախտվի: Այդ նպատակին հասնելու համար, յեթե հնարավոր չե նախկին ինտերվալները նույնությամբ պահպանել, ապա նորի խմբավորումը տալիս են նաև հին ինտերվալներով:

Ամփոփման աշխատանքների մեջ վերջին քայլն է հանդիսանում դասավորված նյութի տվյալների հաշվումն, այսինքն դիտողության միավորների և նրանց հատկանիշների գումարումը:

Հաշվային աշխատանքները բարդ չեն. այդ աշխատանքները կատարվում են շարքային վիճակագրների ձեռքով կամ հատուկ մեքենաների միջոցով: Մտացված գումարները տեղավորում են աղյուսակների մեջ: Խոշոր ցուցակագրությունների կամ հետազոտությունների արդյունքները հրատարակման համար լինում են նախնական և վերջնական: Նախնականը տալիս է հիմնական տվյալների ամփոփումը. նրա նպատակն է ամենակարճ ժամանակում ներկայացնել հասարակությանը միայն հիմնական տեղեկությունները, վորովհետև ծրագրի բոլոր հարցերի մանրամասն անփոփումն յերկար ժամանակ է տևում:

Վերջնական սվյալները տալիս են ծրագրում նախատեսված բոլոր հարցերի լրիվ ամփոփումը:

Վերջին մարդահամարի աշխատանքներն այդպես ել հրատարակվեցին: Նախնական տվյալների որինակ կարող են ծառայել Հայաստանի և Անդրկովկասյան կենտրինականների հրատարակությունները — «Նախնական սվյալներ»:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Աղյուսակները հանդիսանում են վորպես ֆանակական նկարագրության հատուկ մեթոդ: Նրանց միջոցով վորակը վեր է ածվում քանակի, վորովհետև այդ թվերի միջոցով չափվում են հետազոտված յերեվույթները: Բացի դրանից աղյուսակների ոգնությամբ, տալով յերևույթների քանակական պատկերը, մենք կոնկրետացնում և ավելի մատչելի յենք դարձնում նրանց, դրանով տնտեսվում է և մտքի աշխատանքը: Մի քանի աղյուսակները հիման վրա կարելի յե տասնյակ յերեսանոց զրքեր զրքել:

Յեթե թվերը հանդիսանում են վիճակագրության լեզուն, ապա թվեր պարունակող աղյուսակները ներկայացնում են իրենցից վիճակագրական նախադասություններ իրենց յեմքակայով յեվ ստորոգյալով: Վիճակագրական յեմքակայ յեն ընդունվում այն հավաքականությունները, վորոնց մասին խոսվում է աղյուսակի մեջ, իսկ վիճակագրական ստորոգյալ է ընդունվում այն բնութագրությունը վորը տրվում է վիճակագրական յեմքակային: Յենթական և ստորոգյալը տեղավորվում են աղյուսակի կողքերում, ընդհանուր առմամբ յեմքական լինում է ձախ կողմում, իսկ ստորոգյալը վերևում: Բայց տեխնիկական պատճառներով և նյութի ավելի լավ դասավորման նպատակով նրանք կարող են ունենալ նաև հակառակ դասավորում:

Ինչպես յենթակայում, այնպես և ստորոգյալում զբովում են վիճակագրության հետազոտության վերևում հիշված հիմնական ելեմենտները—ժամանակը, տարածությունը և առարկայական հատկանիշները:

Աղյուսակները լինում են պարզ յեվ բարդ: Պարզ աղյուսակների յենթակայում զբովում են ժամանակը կամ տարածությունը: Առաջինի որինակ կարող ե ծառայել սպառողական կոոպերատիվի ցանցը դասավորված ըստ ժամանակի:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՑԱՆՑԸ

Աղյուսակ № 1 *

(Ստորոգյալ)

Ձև կարգի	Առ 1-ն հոկտեմբերի	Թ Ի Վ Ը Առ 1-ն հոկտեմբերի 1928		
		Ընկերությունների	Առևտրական կետերի	Անդամների
		1	2	3
1	1926—27 թ.	81	309	65.740
2	1927—28 թ.	90	366	89.422
3	1928—29 թ.	96	439	112.499

№ 1 աղյուսակի ձախ կողմում, վորպես յենթակա բերված ե ժամանակը, յերեք բյուջետային տարի—1926—27, 1927—28 և 1928—29 թ. թ.: Կարելի յեր վերցնել և ուրիշ ժամկետներ. որինակ՝ ամիսներ, շաբաթներ, որեր, տասնյակ տարիներ և այլն, նայած ծրագրին և նյութերի բովանդակությանը: Յերկրորդ որինակ՝

* «ՀՍԽՀ Սպառկոոպերացիան թվերով» հրատարակություն Հայկոոպի. Յերևան 1929 թ.

Սպառողական կոոպերատիվների ցանցը դասավորված է ըստ տարածության

Աղյուսակ № 2 *

(Ստորոգյալ)

Ձև կարգի	Գ Ա Վ Ա Ռ Ն Ե Ր	Թ Ի Վ Ը Առ 1-ն հոկտեմբեր 1928 թ.		
		Ընկերությունների	Առևտրական կետերի	Անդամների
		1	2	3
1	Յերևանի	15	99	27.324
2	Դարալագյազի	3	13	3.730
3	Դիլիջանի	12	49	11.705
4	Չանգեղուրի	4	37	10.626
5	Եջմիածնի	15	62	14.980
6	Լենինականի	14	82	17.463
7	Մեղրու	2	9	1.414
8	Ն.-Բայազետի	4	26	8.351
9	Փամբակ-Լոռու	27	62	16.506
Ընդամենը՝		96	439	112.499

№ 2 աղյուսակում, վորպես յենթակա, բերված են գավառները: Կարելի յե վերցնել նաև գավառակներ, քաղաքներ, գյուղեր և այլն: Դրանից վորն ընտրել յենթակա, այդ կախված ե նույնպես ծրագրից և նյութերի բովանդակությունից:

Տերրիտորիայով դասավորված աղյուսակներն ավելի յեն տարածված, վորովհետև նրանք հաճախ վարչական և ոպերատիվ մարմինների կարիքներին են ծառայում:

Բարդ աղյուսակներում յենթական բաժանված ե լինում խմբակների ըստ վորոշ հատկանիշների (վորակական կամ քանակական), այն ինչ պարզ աղյուսակներում յերևույթների նույն մասսան ուսումնասիրվում ե ինչ-

* «ՀՍԽՀ Սպառկոոպերացիան թվերով» հրատարակություն Հայկոոպի. Յերևան 1929 թ.

պես մի ամբողջութուն: Բարդ աղյուսակները լինում են խմբակային և կոմբինացիոն: Խմբակային աղյուսակներում ուսումնասիրվող հավաքականությունը բաժանվում է խմբերի մեկ հատկանիշով: Խմբակային աղյուսակի օրինակ է հետևյալ աղյուսակը:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ. ՑԱՆՑԸ

Աղյուսակ № 3

№ ըստ կարգի	Կոոպերատիվների տեսակները	Թ Ի Վ Ը Առ 1-ն հոկտեմբերի 1928		
		Ընկերությունների	Խանութների	Անդամների
1	Բանվորական			
2	Քաղաքային			
3	Գյուղական			
	Ընդամենը			

Այս աղյուսակում խմբակները կազմված են ըստ վտարակական հատկանիշի, այն է ըստ կոոպերատիվների տեսակների—նրանց անդամների սոցիալական կազմի:

Դասավորելով նույն անդակություններն ըստ շրջանառության գումարների, կատանանք նույնպես խմբակային աղյուսակ, բայց ըստ քանակական հատկանիշի օրինակ № 4 աղյուսակը:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՑԱՆՑԸ ԸՍՏ ՇՐՋԱՆԱՍՈՒԹ.

Աղյուսակ № 4

№ ըստ կարգի	Շրջանառութ. ուղղություն	Թ Ի Վ Ը Առ 1-ն հոկտեմբերի 1928		
		Ընկերությունների	Խանութների	Անդամների
1	Մինչև 20 000			
2	20 000 — 40.000			
3	40 000 — 80.000			
4	80.000 և ավելի			

Այս աղյուսակում մի վորոշ հավաքականություն — կոոպերատիվ ընկերությունները բաժանված են խմբակների ըստ նրանց շրջանառության գումարների: Վերջին յերկու խմբակային աղյուսակների (№№ 3 և 4) բովանդակության կողմից հարուստ լինելը, համեմատած առաջին յերկու պարզ աղյուսակների հետ (№№ 1 և 2), ակնհայտ է:

Խմբակային աղյուսակից ավելի հարուստ և բովանդակալից է այդ տեսակետից կոմբինացիոն աղյուսակը, վորը հանդիսանում է խմբակային աղյուսակի զարգացումը: Այստեղ յենթական խմբավորվում է վոչ թե մեկ հատկանիշով, ինչպես խմբակային աղյուսակում, այլ միաժամանակ 2, 3, հազվագյուտ դեպքում նույնիսկ 4 հատկանիշով: Թվով ավելի խմբավորումը նպատակահարմար չէ, քանի վոր աղյուսակը կկորցնի իր պարզությունը, այն հիմնական հատկությունը, վորի համար կոչված է հենց ինքը աղյուսակը: Բացի դրանից, պետք է նկատի ունենալ և այն, վոր կոմբինացիոն աղյուսակներում խմբակների վերջին թիվը, վորով նյութը վերջնականապես խմբավորվում է, հավասար է վերջնից խմբերի թվի և վերջին հատկանիշով խմբավորման թվի արտադրյալին. այսպես, ասենք, նյութն առաջին հատկանիշով բաժանված է յերեք խմբի, յերկրորդ հատկանիշով այդ խմբերից ամեն մեկը չորս յենթախմբի, յերրորդ հատկանիշով ամեն մի յենթախումբը հինգ խմբակի, ապա խմբակների թիվը կլինի 60 (3.4.5=60): Յեթե խմբակների թիվը խիստ շատ է լինում, ամեն մի խմբակում այնքան քիչ միավոր է մնում, վոր կորչում է նրանց մասսայական բնույթը և նրանց մասին դժվար է լինում վորևէ յեզրակացություն հանել:

Կոմբինացիոն աղյուսակների խմբավորման հատկանիշները կարող են լինել և վորակական և քանակական,

կամ մեկը վորակական, մյուսը քանակական, ինչպես և № 5 աղյուսակը, վորը կազմված է յերրորդ և չորրորդ աղյուսակների միացումից, այսինքն՝

ԱՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՑԱՆՑԸ

Աղյուսակ № 5

Կոոպերատիվի տեսակները	Շրջանառութիւնը (սուբլիններով)	Թ Ի Վ Ը		
		Ընկերութիւններ	Խանութներ	Անդամներ
Բանվորական	Մինչև 20.000			
	20.000—40.000			
	40.000—80.000			
	80.000 և ավելի			
Քաղաքային	Մինչև 20 000			
	20.000—40.000			
	40.000—80.000			
	80.000 և ավելի			
Յեվ այլն				

Այստեղ սպառողական կոոպերացիայի նույն ցանցը խմբավորված է միաժամանակ յերկու հատկանիշով, նախ ըստ նրանց տեսակների—վորակական հատկանիշի, ապա նրանցից ամեն մեկը ըստ շրջանառութիւնի գումարի—քանակական հատկանիշի: Յեթե առաջին խմբավորումը բնորոշում է մասսան ըստ սոցիալական ներքին կազմի, այսինքն ինչպիսի սոցիալական խմբակներից է նա բազմակացած, յերկրորդ հատկանիշը բնորոշում է նույն մասսայի սոցիալական առանձին խմբակների տրնտեսական ուժը: Դրանով հնարավորութիւն է ստացվում պարզել կոոպերատիվների սոցիալական բնույթի ազդեցութիւնը նրանց տնտեսական գործունեութիւնի վրա:

Այդ խմբակների մեջ մտնող կոոպերատիվները հավասար չեն միմիանց, տարբեր են նրանց սոցիալական բնույթը և շրջանառութիւնը, տարբեր պիտի լինեն և նրանց անդամների թիվը, պահանջները, վերադիր ծախսերը և այլն և այլն:

Այդ բոլորի հիման վրա պարզ պիտի լինի խմբակային և կոմբինացիոն աղյուսակների խոշոր նշանակութիւնը գնահատան անալիտիկ աշխատանքների համար: Նրանք հնարավորութիւն են տալիս խմբավորման միջոցով յերկրորդական գործոնների ազդեցութիւնը թուլացնել, մեկուսացնել հոգուտ հիմնական գործոնների, վորպեսզի վերջիններիս ազդեցութիւնը յերևան գա:

Յենթեական խմբավորելիս աղյուսակ կազմելու համար խմբավորման հատկանիշի ընտրելը կարևոր աշխատանք է, վորովհետև այդ հատկանիշով ամփոփվում է ամբողջ նյութը. խմբավորման հիմքի կամ հատկանիշի ընտրելը պահանջում է մեծ ծանոթութիւն նյութերի հետ, ընդհանուր պատրաստականութիւն, նաև վիճակագրական փորձ և հմտութիւն:

Խմբավորման հիմք պիտի ընտրել խոտոր նշանակութիւն ունեցող գործոններ, վորոնց դերը մեծ է սովյալ տնտեսութիւնների կամ ձեռնարկութիւնների կյանքում:

Այդպիսի գործոններ են հանդիսանում գյուղատնտեսական վիճակագրութիւնի մեջ հողերի և ցանքի տարածութիւնը, բանող անասունների քանակը, բանվորական ուժը և այլն. արդունաբերական վիճակագրութիւնի մեջ—արտադրութիւնը, բանվորական, մեխանիկական ուժերի քանակը և այլն:

Վիճակագրական պարզ, խմբակային և կոմբինացիոն աղյուսակներից տարբերվում են պարզ, խմբակային յեվ կոմբինացիոն սյունյակները: Յեթե յենթեական, խմբավորվելով, տալիս է պարզ, խմբակային և կոմբինացիոն

աղյուսակներ, ստորոգյալը, խմբավորվելով ըստ գանա-
զան հատկանիշների, տալիս է պարզ, խմբակային և կոմ-
բինացիոն սյունյակներ հետևյալ տարբերությամբ. ստոր-
ոգյալը, չունենալով այն խոշոր նշանակութունը, ինչ յեն-
թական, ամեն մի հատկանիշի ավելացումով տալիս է միա-
վորի նկատմամբ մի նորմանրամասնութուն և չի ստեղ-
ծում վորևէ նոր հավաքականութուն, ինչպես ստեղծում
է ամեն մի նոր հատկանիշի ավելացումը յենթակայումս:

Այդ իսկ պատճառով նախ այստեղ կարելի չէ ավե-
լացնել նույնիսկ վոչ խոշոր արժեք ունեցող հատկանիշ-
բացի դրանից անհաջող հատկանիշի ընտրության դեպ-
քում նրան կարելի չէ անուշաղիթ թողնել առանց վնասե-
լու աղյուսակը, այն ինչ յեթե նման անհաջողութուն
ունենա յենթական, կտուժի ամբողջ աղյուսակը:

ԱՄՓՈՓՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Ինչպես ամփոփման ամբողջ ծրագիրը համաձայնեց-
նում են հետազոտման ծրագրի հետ, նույնպես և ամ-
փոփման տեխնիկան պայմանավորվում է հետազոտման
տեխնիկայով:

Յեթե տեղեկութունները հավաքված են fւրսային
նեվով, բոլոր քարտերը դասավորում են՝ պարզ և խմ-
բակային աղյուսակներ ստանալու համար համաձայն ամ-
փոփման ծրագրի պահանջին՝ ըստ ժամանակի, կամ տարա-
ծության կամ մեկ խմբակային հատկանիշի. իսկ կոմբի-
նացիոն աղյուսակ ստանալու համար բոլոր քարտերը նախ
դասավորում են վորոշ խմբակների, ապա ամեն մի խմ-
բակն իր հերթին դասավորում են ըստ հետևյալ հատկա-
նիշի: Դասավորման աշխատանքներն ավարտելուց հետո
ամեն մի խմբակում հաշվում են միավորների քանակը և
գումարները՝ դնում ամփոփման աղյուսակի մեջ:

Ամփոփման հիմնական պահանջն է աշխատանքն

այնպես տանել, վորպեսզի կրկնակի աշխատանք չկա-
տարվի, իսկ այդ նպատակին հասնելու համար պահանջ-
վում է, վոր ամեն մեկ խմբակի դասավորումը բղխի
մյուսից, մեկը մյուսի շարունակութունը լինի:

Յեթե տեղեկութունները հավաքված են ցուցակա-
քին նեվով, նրանց ամփոփելու համար անհրաժեշտ է
կամ տեղեկութունները ցուցակից տեղափոխել առան-
ձին քարտերի վրա, վորոնք կոչվում են Ֆիեկաներ (փոք-
րի՛ ծավալով առանձին քարտեր) կամ ամփոփել նշաննե-
րի, ինչպես ռուսերեն են ասում, ԵՏԻԽԵԼՈՎԿԱՅԻ միջո-
ցով, Ֆիշկայի դեպքում ցուցակի մեջ նշանակված ամեն
մի միավորի համար նորից կազմում են առանձին քարտ-
մի խոսքով ցուցակը վեր է ածվում քարտերի:

ԵՏԻԽԵԼՈՎԿԱՆ այն է, վոր ցուցակից քաղում են
հարկավոր տեղեկութունները և նշում մի ուրիշ գծված
թղթի վրա, վորը հաճախ ունենում է նույն ստորոգյալը,
ինչ վոր ամփոփման վերջնական ձևի աղյուսակը, մի-
այն ավելի լայն ծավալով: Այդ աղյուսակների մեջ հա-
մապատասխան սյունյակում նշանակում են ամեն մի
դեպքը. որինակ,

իզական | | | | | = 6:

արական | | | | | | = 7:

Կարելի չէ նույնը խաչերով նշանակել. որինակ,
դյուղական կոոպերատիվները + + + + + + + = 8
քաղաքային կոոպ. + + + = 3: Հետագայում հաշվումը
հեշտացնելու համար, ամեն մի 5-րդ նշանին տրվում է
հակառակ ուղղութուն, ներկա դեպքում կստացվի հե-
տևյալը + | - | - | - | - |: Յեթե ամփոփվում են քանակական հատ-
կանիշները, նպատակահարմար է հենց թվերը կրկնել. որի-
նակ, պետք է ամփոփել 1, 2, 3 և ավելի հեկտար ցանք
ունեցող անտեսութունները. վարվում են այսպես.

Մինչև 1 հեկտար	1-ից—2 հեկտ.	2-ից—3 հեկտ.	3-ից ավել
	2 2 2 2 2	3 3 3 3	4 4 4
=20	2 2 2 2=9	3 3 3=7	=3


Նման ձևը վորոշ չափով կզգուշացնի այնպիսի սըխալներէրց, յերբ միավորը մեկ խմբակից ընկնում ե մյուս խմբակը: Այդ ձևերը պարտադիր չեն և կախված են ամեն մի աշխատակցի սրամտութիւնից, փորձառութիւնից և աշխատանքների հարմարութիւնից: Տեղեկութիւնները հարցացուցակից աղյուսակի վրա տեղափոխելուց հետո հաշվում են դեպքերի քանակը և կազմում ամփոփման աղյուսակը:

Քարտային ձեւի առավելութիւնները քարտային ձևի հարցաթերթը հարմարութիւն ունի, ինչպես վերելում ասացինք, ավելի շատ հարցեր պարունակելու, քան ցուցակը. բացի դրանից նյութերը բարդ ձևով (խմբակային և կոմբինացիոն) մշակելիս քարտային ձևը թույլ ե տալիս նյութերը ազատ խմբավորել համաձայն ծրագրում ունեցած հարցերի: Քարտերի դասավորումը կարելի յե կատարել բոլոր ցանկացած կոմբինացիաներով առանց վորևե դժվարութիւնների:

Յուցակային ձեւի առավելութիւնն այն ե, վոր հենց այդ ցուցակի վրա կարելի յե ամփոփում կատարել, յեթե ուզում ենք նյութը պարզ ձևով մշակել: Սակայն ցուցակային ձևը վոշ մի հարմարութիւնն չունի նյութը բարդ ձևով մշակելու համար: Այդ հանգամանքը ստիպում ե դիմել ֆիշկաների կամ շարիխելովկայի ձևին:

Աշխատանքները թեթեացնում ե շարիխելովկան, բայց միայն վորոշ չափով. այդտեղ կա մի անհարմարութիւն. սխալի դեպքում ամբողջ աշխատանքը պիտի կրկնել, վորովհետև ուրիշ կերպ սխալը չի կարելի գտնել: Հիշենք՝

վոր այդ յերկու հիմնական ձևերից, քարտից և ցուցակից կազմում են յերկու կոմբինացիոն ձև, վորոնք միացնում են յերկուսի առավելութիւնները: Դրանցից առաջինը իրենից ներկայացնում ե նույն քարտը, ինչպես վերևում ծանոթացանք, միայն հարցերը դասավորում են նրա կողքերից այնպես, վոր մի թերթիկը մյուսին կցելիս ստացվում ե ցուցակ, վորը հարմար ե նաև հաշվելու և գումար տալու համար. որինակ, այս թերթիկը. քարտերը կցվում են միմյանց այնպես, վոր ամեն մի քարտի AB



գիծը անցնում ե նախորդի CD գծի վրայով, իսկ AE ե BF գծերը միանում են նախորդի նույն գծերին:

Քարտերի այդ դասավորումից ստացվում ե ցուցակ, վորով և հեշտանում ե գումարներ տալու աշխատանքը:

Հակառակ ուղղութիւնով ե կազմվում յերկրորդ կոմբինացիան— Ժապավենի ձևի թերթը: Այստեղ, ինչպես վերևում եր ասված, հիմք ե ընդունվում ցուցակային ձևը, վորը լցնելուց հետո խմբավորելու դեպքում մկրատով կամ հատուկ տեղերով (մեքենայով նշանակած գծով) կտրատում են. ստացվում են առանձին քարտերային քանակի, վորքան միավորներ կան վրան տեղավորված: Ստանալով այդ ցուցակից առանձին քարտեր, այնուհետև նրանց հետ խմբակներով ամփոփելիս վարվում են այնպես, ինչպես

քարտային ձևի հետ. խմբակներում գումարների ստացումը հեշտացնելու համար այդ քարտերը նորից կցում են միմիանց, վորից և ստացվում է նախկին ցուցակը:

Ամփոփման աշխատանքներն ևս կարող են հրահանգչական ցուցմունքների, վորի համար և մշակվում է հատուկ հրահանգ, վորովհետև դժվարությունների յեն հանդիպում վոչ պակաս չափով նաև անփոփման ժամանակ, մանավանդ նյութերը քննադատելիս և նշելիս: Ինչպես հետազոտման, նույնպես և ամփոփման ժամանակ կարևոր նշանակություն ունի այդ դժվարությունների միասեսակ լուծումը: Հրահանգն է, վոր գալիս է այդ դժվարությունների միատեսակ լուծումը ապահովելու: Բացի զրանից հրահանգում նախատեսնվում է նաև ամփոփման ամբողջ տեխնիկան:

Ամփոփման հրահանգը մշակվում է նույն ձևով և կարգով, ինչպես հետազոտության հրահանգը:

ՀԱՇՎԵԼՈՒ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄԸ*

Յեթե աշխատանքների ծավալը մեծ է որչեկտների քանակի տեսակետից, ապա այդ աշխատանքների մեքենայացումը կարևոր խնդիրներից մեկն է: Մեքենայացման առավելությունները պարզ են նյութական սնտեսման, ժամանակի խնայողության և արդյունգների ավելի սուլյգ լինելու տեսակետից:

Վիճակագրական աշխատանքների մեքենայացումը լայն ծավալ է ստացել արտասահմանում, առանձնապես Ամերիկայում, և սուր կերպով դրված է Խորհրդ. Միության մեջ: 1929 թվի սկզբից կազմակերպված է Անդրկենսովիճվարին կից հատուկ մեքենայացման բաժին, վորտեղ դրված են մեկ կոմպլեկտ ամերիկական հաշվեմեքե-

* Մանրամասնությունը տես՝ Վ. Чихладзе. „Механизация статистики“. статистик. обозрение ЗЦСУ. № 1 1929 г.

նանք՝ «Պաուերս» և «Գուլերիտ» սիստեմի: Նրանցից մի քանիսը էլեքտրական արիֆմոմետրներ են, վորոնք փոխարինում են ձեռքի արիֆմոմետրներին: Ելեքտրական արիֆմոմետրները «Մոնրոե» և «Արխիմեդուս» աշխատում են 32 մոմանսց ուժի շարժիչով: Նրանք կատարում են թրվաքանական 4 գործողություն և հանում են կշռված միջինը, իսկ «Բեռոս» սիստեմի մեքենան տալիս է հորիզոնական և ուղղահայաց ուղղությամբ գումարները, միաժամանակ տպելով այդ գումարները: Մեքենաների մյուս փմբակը «Պաուերս» սիստեմի տալիս է հաշվումը հասարակ և կոմբինացիոն ձևով: Վիճակագրական տվյալներն այդ նպատակով նախ տեղափոխվում են հատուկ վարտոնից պատրաստած քարտերի վրա, վորոնց վրա ծակեր են անում (պերֆորացիա): Պերֆորովկայից հետո տեսակավորում են (սորտիրովկա) նույնպես հատուկ մեքենայի միջոցով: Տեսակավորելուց հետո ամփոփում և ասուգում են նույնպես հատուկ մեքենայի միջոցով:

Մեքենայական ուժի կարիքը մեծ է առհասարակ հաշվառման բոլոր ձևերի (և վիճակագրական և հաշվապահական) խոշոր ծավալով աշխատանքերի համար:

Ընկ. Զիխլաձեյի հողվածից յերևում է, վոր 6928 սուբրիանոց աշխատանքն այդ մեքենաների միջոցով կատարելիս նստում է 3560 ո. և յերեք անգամ քիչ ժամանակ է խլում, քան այդ ստացվում է ձեռքի արիֆմոմետրի միջոցով, չհաշված աշխատանքի վորակը, նրանց ավելի ստույգ արդյունքները:

Աշխատանքների մեքենայացման հետ են կապված հարցաթերթերի մշակման կենտրոնացած և ապակենտրոն սիստեմները:

Նյութերի մշակման կենտրոնացած ձևն այն է, յերբ ամփոփումը կատարվում է այնտեղ, վորին պատկանում է հետազոտության նախաձեռնությունը:

Մեր հանրապետութեան համար կենտրոն են հանդիսանում Թիֆլիսը կամ Երևանը:

Ապակեմսրոնացած ձևն այն է, յերբ նյութերն ամփոփվում են տեղերում. մեր պայմաններում—Յերևանում: Մեր գավառների նկատմամբ այդ խնդիրը, յեթե ընդունենք վորպես ընդհանուր սկզբունք, ներկայիս գործնական նշանակութիւնն չի կարող ունենալ:

Յեթե Միութեան մեջ ներքին նահանգների նկատմամբ, թեկուզ և խոշոր, այդ խնդիրը այժմ առանձինքնույթ չի ընդունել, ապա Միութեան մեջ մանող հանրապետութիւնների համար նա դեռ իր արժեքը շարունակում է պահպանել: Այդ յերկու ձևերն էլ ունեն իրենց առավելութիւններն և թերութիւնները:

Մեծ գոլուշութիւն և փորձ է պահանջում վիճակագրական աղյուսակների յենթակայի և ստորոգյալի խմբագրութիւնը, վորը մատչելի պիտի լինեն նույնիսկ ամեն մի գրագետ մարդու: Անկախ դրանից աղյուսակի վերնագրի խմբագրութիւնը պիտի ճիշտ արտահայտի աղյուսակի բովանդակութիւնը: Վորպես անհաջող խմբագրութեան որինակ կարող ենք ցույց տալ Հայկենտվիճվարի 1925 թ. տեղեկատուի 18 յերեսում բերված № 16 աղյուսակը, վորի վերնագիրն է «Բանվորների թիվը Հայաստանում» և աղյուսակի մեջ ցույց է արված 27.419 հոգի, այնինչ Հայաստանում այդքան բանվոր չէ կար այդ թվականին: Բանն այն է, վոր այդտեղ բերված է բանվորների հետ և նրանց ընտանիքների շնչերի քանակը, հետևապես վերնագիրը պետք է լիներ այսպես, «Բանվորների և նրանց ընտանիքների շնչերի թիվը Հայաստանում»:

Վիճակագրական նյութերն ոգտագործողների թիվը ներկայումս մեծացել է, իսկ մեր յերկրում նրանց թիվումն են լայն մասսայական խավերը—բանվորներն ու գյուղացիները: Վիճակագրական աղյուսակներն այդ խա-

վերի համար ևս մատչելի դարձնելու նպատակով կարելի է նրանց կցել բացատրականներ, վորոնք պարզաբանում են նյութերի աղբյուրները, մշակման ձևերն և ըսկզբունքները, տվյալների արժեքն ու նշանակութիւնը և այլն: Այդ բացատրականները կանխում են այն թիւրիմացութիւնները և սխալները, վոր հաճախ անում են այդ տվյալների ոգտագործողները: Աղյուսակներին կից բացատրականների անհրաժեշտութիւնն այժմ ընդունում են շատերը, և այդ որինակին են հետևել Հայկենտվիճվարն ու Աշխատանքի վիճակագրութեան բյուրոն վերջին հրատարակութիւնները կատարելիս, վորտեղ բացատրականները մեծ տեղ են բռնում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԳ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՅԻՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Հավաքած տեղեկություններն ամփոփելով և աղյուսակներում զետեղելով, հոլմ նյութերը միայն բացարձակ թվերի յեն վերածում: Այդ տեղեկությունները կոչվում են բացարձակ կամ արսույլուս մեծություններ: Նրանք ծառայում են զանազան ինֆորմացիոն կարիքների, բայց հարմար չեն գործնական և անբավարար են զիտական նպատակների համար:

Որինակ՝ 1927 թ. մահացության դեպքեր յեղել են Յերևանում 1204, Լենինականում 803, Վաղարշապատում 204, Նոր-Բայազետում 164, Ղարաքիլիսայում 107, Դիլիջանում 75, Գորիսում 47:

Այդ բացարձակ տվյալները տարբեր մեծություններ են ցույց տալիս. Յերևանում շատ, Լենինականում քիչ և այլն, բայց վորտեղ է մահացությունը մեծ, բացարձակ մեծությունները տրված հարցին չեն պատասխանում, քանի վոր այդ քաղաքների ազգաբնակչության քանակները տարբեր են: Յերևանում մահացության դեպքերը շատ են, բայց չե վոր նրա բնակչությունն էլ ավելի շատ է, քան մյուս քաղաքներում. նույնն էլ Լենինականի մասին կարելի յե ասել, յեթե համեմատելու լինենք Ղարաքիլիսայի կամ մյուս քաղաքների հետ: Ասածից պարզ է, վոր դրված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է այդ բոլոր քաղաքների մահացության

դեպքերի բացարձակ տվյալները համեմատել նույն քաղաքների ազգաբնակչության քանակի հետ: Վերջին նպատակին հասնելու համար պահանջվում է բացարձակ տրվյալները վորոշ լրացուցիչ մշակման յենթարկել, նրանցից դուրս բերել մի նոր տեսակ մեծություններ, վորոնք կոչվում են արսադրյալ մեծություններ: Արտադրյալ մեծությունները հարաբերական կամ միջին մեծություններն են, իսկ այն գործողությունը, վորի նպատակն է ստանալ հարաբերական կամ միջին մեծություններ, կոչվում է հաշվային մշակում:

Արտադրյալ մեծությունները բավականին տարածված են: Նրանք պարզեցնում են վիճակագրական խալտարդեա բացարձակ մեծությունները, հեշտացնում են նրանց համեմատությունը և նրանցից յեզրակացություններ հանելը:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաւարեւական մեծությունները ստացվում են, յերբ համադրում են միմյանց հետ վիճակագրական մասսաները ժամանակի և տարածության մեջ. յեթե բազմատարբ են այդ մեծությունները, նրանց մի ընդհանուր հայտարարի յեն բերում: Ինչպես անունն է ցույց տալիս, հարաբերական մեծությունների միջոցով մեկ հավաքականությունը համեմատում են մյուսի հետ, ընդ վորում նրանցից մեկը վերցնում են վորպես հիմք մյուսի համար: Իբրև հիմք վերցնում են մեկ միավորը կամ ընդհանրապես մեկ միավորը զրոների հետ միասին (1, 10, 100, 1000 և այլն): Դրանցից վորն ընտրել հիմք, նույնպես կախված է նյութի բնույթից. որինակ, զրագիտության, ծննդի, մահացության, աճեցողության, ինքնասպանության և նման յերևույթների կոեֆֆիցիյենտները վորոշելիս հարմար է հիմք վերցնել 1000 կամ ավելի բարձր թիվ, վորպեսզի կոեֆֆիցիյենտը շատ փոքր թիվ չստացվի: 1000-ը և ավելի բարձր հիմքերը տարած-

Ված են ժողովրդագրական վիճակագրության մեջ, 100 ը մնացած վիճակագրություններում: Յերբ հարյուրն է հիմք, գրվում է $\frac{0}{100}$ և կոչվում է տոկոս. հազարը գրվում է $\frac{0}{1000}$ և կոչվում է պրոմիլ. տասնազարը գրվում է $\frac{0}{10000}$. մնացած դեպքերում գրվում են բառեր. որինակ, ասում են ամեն մեկ 100.000 ին կամ միլիոնին գալիս է այս ինչ քանակը:

Հարաբերական մեծությունները ստացվում են հետևյալ տեսակի համեմատություններից.

1. Մասայի մի վորո՞ւ մասի համեմատությունը ցրա մյուս մասի հետ. որինակ, ազգաբնակչության նկատմամբ, ծնված աղջիկների թիվը ծնված տղաների թվի հետ: Այդ համեմատությունը ցույց է տվել, վոր յեվրոպական յերկրներում ամեն 100 ծնված տղային գալիս է 105 կամ 106 ծնված աղջիկ:

2. Վորո՞ւ մասի համեմատությունը իր ամբողջ մասայի հետ. որինակ, կոոպերացիայի առևտրական շրջանառությունը յերկրի ամբողջ առևտրական շրջանառությունից հետ, վորը Հայաստանում 1927—28 թ. կազմում էր 50,0 տոկոս:

3. Միյեվնույն մասայի համեմատությունը միյեվնույն տեղում, բայց տարբեր ժամանակում. որինակ, Հայաստանի ազգաբնակչության քանակը առ 1-ն հունվարի 1929 թ. և առ 1-ն հունվարի 1930 թ. կամ միյեվնույն ժամանակում, բայց տարբեր տեղերում. որինակ, այս որվա հացի գինը Յերևանում և Լենինականում:

4. Տարբեր մասաների համեմատությունը միմյանց հետ, վորը պրոֆ. Վիլսոնյանի անվանում է կոորդինացիա. որինակ, յեթե համեմատում են ազգաբնակչության քանակը յերկրի տարածության հետ խառնությունը պարզելու համար. ազգաբնակչության քանակը բանոց անասունների թվի հետ պարզելու, յե ազգաբնակչությունը ինչ չափով ապահովված է բանոց անասուններով:

5. Հատուկ խումբ են կազմում այն հարաբերական մեծությունները, վորոնք յերևույթների հաճախականություն են պարզում, յեբվույթների համեմատությունը ցրան արտադրող միջավայրի նկատմամբ. որինակ, հանցագործների թիվը հանցագործության ընդունակ տարիքի ազգաբնակչության թվի հետ են համեմատում. ծննդի դեպքերի քանակը ազգաբնակչության համապատասխան թվի հետ և այլն: Նման հարաբերական թիվը կոչվում է նաև կոեֆֆիցիյենտ որինակ, ասում են մահացություն կոեֆֆիցիյենտ, ծննդի կոեֆֆիցիյենտ և այլն:

Հարաբերական մեծությունները դուրս բերելու համար պահանջվում է վորոշ պայմանների ներկայություն. որինակ, բացարձակ մեծություններն իրենց եյությունը, ժամանակի և տարածության տեսակետից, պետք է լինեն համեմատելի: Մկզբունքներ բոլոր դեպքերի համար չի կարելի տալ, քանի վոր նրանք բաղմաթիվ են, զանազան նպատակների յեն ծառայում, զանազան կոմբինացիաներով կարելի յե նրանց համեմատությունը կատարել և այդ կախված է նյութերի բնույթից: Բայց կարելի յե մի քանի դիտողություններ անել: Քաղաքի պայմանների ազդեցությունը մահացության դեպքերի հաճախությունից վրա, համեմատած գյուղի պայմանների հետ, պարզելու համար, չի կարելի վերցնել այն համեմատությունը, յե ամեն մի 1000 բնակչին ինչքան մահացության դեպքեր են ընկնում քաղաքում և գյուղում. համեմատություն այդ ձևը կտա շատ կոպիտ արդյունք, վորովնետև քաղաքում կան հիվանդանոցներ, գյուղերից շատ են գալիս քաղաք հատուկ բժշկական ոգնություն համար, գյուղերից քաղաք են գալիս հասակավորները աշխատանքի և այլն. նման հանգամանքներն, արհեստական կերպով բարձրացնելով մահացության թիվը քաղաքում, խանգարում են մեզ հետաքրքրող հարցի պատկերը ճշտությունը պարզել: Տվյալ դեպքում խնդրին ճիշտ

լուծում տալու համար անհրաժեշտ է յերկու վայրերի համար ել վերցնել կարելույն չափ բոլոր տեսակետներից միատարր մասսաներ—միևնույն հասակի, զբաղմունքի, նույնիսկ սոցիալական խմբակի խավեր և այլն։ Այդ ձևով մեկուսացրած կլինենք արտաքին գործոնները ազդեցությունը հոգուտ հետաքրքրող գործոնի, վերցնենք մի ուրիշ որինակ, Հայաստանի ներկա ազգաբնակչության քանակը խաղաղ ժամանակվա ազգաբնակչության հետ համեմատելու համար անհրաժեշտ է այդ յերկու մասսայի սահմանները համեմատելի դարձնել, այսինքն խաղաղ ժամանակվա համար ևս պիտի վերցնել ներկայիս սահմանները։

Այդ պահանջների կատարումը անհնարին լինելու դեպքում, մանավանդ, յեթե նյութն արխիվային բնույթ է կրում, անհրաժեշտ է բացատրականների միջոցով ընթերցողին ծանոթացնել յեղած բոլոր շեղումների հետ, վոր նա տվյալներն ոգտագործելիս հաշվի առնի այդ հանգամանքները։

ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտադրյալ մեծությունների մյուս տեսակն են կազմում միջին թվերը, վորոնք ստացվում են վորակով միասեռակ, բայց ֆանակով արբեր մեծություններից։ Միջինների դերը վիճակագրական աշխատանքների մեջ նույնպես մեծ է։ Մասսաների քանակական բնութագիրը հակիրճ և պարզ ձևով տալիս են միջին թվերը։

Միջին մեծությունները լինում են թվաբանական և յերկրաչափական։ Մրանցից յուրաքանչյուրը լինում է պարզ և կշռված։

1. Պարզ թվաբանական միջինը ստանալու համար հարկավոր է տվյալների կամ վարիանտների գումարը

բաժանել վարիանտների քանակի վրա (վարիանտը—դա միևնույն յերևույթի մի քանի տեսակ փոփոխությունն է. այդ մասին մանրամասն կխոսվի ներքևում վարիացիոն շարքին ծանոթանալիս)։ Որինակ, զանազան տնտեսություններից բամբակի բերքի մասին ստացված են հետևյալ տեղեկությունները.

Առաջինը	մեկ հեկտարից հավաքել է	4	ցենտները
Յերկրորդը	»	»	5
Յերրորդը	»	»	6
Չորրորդը	»	»	7
Հինգերորդը	»	»	8
Վեցերորդը	»	»	9

Այս բոլոր տնտեսությունների համար միջին բերքը մեկ հեկտարից հավասար կլինի 6,5 ցենտների, վորովհետև բոլոր վարիանտների (4+5+6+7+8+9) գումարը հավասար է 39 ի, վորը բաժանած վարիանտների թվի վրա (6 ի) տալիս է 6,5: Հասարակ միջինը հեշտ է դուրս բերել, դրա համար էլ նա վիճակագրական աշխատանքներում ավելի յե ընդունված։

2. Կռված թվաբանական միջինը ստանալու համար հարկավոր է ամեն մի վարիանտը թագմապատկել իր կշիռի վրա և ստացած արտադրյալների գումարը բաժանել կշիռների գումարի վրա։ Պարզենք որինակով, յենթադրենք, վերևում բերված ցուցմունքների քանակը կամ տնտեսությունների թիվը ևս հայտնի յե, այդ գյուղում դրանց թիվը 24 է. այսպես՝

4	ցենտ. բերք ստացած տնտեսութ. թիվը է՝	2	նրանց բերքը միասին =	8	ց.
5	»	»	»	6	»
6	»	»	»	7	»
7	»	»	»	4	»
8	»	»	»	3	»
9	»	»	»	2	»
				24	»
				=150 ց.	

Այս 24 տնտեսությունների համար միջին բերքը

մեկ հեկտարից հավասար է (150 ցենտ. բաժանած 24) = 6,25. Այստեղ ամեն մի վարիանտը (4, 5, 6 ...) շարքի մեջ մասնակցում է վոչ թե հավասար իրավունքով, ինչպես այդ տեսանք պարզ միջինը դուրս բերելու ժամանակ, այլ իր տեսակարար կշիռով, վորն առաջին վարիանտի համար հավասար է 2 ի, յերկրորդի—6 ի, յերրորդի—7 ի և ընդ

Այդ բարդ շարքը կարելի յե պարզ շարքի վերածել. կատարելի հետևյալ շարքը. 4, 4, 5, 5, 5, 5, 5, 5, 5, 5, 6, 6, 6, 6, 6, 6, 7, 7, 7, 7, 8, 8, 8, 9, 9, վորից կարելի յե թվաբանական պարզ միջինը հանել, ինչպես հանել ենք առաջին անգամ:

3. Յերկրաչափական ձեվով պարզ միջինների դուրս բերելու հալաք հարկավոր է վարիանտների արտադրյալից հանել արմատ, աստիճան ընդունելով վարիանտների թիվը. որինակ, նույն 4, 5, 6, 7, 8 և 9 շարքի համար միջինը հավասար է $\sqrt[6]{4 \cdot 5 \cdot 6 \cdot 7 \cdot 8 \cdot 9} = 6,27$: Նույնը լոգարիթմների միջնոցով ստանալու համար հարկավոր է այդ վարիանտների լոգարիթմի գումարը բաժանել վարիանտների թվի վրա և ստացված միջին լոգարիթմով գանել նրա համապատասխան թիվը:

Լոգարիթմների գումարը կազմում է 4,781, բաժանած նրանց թվի վրա (6 ի) կտա 0,797, իսկ վերջինիս թիվը է 6,27, վորը և հանդիսանում է յերկրաչափական միջինը:

4. Յերկրաչափական կռված միջինը դուրս բերելու համար նախ յուրաքանչյուր վարիանտ բարձրացնում են աստիճանի, ընդունելով նրա կշիռը վորպես աստիճան, ապա գտնում են նրանց արտադրյալը, վորից և հանում են արմատ, իսկ արմատի համար աստիճան են ընդունում կշիռների գումարը, որինակ՝ $\sqrt[24]{4^2 5^6 6^7 7^4 8^3 9^2} = 6,09$: Նույնը լոգարիթմով $\frac{1}{24} (2 \lg 4 + 6 \lg 5 + 7 \lg 6 + 4 \lg 7 + 3 \lg 8 + 2 \lg 9) = \frac{1}{24} (1,204 + 4,194 + 5,446 + 3,380 + 2,709 + 1,908) = 18,841:24 = 0,785 = 6,09$, վորը

հանդիսանում է վորպես յերկրաչափական կռված միջինը: Յերկրաչափական միջինի առավելութունը, համեմատած թվաբանականի հետ, այն է, վոր յերկրաչափական ձևը վարիանտների շարքում ցածր և բարձր անդամների ազդեցութունը միջինի վրա թուլացնում է: Դրանում հեշտ է համոզվել, յեթե համադրելու լինենք այդ յերկու ձևով վերևում դուրս բերված միևնույն շարքի միջինները. թվաբանական պարզ միջինն էր 6,5, իսկ յերկրաչափական՝ 6,27: Թվաբանական կռված միջինն էր 6,25, իսկ յերկրաչափականը 6,09: Կատարված գործողութունները ցույց են տալիս, վոր թվաբանական միջինի համար կշիռը հանդիսանում է բազմապատկիչ, իսկ յերկրաչափական միջինի համար աստիճանացույց:

Յերկրաչափական ձևը, բարդ լինելու հետևանքով, համեմատած թվաբանականի հետ, վիճակագրական աշխատանքների մեջ քիչ է գործածվում: Նա լայն կիրառով կիրառվում է դների վիճակագրության մեջ ինդեկսներ դուրս հանելիս:

ՄԻՋԻՆՆԵՐԻ ԴՈՒՐՍ ՀԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջինները դուրս պետք է բերել, իբրև կանոն, բացարձակ մեծութուններից, այլ վոչ միջին կամ հարաբերական մեծութուններից: Այդ միտքը ապացուցելու համար Ա. Ա. Կառլֆանը* բերում է հետևյալ դեպքը:

Յենթադրենք, ունենք 3 գյուղ, վորոնցից առաջինում մեկ տնտեսությանն ընկնում է ձի միջին թվով 2,5, յերկրորդում—1,5, իսկ յերրորդում—3: Յեթե այդ 3 տվյալներից հանենք միջինը, կստանանք—2,33: Բայց միջիններից դուրս բերված այդ միջինը կարող է լինել հեռու իրականությունից, վորովհետե ամեն մի գյուղն իր

* „Теория и методы статистики“. Изд. 1922 г. Стр. 524.

հերթին ևս հավաքականութունն է, և յեթե առաջին գյուղը ունենա 10 տնտեսութուն, յերկրորդը— 20, իսկ յերրորդը— 200, պարզ է, վոր այդ գյուղերի կշիռները, վորոնք խիստ տարբեր են, պետք է իրենց ուժի չափով, այսինքն անհավասար, ազդեն միջինի վրա, և միջինը պետք է ստացվի թեքումով դեպի մեծ կշիռ ունեցող գյուղը: Ահա այդ տվյալներով հանած միջինը տալիս է 2,85 ($10 \cdot 2,5 + 20 \cdot 1,5 + 200 \cdot 3 = 655, 230 = 2,85$) փոխարեն 2,33:

Բացի դրանից միջինները և հարաբերական մեծությունները դուրս բերելիս, կոտորակներ ստանալու դեպքում, հաճախ բավարարվում են տասնորդական, հազվագյուտ դեպքերում հարյուրերորդական մասերով, բաց թողնելով հազարյերորդական մասերը: Իսկ այդպիսի կորացումներից ստացվում է բավականին զգալի տարբերություն, վորը նույնպես ազդում է միջիններից ստացված միջինի վրա:

Այդ պահանջից—միջինները դուրս բերել բացարձակ մեծություններից—շեղվելու դեպքում անհրաժեշտ է բացատրականներում տալ համապատասխան դիտողություն:

Միջինների տիպիկությունը կախված է շարքի միատարրությունից: Վորջան շարքի անդամները մեկը մյուսին մոտ լինեն, այնքան միջինը հարազատ (մոտ) կլինի իր շարքի անդամներին: Այդպիսի միջինը կոչվում է սիպիկ միջին: Իսկ այն միջինը, վոր ստացվում է մեկը մյուսից ուժեղ տարբերվող վարիանտներից և հետևապես շատ հեռու յե շարքի վարիանտներից, կոչվում է վոչ սիպիկ: Վոչ տիպիկ միջինների միջոցով յերբեմն ծածկվում են խիստ կարևոր յերևույթներ, դրա որինակը տալիս է Դ. Սավինսկին*:

Յենթադրենք, արձանագրված են 4 զանազան գյու-

Д. Савинский. „Краткий курс элементарной статистики“. Изд. Москва, 1923 г. Стр. 44.

ղերում 6 ակն տնտեսութուն, վորոնք ունեն ցանքի հետևյալ տարածությունը.

I.	գյուղ.	5, 5, 5, 4, 4 և 4	հեկտ.	միջինը = 27:6 = 4,5	հեկտ.
II.	»	4, 4, 4, 4, 4 և 7	»	» = 27:6 = 4,5	»
III.	»	1, 1, 1, 1, 1 և 22	»	» = 27:6 = 4,5	»
IV.	»	1, 1, 1, 8, 8 և 8	»	» = 27:6 = 4,5	»

Այս որինակը տալիս է չորս, տնտեսական տեսակետից զանազան խմբակներ, վորոնցից առաջինը բավական միապաղաղ մասսա յե: Յերկրորդում մեկ ուժեղի դիմաց կանգնած են մնացած թույլ տնտեսութունները: Յերրորդում այդ հանգամանքն ավելի սուր կերպով է ցուցադրվում, իսկ 4-րդում տնտեսական թույլ շերտի դիմաց կանգնած է մյուս քանակապես հավասար, բայց տնտեսապես ուժեղ շերտը: Յեթե ունենայինք այդ խմբերի միայն միջինները, վորոնք իրար միանգամայն հավասար են (4,5), ապա մեր աչքից պիտի քողարկվեյին այդ սոցիալ-տնտեսական տարբեր խմբերը:

Վորպեսզի միջինները շարքի համար տիպիկ լինեն, պիտի դուրս բերել կարելույն չափ մեծ քանակով ցուցմունքներից, վորովհետև այդ դեպքում, ըստ մեծ թվերի որենքի, տիպիկ ցուցմունքները, մեկուսացնելով կամ թուլացնելով պատահական ցուցմունքների ազդեցությունը, ապահովվում են պատահական միջիններից:

Ցուցմունքների թվի բավարար լինելն ստուգվում է այսպես. բոլոր ցուցմունքները բաժանում են յերկու մասի, յեթե այդ յերկու մասի համար դուրս բերված առանձին միջինները հավասար կամ մոտ են մեկը մյուսին, ընդունվում է, վոր ցուցմունքների թիվը բավարար է:

Միջինները, վորպեսզի տարբերվեն կոորդինացիայից, պիտի լինեն հանված կոնկրետ սվյալներից. որինակ, բանող անասունների միջին թիվը պարզելու համար պետք է ամեն մի տնտեսութունից հարցնել, թե ինչքան նա

քանոց անասուն ունի և բոլոր տնտեսությունների բա-
նոց անասունների քանակը բաժանել տնտեսություն-
ների քանակի վրա: Իսկ յեթե նույնը ստանալու հա-
մար շրջանի բանոց անասունների ընդհանուր քանա-
կը բաժանենք բոլոր տնտեսությունների քանակի վրա,
կստանանք վոչ թե միջին, այլ կոորդինացիա, վորովհե-
տև ներկա դեպքում համադրում ենք յերկու զանազան
մասսաներ:

Միջինը կարող է հավասար լինել շարքի վորևե ան-
դամին, ինչպես 1, 2, 3, 6 շարքում, վորի միջինն է 3.
շարքի մեջտեղում կանգնած անդամին, ինչպես 1,
2, 3, 4, և 5 շարքում, վորի միջինն է 3. այն անդա-
մին, վորը շարքումն ավելի մեծ հաճախակալություն ու-
նի, ինչպես 2, 3, 4, 4, 4, 5 և 6 շարքում = 4:

Բայց նա կարող է և վոչ մեկին հավասար չլինել,
ինչպես հետևյալ շարքերում՝ 1, 2, 3, 4 — միջինը = 2,5-ի
կամ 1, 2, 3, 5 և 9 — միջինը = 4:

Միջինը գտնվում է ծայրահեղ անդամների ազդե-
ցության տակ. յեթե շարքում ավելացնենք խիստ մեծ
կամ վոքը վարիանտներ, միջինը ցույց կտա համապա-
տասխան տատանում:

Կշիռ կազմելու համար պահանջվող տվյալները պիտի
լինեն համապարփակ հաշվառումից ստացված, կամ ընտ-
րովի այնպիսի հաշվառումից, վորի տվյալները լինին
ուպրեզենտատիվ ներկայացվող մասսայի համար:

Պարզ միջինների համար կշիռը ընդունվում է մեկ
Հավասար պայմաններում պիտի գերադասել կշռված
միջինը, վորովհետև նա, հաշվի առնելով ամեն մի անդա-
մի տեսակարար կշիռը, տալիս է իրականությանն ավելի
մոտ պատկեր, իսկ յեթե կշիռ չկա կամ յեղած կշիռը
ըպրեզենտատիվ չէ, մնում է ոգտվել պարզ միջինով:

Յեթե կշիռները շարքում հավասար են, նրանք ան-
տես են առնվում, իսկ վարիանտների հետ վարվում են

այնպես, ինչպես նրանցից պարզ միջինը դուրս բերելիս:
Միջինների խմբակին են պատկանում մոդան և
մեդիանան:

Մոդան այն վարիանտն է, վորը շարքում ավելի հա-
ճախ է կրկնվում: Այսպիսի շարքում՝ 4, 4, 5, 5, 5, 5,
5, 5, 5, 5, 6, 6, 6, 6, 7, 7, 7, 7, 8, 8, 8, մո-
դան կլինի 5, վորովհետև նա շարքում բոլորից շատ է
կրկնվում: Միևնույն ապրանքի մի քանի զներից մոդան
կլինի այն գինը, վորը տիրոջն է շուկայում, ինչպես մեզ
մոտ ասում են «մազանդա» յե: Առհասարակ մոդայով են
դեկավարվում թե գնողը և թե վաճառողը: Մոդայի առա-
վելությունն այն է, վոր նա պատրաստ է, դուրս բերե-
լու համար վոչ մի գործողություն չի պահանջում և կախ-
ված չէ շարքի բարձր կամ ցածր անդամներից:

Մեդիանա կամ, ինչպես ասում են, միջին կետը
ստանալու համար հարկավոր է վարիանտները դասավո-
րել ցածրացող կամ բարձրացող ուղղությամբ: Ստացված
շարքի մեջտեղում կանգնած վարիանտը կլինի մեդիանա:
Որինակ,

որեկան	1 ո.	աշխատավարձ	ստացող	4	հոգի
»	1	» 50 կ.	»	»	10
»	2	»	»	»	20
»	2	» 50 կ.	»	»	30
»	3	»	»	»	20
»	4	»	»	»	7

Բոլոր բանվորների թիվը հավասար է 91 ի (4+10+
+20+30+20+7), նրանց մեջտեղումն է 46. ըզը: 46. ըզը
գտնվում է 30 հոգուց բաղկացած խմբի մեջ, այդ խմբի
վարիանտն է 2 ո. 50 կոպ., ուրեմն այս շարքի համար
մեդիանան է—2 ո. 50 կ.:

Յեթե ցուցմունքների թիվը լիներ 90, մեդիանան
կկազմեր 45. ըզ կամ 46. ըզ ցուցմունքը, վորոնցից յուրա-
քանչյուրը 2 ո. 50 կ. է, իսկ յեթե 45 ըզ և 46 ըզ ցուց-

մուկները հավասար չլինելին միմիանց (2 ու. 50 կ.), կարելի յեր վերցնել նրանց միջինը:

Առանց հաճախականության, նատուրալ շարքում՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7 մեդիանան = 4, վորովհետև նա յե կանգնած մեջտեղում:

Ինչպես դուրս բերելու յեղանակից յերևում է, մեդիանան ևս չի կախված շարքի բարձր և ցածր անդամներից: Մեդիանան գտնելու համար նույնպես մեծ գործողություններ չեն պահանջվում:

Մեդիանան, համեմատած բոլոր մյուս տեսակի միջինների հետ, վիճակագրական աշխատանքներում քիչ է կիրառվում, նա գործադրվում է միջին աշխատավարձի կամ միջին ընդունակության տեր աշակերտին գտնելու համար և նման դեպքերում:

Բացի դրանցից մոդան և մեդիանան ոգնում են միջինի տիպիկությունը պարզելու համար:

Այս բոլոր մեծությունները, լինեն նրանք պարզ կամ կշռված միջիններ, մոդուս կամ մեդիանա, ինչպես ընկ. Մ. Սմիտն է ասում, հանդիսանում են վորպես ամփոփական հատկանիշներ, նրանց հայտնաբերումը կազմում է վիճակագրական աշխատանքների հիմնական նպատակներից մեկը:

Միևնույն թվերից, նայած թե ինչ մեթոդ է կիրառվում, ստացվում են զանազան միջիններ:

Բայց այդ բոլոր տարբեր մեթոդների շնորհիվ տարբեր միջինները կմտտենան մեկը մյուսին կամ նույնիսկ հավասար կլինեն (որինակ սիմմետրիկ շարքերում), վորքան վարիանտները մեկը մյուսին մոտ լինեն: Այդ դեպքում ասում են, միջինը տիպիկ է շարքի համար: Այստեղից յերևում է, թե վորքան վարիանտների շարքը խայտաբղետ, ցրված լինի կամ, ինչպես վիճակագրներն են ասում, «սարքի դիսպերսիան» մեծ լինի, այնքան այդ զանազան մեթոդներով դուրս բերած միջինները կտար-

ձերվեն մեկը մյուսից: Շարքի ցրվածության (դիսպերսիայի) պարզ որինակ է վերևում բերված ցանքի տեր անտեսությունների այն շարքը, վորտեղ վեց անտեսությունից հինգը ունեն մեկական հեկտար ցանք, իսկ մեկը 22 հեկտար նրանցմիջինը (4,5 հեկտ.) շատ հեռու յե իսկական պատկերը ստյուս հնարավորությունից, վորովհետև ներկա դեպքում այդ միջինը հարազատ չե շարքի համար, վորտեղ շարքի դիսպերսիան շատ մեծ է, մի ծայրում կանգնած են մեկ հեկտար ունեցող անտեսությունները, քսկ մյուսում 22 հեկտ.: Շարքի ցրվածության քանակական չափը բնորոշում է միջինի տիպիկության չափը և ընդհակառակը—միջինի հիման վրա մենք կարող յենք դատել շարքի ցրվածության մասին:

Մինչ վերջին խնդրի լուծումը պարզենք, թե ինչ է «վարիացիոն շարքը»:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔԻ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պատենք որինակով, ստացված են՝

2 տեղեկ., թե մեկ հեկտ. հավաքել են	4 ցենտն. բամբակի բերք
6 » » » »	5 » » »
7 » » » »	6 » » »
4 » » » »	7 » » »
3 » » » »	8 » » »
2 » » » »	9 » » »

Այստեղ բոլոր տեղեկությունները վերաբերում են միևնույն հարցին—բամբակի բերքին: Առաջին 2 դեպքում բերք է ստացվել մեկ հեկտարից 4 ցենտ., յերկրորդ 6 դեպքում բերք է ստացվել մեկ հեկտարից 5 ցենտ. և այլն*:

Ըստ Սապեգինի բերքի փոփոխականությունը (մեկ անգամ 4 ցենտ, մյուս անգամ ուրիշ) կոչվում է վարի-

* Տես „Вариационная статистика“ А. А. Сапегина, Госиздат—Москва 1927 г. стр. 8.

ացում (вариирование), ամեն մի խմբակի բերքի կոնկրետ քանակը մյուսի նկատմամբ—վարիանս, բոլորը միասին վարիանտներ կամ վարիացիոն շարք: Վարիացիոն շարքի նպատակն է տալ, թե ինչպես են դասավորվում շարքի անդամները իրենց միջինի շուրջը. նա կարևոր դեր է կատարում գիտական անալիզների ժամանակ, մասնավորապես, միջինները դուրս բերելիս:

Յեթե բոլոր 24 տեղեկությունները տալին բերքի միևնույն քանակը, ապա վոչ մի վարիանտ չեր լինի: Վարիացիոն շարքը լինում է բնդիասվող միավորներով, վորը կոչվում է „դիսկրետ“ շարք, վորտեղ միավորները կոտորակ չեն և չեն ել կարող կոտորակ լինել, այլ ներկայացնում են ամբողջ թվեր. որինակ,

10 տնտեսությունն ունեն 1. ական կով

20 » » 2 » »

30 » » 3 » »

Այստեղ կովերի կոնկրետ թիվը առանձին տնտեսություններում չի կարող լինել կոտորակով:

Յերկրորդ տեսակի վարիացիոն շարքն է չրնդիասվող միավորներով շարքը, սրա որինակն է բերքի մասին յեղած տեղեկությունը, վորտեղ միավորը ինչ չափով ցանկանան, թեկուզ ամենափոքրիկ կոտորակով, կարող են արտահայտել, և դրա շնորհիվ մեկ խմբակից մյուս խմբակն անցնելու համար դժվարություններ չկան: Անընդհատ վարիացիոն շարք ստացվում է բոլոր դեպքերում, յերբ շարքը վերաբերում է յերկարությունը, լայնությունը, բարձրությունը, քաշին և այլն: Վարիացիոն շարքը կարող է լինել նաև կշռով:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔԻ ՑՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Փարսենի պարզել վարիացիոն շարքի ցրվածության (դիսպերսիայի) ասիմանը չափելու ձեովը: Վարիացիոն շարքում առանձին վարիանտների ցրվածության աստի-

ճանը բնութագրվում է հետևյալ միջոցներով. 1) միջին շեղումը պարզելով, 2) միջին քառակուսի շեղումը պարզելով, 3) մեդիանայով, 4) մոդայով, 5) միջինի հետ տալով վարիանտներից մինիմումը և մաքսիմումը:

1. Միջին շեղումը դուրս բերելու համար հարկավոր է վարիանտները նախ դասավորել վորոշ կարգով՝ ցածրացող կամ բարձրացող ուղղությամբ. որինակ, 4, 5, 6, 7, 8 և 9 ցենտներ. նրանց պարզ միջինը = 39:6 = 6,5: Առաջին անգամի (4) շեղումն այդ միջինից (6,5) = 2,5, յերկրորդինը = 1,5, յերրորդինը = 0,5, չորրորդինը = 0,5 և այլն: Այդ վեց անգամի համար բոլոր շեղումների դումարը, անկախ նրանց դրական (միջինից բարձր) կամ բացասական (միջինից ցածր) լինելուց կազմում է (2,5 + 1,5 + 0,5 + 0,5 + 1,5 + 2,5) 9 ամբողջ, իսկ միջին շեղումը (9:6) = 1,5, վորը միջինի նկատմամբ (6,5) կազմում է 23,1%: Միջին շեղումը զրվում է այսպես 6,5^{23,1}:

Վերցնենք նույն վարիացիոն շարքը հաճախականություն հետ միասին՝

Վարիանտ	Հաճախականություն	Վարիանտի և հաճախական. արտադրյալը	Վարիանտի շեղումը միջինից (6,5)	Շեղումների և հաճախակ. արտադրյալը
4	2	8	2,25	4,50
5	6	30	1,25	7,50
6	7	42	0,25	1,75
7	4	28	0,75	3,00
8	3	24	1,75	5,25
9	2	18	2,75	5,50

Ընդամենը 24 150 27,50
 միջինը = $\frac{150}{24} = 6,25$. նրա շեղումը շարքի առաջին վարիանտից կամ անդամից (6,25 - 4) = 2,25, յերկրորդ անդամից (6,25 - 5) = 1,25 և այլն: Ամեն մի անդամի շեղումը բազմապատկած իր հաճախականություն վրա և

նրանց արտադրյալների գումարը (27,5) բաժանած հաճախականութունների գումարի վրա (24). կստանանք միջին շեղումը շարքի բոլոր անդամների համար, այն է 1,15, վորը միջինի (6,25) նկատմամբ կազմում է 16,80% և գրվում է այսպես 6,25^{16,8}:

3. Միջին քառակուսի շեղումը պարզելու համար վարիանտների առանձին շեղումները բարձրացնում են քառակուսի աստիճանի, ստացած թվերը գումարելով, բաժանում են վարիանտների թվի վրա. ստացած թվից հանում են քառակուսի արմատ, վորը կոչվում է միջին քառավուսի շեղում և նույնպես վերածվում է սոկոսի: Փորձենք հանել առաջին որինակի վրա. շարքն է՝ 4, 5, 6, 7, 8 և 9. նրանց միջինը = 6,5-ի, նրանց շեղումը հավասար է՝ 2,5, 1,5, 0,5, 0,5, 1,5, 2,5. բարձրացած քառակուսի աստիճանի — $2,5^2 + 1,5^2 + 0,5^2 + 0,5^2 + 1,5^2 + 2,5^2$, վորոնց գումարը = 17,5, բաժանած անդամների թվի (6) վրա = 2,92, հանած քառակուսի արմատ $\sqrt{2,92} = 1,7$, վորը միջինի նկատմամբ կազմում է 26,10% (փոխարեն 23,10%):

Ուրեմն քառակուսի մեթոդը ճշտացրեց զիսպերսիայի աստիճանը 30%-ով:

Միջին քառակուսի շեղման հանելու ձևը կռված շարքում չենք տալիս նրա բարդ լինելու պատճառով:

3) Մեդիանայի յեվ մոդայի միջոցով շարքի զիսպերսիան պարզելու համար շարքի միջինը համեմատում են նրա մեդիանայի կամ մոդայի հետ. զրանց տարբերությունը ցույց է տալիս միջինի տիպիկություն աստիճանը:

4. Նույն նպատակներին է ծառայում և այն միջոցը, յերբ վարիացիոն շարքից գուրս են բերում բոլոր անդամների համար մեկ միջին, նրա կողքին դնում են նաև շարքի „maximum“ և „minimum“ անդամները: Այս միջոցը ևս պարզում է միջիններից ոգավողին, թե ինչպիսի շարքից է ստացված տվյալ միջինը: Ահա զրա ձևը՝

$1+1+2+2+2+7+8=23:7=3,3$ հետևապես շարքի միջինն է 3,3. նրա minimum — 1, իսկ maximum — 8:

Հասկանալի չէ, այս միջոցներն ևս արմատորեն չեն լուծում խնդիրը, այլ վորոշ չափով տալիս են վարիացիոն շարքի ընդհանուր և մոտավոր պատկերը, թե ինչպիսի անդամներից է ստացված տվյալ միջինը:

Մեր դուրս բերած սոկոսները ցույց են տալիս զիսպերսիայի աստիճանը: Վորքան փոքր է այդ սոկ., այնքան քիչ է զիսպերսիան. հետևապես այդ չափով տիպիկ է միջինն իր շարքի համար:

Միջինների տիպիկությունը պահպանելու համար առաջարկվում են հետևյալ միջոցները:

Առաջին — միջինները դուրս բերելիս անտես առնել վարիացիոն շարքի այն անդամները, վորոնք խիստ տարբերվում են շարքի մյուս անդամներից իրենց բարձրությունով կամ ցածրությունով: Բայց այդ առաջարկը շատերի կողմից չի ընդունվում, վորոնք արդարացի նկատում են, թե չկա այնպիսի մի որյեկտիվ չափ, վորի հիման վրա կարելի լինի վորևե անդամին ընդունել վորպես ծայրահեղ: Իսկ այն կարծիքը, վորով առաջարկվում է միջինից 50%-ով տարբերվող (բարձր կամ ցածր) անդամներն ընդունել վորպես ծայրահեղ և շարքից դուրս գցել, իրոք համարվում է վոչ հիմնավորված:

Յերկրորդ միջոցը. յեթե ծայրահեղ անդամները թվով շատ են և կարող են կազմել առանձին խմբակներ, պետք է նման խմբակների համար առանձին միջիններ հանել: Յենթադրենք, 3 տնտեսություն ունեն մեկական հեկտար ցանք, 3 ը յերկուսական հեկտար, յերկուսը 7. ա կան, մյուս յերկուսը 8 հեկտար. շարքը կստանա հետևյալ պատկերը՝ 1, 1, 1, 2, 2, 2, 7, 7, 8, 8: Պարզ է, վոր այստեղ ունենք յերկու տարբեր տնտեսական խումբ: Ամբողջ շարքի համար մեկ միջին հանելու դեպքում ծածկած կլինենք այդ յերկու հակադիր խմբերի տնտե-

ասկան բնույթը: Ավելի ճիշտ ե առանձնացնել յուրաքանչյուր խումբը և հանել նրանցից ամեն մեկի համար առանձին միջին. սովյալ զեպքում մեկ խմբի միջինը կլինի $1+1+1+2+2+2=9:6=1,5$, իսկ մյուսը $7+7+8+8=30:4=7,5$:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔԵՐ

Վարիացիոն շարքերից պիտի տարբերել վիճակագրական շարքերը, վորոնք դասավորված են լինում վորոշ կարգով և ձգտում են տալ, ինչպես պրոֆեսսոր Ա. Վիլյամսը և ասում, շարքի մեջ գտնվող անդամների փոխհարաբերությունն ըստ ժամանակի, տարածություն և առարկայական հատկանիշների. նրանք ծառայում են գլխավորապես գիտական աշխատանքներին համեմատության, անալիզների և քննադատության համար:

Առաջին տեսակի վիճակագրական շարքը (ըստ ժամանակի) հետապնդում է յերևույթի շարժումը ժամանակի ընթացքում. որինակ, բանվորական վարձու ուժի զբաղված քանակի շարժումը Հայաստանում 1923—1929 թ. թ. *:

1923 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.	1927 թ.	1928 թ.	1929 թ.
15.430	16.925	26.277	33.869	37.223	39.108	44.171

Ցերկրորդ տեսակի (ըստ տարածության) շարքը տալիս է յերևույթի աշխարհագրական տարածման պատկերը:

* «Աշխատանքը Հայաստանում» հրատար. ՀԱՄԽ, Կ. Վ. Վ. և Աշխտող. 1927 թ.:

որինակ, սպառողական ընկերությունների քիվը Հայաստանում (առ 1 ն հոկտեմբերի 1928—29 թ. թ) *:

Ը Ն Կ Ե Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր Ի Թ Ի Վ Ը								
Ցերե- վան	Գարա- լագ.	Դիլի- ջան	Ձան- դեզ.	Եջմի- ածին	Նեկի- նական	Մեղրի	Լ. Փամբ.	Ն-Բայա- դեդ
15	3	12	4	15	14	2	27	4

Ցերրորդ տեսակ շարքի որինակն է առեկտրական ցանցը Հայաստանում առ 1-ն ապրիլի 1929 թ. (ըստ առարկայական հատկանիշների, սովյալ զեպքում սոցիալական սեկտորների).

Պետական	82
Կոոպերատիվ	716
Համայնացրած	798
Մասնավոր	1219

Ընդամենը՝ 2017

Այս բոլոր որինակներում վիճակագրական շարքը կազմվում է բացարձակ մեծություններից: Կարելի չէ կազմել և հարաբերական թվերի շարք, որինակ, վերջին աղյուսակը վերածած հարաբերական թվերի:

Պետական	4,1 ⁰ / ₀
Կոոպերատիվ	35,5 ⁰ / ₀
Համայնացրած	39,6 ⁰ / ₀
Մասնավոր	60,4 ⁰ / ₀

Ընդամենը 100⁰/₀

Նման շարքեր կազմում են և միջիններից. որինակ, միջին շրջանառությունը առևտրական ձեռնարկության մեջ զբաղված մեկ անձին յեղել է 1927—28 թ. պետական 57.900 ռ., կոոպերատիվ 38.300 ռ. և մասնավոր առևտրում 7,200 ռ.: Վիճակագրական շարքերը կազմված են լինում ավելի հաճախ միջին կամ հարաբերական թվերից:

* «ՀՍԽՀ սպառկոոպերացիան թվերով» հրատարակություն Հայկոոպի 1929 թ.:

Ըստ ժամանակի կազմված աղյուսակը կոչվում է դի-
նամիկ շարքի աղյուսակ: Յեթե նրանք հայտնաբերում են
յերևույթի զարգացումը, անվանում են եվոլյուցիոն, վո-
րոնք իրենց հերթին կարող են լինել դրական (պոզիտիվ)
կամ բացասական (նեգատիվ) շարքեր. եվոլյուցիոն—պո-
զիտիվ բնույթ կրող դինամիկ վիճակագրական շարքի
որինակ է բանվորական վարձու ուժի աղյուսակը (տես
յերես 94), վորտեղ ամեն տարի ուժերի ավելացում է
նկատվում: Եվոլյուցիոն—նեգատիվ բնույթ կրող դինամիկ
վիճակագրական շարքի որինակ է—գործարանային ար-
դյունաբերության բանվորների բաշխումն ըստ աշխատա-
վարձի չափի (0/0 0/0-ով առ ընդհանուր թիվը):

Հ0,1 ո. մինչև 30 ո. ստացողների թիվը
առ 1-ն մարտի

Ճ Յ Ո Ի Ղ Ե Ր	1923 թ.	1925 թ.	1927 թ.	1928 թ.
Արդյունաբերական				
Պղնձի	41.4	23.3	2.4	1.4
Գինի կոնյակի	10.0	8.6	—	—
Բամբակի մշակույթ	88.2	28.1	6.1	—
Արդյունաբ. բոլոր ճյուղերի	33.4	22.9	10.7	—

Այս աղյուսակում տարեց—տարի պակասում է
20,1—30 ուրբ. ստացողների թիվը, բայց այդպիսի թվե-
րի իջեցումը զարգացման նշան է, վորը վկայում է, վոր
արդյունաբերության հիշատակված ճյուղերում ցածր ու-
ճիկ ստացողների թիվը պակասում է, նրանց ավելի բարձր
ուճիկ ստացողների խմբակն անցնելու հետևանքով:

Այն դինամիկ շարքը, վորի աղյուսակում հայտնա-
բերվում է յերևույթների կայունություն (ստարիլ զրու-
թյուն), անվանում են ստացիոնար շարք, որինակ,

Սպառողական ընկերությունների թիվը Հայաստանում
առ 1-ն հոկտեմբերի

Գ Ա Վ Ա Ռ Ն Ե Ր	1926 թ.	1927 թ.	1928 թ.
Յերևանի	13	15	14
Դարալագյաղի	3	3	3
Դիլիջանի	10	12	12
Զանգեզուրի	3	4	4
Ն. Բայազետի	4	4	4
Կենտ. բանվորական կոոպերատիվ	2	2	2

Համաձայն այս աղյուսակի թեթև բացառությամբ 3
տարվա մեջ սպառողական ցանցում համարյա ստացիոնար
դրություն է տիրում:

Վերջապես կարելի չէ պատահել աղյուսակների, վո-
րոնք զանազան խոշոր գործոնների ազդեցությամբ տակ
տալիս են շարքերի հատուկ սեգոնային աատանումներ. որի-
նակ, ներմուծումն կամ արտահանումն այնպիսի բեռների,
վորոնք կախում ունին վորոշ սեգոններից—բամբակի,
գինու և ողու, շինարարական նյութերի և այլն: Նման
շարքերը կոչվում են պարբերական և բնորոշվում են նրա-
նով, վոր շարքի անդամները դասավորվում են ալիքանման,
աճմանը հետևում է նվազումն և ընդհակառակը:

Դրա հակառակ տեսակի շարքն է այն, յերբ անդամ-
ների մեջ վոչ մի վորոշ սեկոնց չի հայտնաբերվում:
Նման շարքը կոչվում է անկանոն շարք:

Վիճակագրական շարքում անդամների հարաբերու-
թյունը պարզելու համար շարքը բերում են մեկ ընդհա-
նուր հիմքի. հիմք ընդունված թիվը հավասարվում է
100-ի, վորի հետ համեմատում են շարքի անդամները.
այդպիսով ամբողջ շարքը կերպարանափոխվում է, բա-

ցարձակ թվերից վերածվելով տոկոսի: Կանոնավոր շար-
փում հիմք է ընդունվում շարքի առաջին անդամը, մա-
նավանդ, յեթե շարքը կազմված է ըստ ժամանակի հատ-
կանիչի բարձրացող կամ ցածրացող ուղղությամբ:

Անկանոն շարփում հիմք է ընդունվում շարքի ամե-
նափոքր կամ ամենամեծ անդամը կամ բոլոր անդամների
թվաբանական միջինը: Վերջինիս բարդության հետևան-
քով սահմանափակ է նրա կիրառումը:

Հիմք է ընդունվում նաև շարքի բոլոր անդամների
գումարը, յեթե այդ գումարը կարելի յե ընդունել վոր-
պես ամբողջութուն բոլոր անդամների համար:

Անդամների հարաբերությունն անկանոն շարքում
հայտնաբերելու համար դիմում են նաև հետևյալ միջոցի:

Դասավորված շարքի անդամները վերածում են ա-
ռանձին խմբերի և յուրաքանչյուր խմբից հանում են
նրանց թվաբանական միջինը. ստացվում է միջինների
շարք. ապա քննում են, չի հայտնաբերում արդյոք այդ
շարքը վորևե կանոնավորութուն:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Վիճակագրական սվյալների գծագրական ձևվա-
կերպման էյուրքյունն այն է, վոր վիճակագրական թվերը
վերածվում են գծագրության (գծերի, մակարդակների,
նկարների և այլն): Դրա հիմնական նշանակութունը հե-
տևյալն է. 1) նայելով այդ գծագրության, կարիք չի լինի
կատարել այն մտավոր աշխատանքը, վորն անհրաժեշտ է
վիճակագրական աղյուսակի իմաստն ըմբռնելու համար:

2) Վիճակագրական թվերը դրանով հնարավոր է լի-
նում յուրաքանչև առանց հատուկ մասնագիտական պատ-
րաստականության, իսկ այդ բանը աղգաբնակության լայն
խավերին մատչելի յե դարձնում վիճակագրական հետե-
վումները (ВЫВОДЫ):

3) Վերածելով ամբողջ աշխատանքն այդ տեսակե-
տից պարզ տեսողական ըմբռնման, գծագրական ձևակեր-
պումը հաճախ բաց է անում վիճակագրի առաջ ուսում-
նասիրվելիք յերևույթի այնպիսի կողմեր, վոր նա կարող
էր չնկատել աղյուսակներում: Այդ կերպ գծագրական
ձևակերպումը կարող է վորոշ չափով ծառայել վիճակագրի
համար վորպես գիտական վերլուծության միջոց:

Գծագրական ձևակերպման տեսակները խիստ բազ-
մազան են: Մեծ դեր է խաղում նրանց ընտրության և
կազմելու գործում ներդրանակի յերևակայությունը: Բերենք
նրա միայն հիմնական տիպերը — գծային դիագրամներ,

մակարդակային դիագրամներ, նկարազրամներ և քարտա-
գրամներ:

Գծային դիագրամի ամենասովորական տիպն այս-
պես կոչված կոր գիծն է: Դիագրամի այս տիպը զործ է
ածվում արտահայտելու վորևե յերևույթի դինամիկան՝
շարժումը ժամանակի մեջ:

Կոր գիծ կազմելիս սկզբում պատրաստում են մի
շարք միմյանց կարող հորիզոնական և ուղղահայաց դծերից
ցանց: Այդ ցանցի առանձին վանդակները կարող են լինել
կամ քառակուսիներ կամ ուղղանկյուն քառանկյունիներ:
Կոր գիծն ուղիղ ստանալու համար անհրաժեշտ է, վոր ցան-
ցի բոլոր վանդակները իրար հավասար լինեն, այսինքն
ուղղահայաց գծի (որդինատ) նույնպես և հորիզոնականի
(աբսցիս) բոլոր կտրվածքները միմյանց հավասար լինեն:
Պատրաստելով ցանցը կամ վերցնելով պատրաստի (վան-
դակավոր) թուղթ, պետք է ցանցի կողքերին նշանակել
այն յերևույթների միավորները, վորոնց փոխադարձ կապն
են ուսուսմասիրում: Յենթադրենք, ուզում ենք գծագրել
հանված պղնձի քանակի շարժումը Հայաստանում 1926—
—27 և 1928—29 թվականներին (յեռամսյակներով)
կվարտալներով:

Սովորաբար ընդունված է ժամանակի միավորը
(բերած որինակում—կվարտալները) նշանակել հորիզո-
նական գծի վրա: Դրա համար ցանցի հիմքի վրա այն
կետերում, վորտեղ ուղղահայաց գծերը միանում են հո-
րիզոնականին, նշանակում են հետևողաբար ձախից աջ
կվարտալները՝ սկսած առաջինից: Այդ նշանակում է, վոր
ամեն մի կվարտալում հանված հանքի քանակը պետք է
լինի այն ուղղահայաց գծի վրա, վորի ներքևի կետում
նշանակված է տվյալ կվարտալը (տես հավելում—գիագր.
№ 1). ցանցի ձախ կողմից առաջին ուղղահայաց գծի վրա
նշանակում են ուսուսմասիրվող յերևույթի գանազան մե-

ծուծյունները, մեր որինակում—հանված պղնձահանքի
քանակը:

Վորպեսզի դիագրամման ուղիղ լինի, անհրաժեշտ է,
վոր ուսուսմասիրվող յերևույթի մեծուծյունների ինտեր-
վալները, վորոնք նշանակվում են ցանցի վրա, հավասար
լինեն և ամենացած կետը համապատասխան լինի գերոյի:
Ասենք, վորոչիլ ենք հանված հանքի քանակի տատանումը
հաշվել կվարտալ առ կվարտալ այնպես, վոր ցանցի ամեն
մի բաժանում արտահայտի մի մեծուծյուն—հավասար
200 դեկատոննի: Ապա մենք պիտի ցանցի առաջին ուղ-
ղահայաց գծի վրա նշանակենք 0, 200, 400, 600, 800,
1000 և այլն: Յեթե ինտերվալներն անհավասար լինեն
(որինակ, 0, 200, 250, 300, 500 և այլն) պատկերը չի հա-
մապատասխանի իրականուծյանը:

Գծային դիագրամը պատրաստելու համար մնում է
պատրաստի ցանցի վրա նշանակել վիճակագրական կոնկ-
րետ թվերը: Հայաստանի կենտրոնական վիճակագրական
վարչուծյան տվյալների համաձայն վերջին 3 տարում
հանված պղնձահանքի քանակն ըստ կվարտալների հետև-
յալն է՝

		1926/27 թ.			
	կվարտ.	571 դեկատ.	, -ում 423, -ում 563, V-ում 424		
		1927/28 թ.			
	կվարտ.	725	»	1021	» 1167 » 1072
		1928/29 թ.			
	կվարտ.	1296	»	1460	» 1357 » —

Սկսենք առաջին կվարտալից, վորին համապատաս-
խանում է առաջին ուղղահայաց գիծը:

Այդ գծի վրա փնտրենք և նշենք այն կետը, վորը
համապատասխան է ըստ մասշտաբի առաջին կվարտալում
հանված հանքի քանակին (571):

Յերկրորդ կվարտալի քանակը նշենք յերկրորդ ուղ-
ղահայացի համապատասխան կետում, յերրորդ կվարտա-

լի քանակը յերբորդի վրա և այլն: Այդպիսով կատանանք վորոշ քանակով կետեր դրված ցանցի զանազան տեղերում: Միացնենք հարևան կվարտալների կետերը ուղիղ գծով, կատանանք այն կոր գիծը, վորը տեսնում ենք № 1 դիագրամի վրա:

Մեկ դիագրամի վրա կարելի յե տալ մի քանի զանազան յերևույթների ընթացքը կամ միևնույն յերևույթի ընթացքը զանազան տեղերում (տես դիագր. № 2) և զանազան ժամանակում:

Կոնկրետ թվերը ցանցի վրա նշանակելիս կարող են պատահել հետևյալ դժվարությունները: Յերբեմն պատահում ե, վոր տվյալների մի մասը բացակայում ե: Դա պատճառ չե, վոր համապատասխան ամիսը չնշանակենք ցանցի հիմքի վրա (որինակ, չի կարելի այսպես նշանակել՝ առաջին, յերկրորդ, չորրորդ կվարտալներ, այսինքն 3-րդ կվարտալը բաց թողնել):

Այդ դեպքում պետք ե կամ կոր գիծը ընդհատենք կամ թե գծի բաց տեղում (ավյալ չեղած կվարտալի դիմաց) կետեր դնենք, վորոնք, վորոշ չափով բացը ծածկելով, ցույց են տալիս, վոր նյութը պակասում ե: Դա լինում ե այն դեպքում, յերբ վստահ ենք, վոր բացակայող մեծությունն ընկնում ե իր նախորդ և հետնորդ մեծությունների միջև: Բայց այդ ձևով կարելի յե և սխալվել: Ասենք, չունենք 1927 թ. 3 ըդ կվարտալում հանած հանքի քանակը: Յեթե վերականգնենք այդ բացը ցույց տրված յեղանակով, այսինքն յերկրորդ և չորրորդ կվարտալի տվյալներով, այդ բացը կլինի 423,5 դեկատոննա, վորը ստացվում ե 2 հարևան կվարտալներից, վորպես հասարակ թվաբանական միջին, * այն ինչ փաստորեն հան-

* Ոգտվելով դեպքից, նկատենք, վոր նման մեթոդով բացակա տվյալների վերականգնումը կոչվում ե ինտերպոլյացիա. տվյալ դեպքում ինտերպոլյացիոն մեթոդով ըստացված թիվը = 423,5:

վել ե 563 դեկատոննա: Պարզ ե, թե վորքան անհուսայի յե այդ յեղանակը: Պատահում ե յերբեմն և այնպիսի դեպք, յերբ յերևույթի բարձրությունը անցնում ե ցանցի սահմանից: Ի հարկե, այդպիսի դեպքում պետք ե դիագրամի մասշտաբը փոխել՝ մեծացնել նրան: Յերբեմն ցանցի վերևում, համապատասխան ուղղահայաց գծի վրա գրում են այդ թիվը, բայց դրանով կորչում ե պարզությունը և դիագրամը կորցնում ե իր իմաստը:

Մակարդակային դիագրամները նրանք են, վորոնց կազմելու համար ոգտագործում են յերկրաչափական մակարդակներ: Կան ուղղանկյուն, շրջագծային և այլ մակարդակային դիագրամներ: զրանց նպատակն ե գծագրել յերևույթի համեմատական մեծությունները և դինամիկան նույնպես և ուսումնասիրվող հավաքականությունն ներքին կազմը: Առաջին նպատակի համար գծում են այս կամ այն ձևի մակարդակներ, վորոնց մեծությունը համապատասխանելու յե իրենց արտահայտող թվերին: Պարզություն համար նրանք բոլորը ունենում են հավասար հիմք: Նրանց բարձրությունները վորոշում են յերևույթների փոխհարաբերությունը: Հասկանալի յե, վոր համեմատություն համար պետք ե վերցնել միևնույն տեսակի մակարդակներ:

Շրջագծային դիագրամները գործ են ածում հավաքականությունն իր բաղադրիչ մասերի բաժանելու համար, վորոնց մակարդակը շառավիղներով բաժանում են սեկտորների կամ կտորների. կտորների մեծությունը համապատասխանելու յե հավաքականության մասերի մեծության: Այդ դիագրամի որինակն ե № 3 դիագրամը:

Շրջագծային դիագրամ գծելու տեխնիկան հետևյալն ե. բացարձակ թվերը, վոր արտահայտում են ուսումնասիրվող հավաքականության մասերը, վեր են ածվում տոկոսների: Ստացված ամեն մի տեղուր բազմապատկում են 3,6 ի վրա (շրջագիծն ունի 360 աստիճան):

Հարյուր տոկոսից ամեն մի տոկոսին դալիս ե 3,6 աստիճան):

Այդպիսով ստացվում է համապատասխան կտորի աղեղի աստիճանների թիվը: Ապա համապատասխան այդ թվերի, շրջագիծը շառավիղներով բաժանում են կտորների, վորոնց տալիս են զանազան գույներ կամ գծավորում են (ШТРИХОВКА). տես դրագրամ № 4:

Վիճակագրական տվյալներին գծագրական ձև տալու նպատակով յերբեմն գործ են ածում և մարմիններ, ինչպես զուտ յերկրաչափական, նույնպես և այլ (մարդկանց նկարներ, հատիկով լի տուպրակներ և այլն): Յերևույթների հարաբերական մեծությունն այստեղ արտահայտվում է նրանց ծավալով: Գծագրական ձևակերպման այդ տեսակը հայտնի յե նկարագրամ կամ ստերեոգրամ անունով. դա հետաքրքիր և գրավիչ միջոց է վիճակագրական տվյալները ժողովրդականացնելու գործում:

Կարճագրամը գծագրական ձևակերպման այն տեսակն է, յերբ վիճակագրական տվյալները ցուցադրվում են աշխարհագրական քարտեզի վրա, սովորաբար տարբեր գույն տալով տերրիտորիայի առանձին շրջաններին, վորոնք տարբերվում են միմյանցից տվյալ յերևույթի ավելի կամ պակաս մեծությամբ:

Վիճակագրական տվյալներից նման քարտագրամ կազմելու համար, որինակ, ասենք, ունենք ցորենի բերքի զանազան քանակ, սովորաբար այդ թվերը դասավորում են բարձրացող կարգով և ապա միմյանց մոտ թվերից խմբեր են կազմում: Ամեն մի խմբին տալիս են առանձին գույն: Պետք է վորոշ վարժություն ունենալ թվերը նախապատրաստել, ապա քարտեզի վրա անցկացնել: Այդ խմբերը պետք է այնպես կազմվեն, վոր քարտագրամը լինի լիակատար պարզ, մասնավորապես առանձին շրջանները, վորոնք նման են միմյանց, շատ պարզ ցուցադրվեն:

Կարճագրամը ներկայացնում է կարտագրամի և շխագրամի միացումն, այսինքն քարտեզի վրա կազմած դիագրամ: Այդ ձևակերպման կարող ենք դիմել, յեթե ցանկանանք ցույց տալ, թե շրջաններում ինչպես են տարածված որինակ, դպրոցները, սովորողների համեմատական թիվը, սեռը և այլն: Դրա համար հաշվում են ամեն մի դպրոցում սովորողների հարաբերական թիվը. այն բնակավայրերում, վորտեղ դպրոց կա, շրջագիծ են քաշում, վորի մեծությունը համապատասխանում է տվյալ դպրոցի սովորողների թվին. շրջագիծը բաժանում են յերկու մասի համեմատ սովորողների սեռի քանակի: Շրջագծերի դասավորումը ցույց է տալիս, թե ինչպես են տարածված դպրոցները շրջաններում. շրջագծերի հարաբերական մեծությունը ցույց է տալիս սովորողների համեմատական թիվը, շրջագծերի կտորների մեծությունը՝ սեռերի հարաբերական քանակը:

Н. А. Каблуков.—Задачи и способы собирания статистических сведений. Изд. ЦСУ 1920 г. Стр. 102.
 А. Ф. Фортунатов.—О статистике. Изд. ЦСУ 1921 г. Стр. 94.
 Георг Майр.—Статистика и обществоведение. Изд. ЦСУ 1921 г. Стр. 430.
 Н. А. Каблуков.—Статистика. Изд. ЦСУ 1922 г. Стр. 319
 А. А. Кауфман.—Теория и методы статистики. Изд. С. И. Сахарова 1922. г. Стр. 601.
 М. Смит.—Основы статистической методологии, выпуск первый. Госиздат 1923 г. Стр. 196.
 Д. Савинский.—Краткий курс элементарной статистики. Госизд. 1923 г. Стр. 175.
 П. А. Вихляев.—Очерки теоретической статистики. Изд. ЦСУ 1924 г. Стр. 152.
 К. Г. Всзлый.—Статистика. Госиздат Украины. 1924 г. Стр. 287.
 П. Колокольников.—Статистика. Госиздат. 1926 г. Стр. 242.
 В. Цубербиллер.—Основы промышленной и торговой статистики. Изд. НКРКИ СССР 1926 г. Стр. 180.
 Г. И. Лурье.—Статистика для кооператора. Изд. Центросоюза. 1927 г. Стр. 250.
 А. М. Обухов.—Статистика для всех. Изд. НКТ. СССР 1928 г. Стр. 112.
 А. А. Салегин.—Вариационная статистика. Госиздат 1928 г. Стр. 105.
 Проблемы статистики. —Журнал о ва статистиков-марксистов при Коммунистической Академии № 1 1926 г.

Կրթական շրջան № Հրատարակչի շրջան № Ցուցահարդարի շրջան №

Ա Ն Չ Ն Ա Վ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ Ն

ապետություն դավառ

պահան վայելի համար՝ դավառման գյուղերում

կախյալ (գյուղ, գյուղակ, կուտար և այլն) ի ցուցակում №

դախյալն վայելի համար՝ քաղաք(ական) միջկետի բաժանմունք

քաղաքի թաղ № փողոց, նրբափողոց, նրբաքաղաք

№ բնակարանի № ընտանեկան թեղթիկի №

դաճում, աճում, հայրանում

Սև (արական, իգական)

Տարի՝ քանի տարին և լրացել տարի, մի տարեկանից փոքր յերեկանների համար տիս

Վ գգրքյուն

Ոտք հոգատակների համար՝ վար պետության հոգատակն և

այրենի լեզուն

Վարձեղ և ձեզի՝ այսակ թե փոլ յեթև փոլ այսակ, հարկ

վարակ՝ հանրապետության, նամանդ դավառ դա-

վառման կամ քաղաք

Եթե կորնրդային Միությանից զուր և ծնված՝ պետության

շրջան յերև և յեկել կորնրդային Միության մեջ

արևան ժամանակ և մեապես բնակվում այսակ՝ տարի, կամ տիս, մի ժամանակավարտիս

Ջեռակիան դրոքյունը՝ (ամառի, ամառանցած, աչրի, ամառնալոյժ)

Պրոպիաքյուն՝ ինչ լեզուներով ղիտե կարգով և գրել թե


Ճիշտ կարգում և թե բոլորովին անդրադա և

Պ հոսմանի վիզիվական պոկտատրքյուն Սև, կամ ծանր վառվածք՝

լրանց պատճանները

Ն առանակի եղևկան ելվանդ լիցելը

Ռիազրամ.
N 2



Տառնապարտ ճանրապատճառ ապրանքներ
ընդհանուր հստեփսք.


Յ Ե Ր Ե Կ Ա Ն Բ Ա Գ Ո Ւ Թ Ի Ց Լ Ր Ս

Ք ա ղ ա թ Ն Ե Ր Ո Մ

Նախաատերացման գները = 100-ի.

Ռիազրամ.
N 3.

Հ.Ա.Խ.Ճ. Լոնկտրական ցանցն առ 1-ն
ապրիլի 1929թ. ըստ Սոցիալակ. Սեկտորների



Յերկու խոսք

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՅԵՐԵՍ

3

5—23

Վիճակագրության սեսական մասը

Տիպիկական և անհատական (ինդիվիդուալ) յերեվոլյութները (5): Անհատական յերեվոլյութների առանձնահատկությունները (6): Վիճակագրական մեթոդով ուսումնասիրվող յերեվոլյութները (7): Ամփոփական հատկանիշները (8): Վիճակագրական հավաքականությունը (9): Հավանականության տեսության հասկացողությունը (9): Մեծ թվերի որինքը (11): Վիճակագրական որինաչափությունը (12): Վիճակագրության վորոշումը (14): Վիճակագրության գործնական և գիտական նշանակությունը (15): Վիճակագրության համառոտ պատմությունը (17): Վիճակագրական ապարատի կառուցվածքը Հայաստանում (21): Վիճակագրության ուսումնասիրության աստիճանները (22):

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

24—53

Վիճակագրական դիսոդություն.

Դիսոդության սուբյեկտը (24): Դիսոդության որյեկար (26): Դիսոդության տեսակները ըստ ծավալի (29): Վիճակագրական հետադոտումների տեխնիկան (32): Հարցաթերթի լցնելը (35): Սխալների տեսակներն և նրանց դեմ կովելու միջոցները (37): Տեղեկություններ հավաքելու ձևերը (40): Դիսոդության տեսակներն ըստ յերեվոլյութների փոփոխականության և տեվոդության (42): Հիմնական ցուցակագրության տեսակները (44): Ընթացիկ վիճակագրության տեսակները (48):

Վիճակագրական նյութերի ամփոփումն ու խրվալուումը

Ամփոփման հասկացողութունը (54): Նյութերի քննադատութունը և թերութունների ուղղման միջոցները (55): Նյութերի խմբավորումը և նշումը (56): Ինտերվալները (59): Աղյուսակների կառուցվածքը և նրանց տեսակները (61): Ամփոփման տեխնիկան (68): Հաշվիչու մեքենայացումը (72):

ՉՈՐՐՈՐԴ ԳՆՈՒԽ

76-98

Վիճակագրական նյութերի հաշվային յեվ գիտական մեակումը

Հարաբերական մեծութուններ (77): Միջին մեծութուններ (80): Միջինների դուրս հանելու պայմաններն և նրանց հատկութունները (83): Վարիացիոն շարքի հասկացողութունը (83): Վարիացիոն շարքի ցրվածութունը (90): Վիճակագրական շարքերը (94):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՆՈՒԽ

99-105

Վիճակագրական սվյալների գծագրական ձեվակերպումը

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

105-111

Ֆրականութուն (106): Անձնական թերթիկ (107-108): Դիագրամներ (109-111):



ՍԻՄԱԼՆԵՐ ՅԵՎ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ՅԵՐԵՄ	ՏՈՂ	Տ Պ Վ Ա Ծ Ե	ՊԵՏՐ Ե ԼԻՆԻ
7	4 և 3 ներք.	յերևայթներ, մինչև իսկ վոչ	յերևայթներ վոչ
12	14 >	(հմպիրիկ)	(հմպիրիկ)
22	4 >	ժամկետների	ժամանակի
26	9 վերևից	միավորներ	յերևայթներ
31	7 >	(տիպիկ)	(հարադատ)
35	5 >	այս յերկու ձևին	այս բոլոր ձևերին
36	5 ներքևից	վերջին դեպքում	բոլոր դեպքերում
42	1 վերևից	բոլոր յերևայթները նրանց փոփոխականության	բոլոր փոփոխական յերևայթները նրանց արագ փոփոխականության
>	5 և 6 >	կատարվող փոփոխութունները կամ աննշան են կամ նույնիսկ նկատելի չեն	կատարվող փոփոխութուններն աննշան են
>	11 >	նույնն է	շատ քիչ են փոփոխվում
>	8 >	համեմատաբար կայուն յերևայթներ	համեմատաբար դանդաղ փոփոխվող յերևայթներ
63	1 վերևից	ցանցը դասավորված է	ցանցը դասավորված
66	3 >	աղյուսակների միացումից, այսինքն	աղյուսակների միացումից
80	13 >	այդ պահանջների կատարումը	այդ պահանջների կատարման
43	1 ներքևից	П. Колоколников. „Статистика“	П. Колокольников „Статистика“
56	5 և 6 >	խմբավորման	խմբավորման
62	աղյուսակ № 1	առ 1-ն հոկտեմբերի 1928	առ 1-ն հոկտեմբերի
71	13 ներքևից	AE է	AE է
92	11 վերևից	բառավուսի	բառակուսի
96	աղյուսակում	1926 թ. 1925 թ.	1925 թ. 1926 թ.

Գիրք 1 ռ. 80 Կ.

« Ազգային գրադարան



NL0185441

